



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Առյ՛ստ աշխատանքն արտոնագրված է «Վերոնջագրծական հասկայքներ  
նշ աննորային հրատարակչու 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

արտոնահանել և արտոնահանել կարող ես ցանկացած միջավայրում կամ կրկնել  
միջավայրում կամ օգտագործել անկախ կարող ես արտոնահանել կարող ես

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

# ՀՈՎՆԱԹԱՆ ՄԱՐԶ

ՅԵՐԵՎԱՆ





ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

891.99  
Բ-22

ՍՏՈՒԿՎԱԾ Է 1961 Ք

ՀՈՎՆԱԹԱՆ ՄԱՐԶ

564  
A  $\frac{N}{27060}$



Գրառեպիտա № 922բ.

Տիրած 2000.

Պետերբուրգի յերկրորդ տպարան Յերկանում — № 39.

Հուլիսի շոգ որերից մինն եր: Արևն այնպես եր այրում, ա-  
սես մտադիր եր կրակ թափելու արտերի ու այգիների վրա, ծը-  
ծելու գետերի ջրերը, վորպեսզի գոմեշները չկարողանան թաղվել  
ջրի մեջ և իրենց հաստ կաշին ազատել արևի խանձող շողերից:  
Ո՞վ գիտե, արևն ուրիշ ել ինչ մտադրություն ուներ, սակայն  
կարևորն այն է, վոր հուլիսի այդ շոգ որին, արևի տակ, ժամա-  
նակը կորել եր, հալվել, անհնար եր վորոշել ժամը, թեկուզ ժա-  
մացույցները դարկում եին Կողերոցքով տառապողի թույլ չերա-  
կի պես:

Յեվ չերբ գնացքը փոշոտ ճամբով գլորվող գոմշասայլի պես  
մոտեցավ կայարանին, հերթապահին թվաց, թե ցելսի մեջ թա-  
թախված գոմեշների մի չերամակ ահուելի փնչոցով կանգնեց կայա-  
րանի առաջ, փնչոցով, վոր նշանակում եր՝ սֆ, շոգ է:

Ինչքան դանդաղ ու չկամ, գնացքից Կուրս չեկան ուղևոր-  
ները, վորը քրտինքը սրբելով, վորը բաճկոնի կոճակները մինչև  
գոտին արձակած, մի խուրջին ուսին, թաշկինակով կրճքին հով  
անելով: Կայարանի ստվերում թիկն տված չերկու մուշա հենց  
այդտեղից ել ձայն տվին իջնող ողևորներին, թե ո՞վ իր ունի տա-  
նելու և չերբ պատասխան չեղավ, նորից գլուխները թեքեցին,  
թառամած արևածաղկի պես:

Վոչնչով հիշատակելի չեր դառնա հուլիսյան այդ շոգ որը,  
չեթե գնացքը, վորպես թանկագին բեռ, շատ զգուշությամբ այդ  
որը շրեբեր և Հովնաթան Մարշին: Յեվ չերբ նրա ամերիկյան դե-  
ղին կոշիկը դիպավ գետնին, կոշիկի տերը ժպտաց: Հավանորեն  
այդ ժպիտն ունեցավ և Կոլումբոսը՝ նոր ցամաքի վրա առաջին  
անգամ վոտք դնելիս:

Յեվ վոչ վոք չնկատեց, թե ինչպես նա դարձավ Արարատի

կողմը և, հասկանձում եք, ձեռքով սալամ ուղարկեց հեռու սարին: Սակայն նրա վողջուչներ միայն ձեռքի շարժումով չվերջացավ: Յեթե մոտիկ կանգնած մարդ լիներ, նա կլսեր, թե ինչպես Մարչըն ասաց. «Ո՛ր Արմենիա, չե՛ր կիր դրա խտավաչը»... Ասաց ու քրտինքի մի կաթիլ գլորվեց այս չե՛րկրի արևից խանձված հողին:

Ծովի մի ալիք, նուչնիակ այն ժամանակ, յերբ հանդարտ է ծովը, հանկարծ ափ ե նետում հեռու չե՛րկրից ծովն ընկած պլտուղի մի կճեպ, այդ ափին կճեպը մնում է այնքան, մինչև մի ուրիշ ալիք ե յելնում, ափը լիզում և կճեպը բաշին առած հետ տանում ուրիշ չեզր շարտելու, իսկ ծովը մնում է հանդարտ, անտարրեր:

Արևն ել հանդարտ մնաց իր հրե քալքի մեջ, յերբ գնացքն ուրիշ աշխարհից հուլիսյան մի շոգ որ ցամաք նետեց Հովնաթան Մարչին: Սակայն կառապանները նորեկի հանդեպ շունեցան նուչն անտարրերու թյունը: Նրանցից մի քանիսն աղմուկով իրար անցան և մինչդեռ Հովնաթան Մարչը լսում եր նրանց մայրենի բարբառը և զմայլվում, ամենից հանդուգնը նախ նրա իրերը դարսեց կառքում, ապա Հովնաթան Մարչին ել նստեցրեց և մտրակեց ձիերին:

Ճանապարհին, փոշու ամպի մեջ, մեկը հիացմունքով եր նայում շրջապատին և ծաղկանկար թաշկինակով բերանը ծածկած, շնչում հայրենի չե՛րկրի բույրը, վոր տվչալ դեպքում կառապանի քրտնած մեջքից եր չելնում, ճամբի ճահճուտից, աղբակույտից, իսկ մյուսն իր մտքում հաշվում եր՝ կրկնակի ուզի՞ թե՞ չեռակի, Ամերիկայից չեկած հարուստ պասաժիրից:

Թե ինչով վերջացավ կառապանի հաշիվը, դժվար է ստույգ ինչ գրել: Հյուրանոցի դռանը Հովնաթան Մարչն իջավ և յերբ պաշուսակները գետնին դարսեց, կառապանի բռան մեջ նա այնպիսի մի թղթաղբամ դրեց, վոր նա ձիերին մտրակեց, բռան մեջ սեղմեց դրամը և հրապարակն արագ անցնելով կորավ կողքի փողոցներում, առանց հետ նայելու: Քիչ եր մնացել, վոր մայթիցմայթ անցնող մի բարեպաշտ ծերունի ընկնի կտուքի տակ:

Հյուրանոցի սենյակում Հովնաթան Մարչը ճակատի քրտինքը սրբելուց հետո, գերադաս համարեց մի առ ժամանակ մեկնվել բազմոցի վրա: Այդ դիրքում շատ մտքեր խոնվեցին նրա գլը-

խում, շատ հուշգիր և այդ ամենն այն յերկրի շուրջը, վորի ջուրը գրաֆինի մեջ եր, սեղանի վրա, Հովնաթան Մարչից մի քայլ միայն հեռու, վորի արևը խաղում էր նրա պաշուսակների հետ:

Սկիզբն այնքան ել պարզ չե, բայց հայտնի չե, վոր տարիներ շարունակ ատենարանությունն անելուց, ընկերություններ և մարմիններ կազմելուց ու վերակազմելուց հետո, վորոնց բոլորի առանցքը յեղել ե հեռուներում ընկած դրախտավայր մի աշխարհ, նրա կարոտը յերգելուց, նրա մասին ճանելուց ու նրա անունով հանգանակություններ անելուց վերջ, մի որ Հովնաթան Մարչը գնում ե մեծատուն Անդրեաս Բալիքչյանի մոտ:

Այդ լինում ե որվա այն պահը, յերբ Բալիքչյանի հազար ու մի կերակուրներով լեցված ստամոքսը գերիշխող ե լինում նրա դատողության վրա և սիգարի կապույտ ծուխի ողակներին ի տես ամենից շատ փափկած ե լինում նրա սիրտը, — դուռը բացվում ե, դռան շեմքին յերևում ե Հովնաթան Մարչը: Անդրեաս Բալիքչյանը բավարար ե հատարում մի քանի կոճակներ կոճկել, դեպի վեր տնկված վոտքերին հորիզոնական դիրք տալ և աղամանդչա մատանիներով զարդարած փափուկ ձեռքը մեկնել Հովնաթան Մարչին:

Դուք կարծում եք՝ թե նա միայն սեղմում ե Բալիքչյանի մեկնած ձեռքը և նստում աթոռին: Վոչ, այդ որն արտասովոր մի դեպք ե կատարվում, հենց ձեռքը սեղմած ժամանակ: Հովնաթան Մարչը Բալիքչյանի առողջության մասին հարցնելուց հետո ըսկսում ե խոսել հին հայրենիքից, բարեգործությունից և վերջացնում ե հետևյալ խոսքերով.

— Ո՞վ մեծատուն, չիթե կուզես անունդ հավերժացնել, վոր դարեդար հիշվիս, աճապարե, քանի դեռ վողջ ես:

Այդ բառերը դարմանալի հեշտությամբ ազդում են Անդրեաս Բալիքչյանի սրտին և այն վայրկյանին, չերբ նա ուզում ե բերանը բաց անել յերկու խոսք ասելու, Մարչն ավելացնում ե.

— Մեր հին հայրենիքին մեջ ավան մը շինե ու թող ապրին փղշտացիք ու յեթովաացիք...

Բալիքչյանի ժպիտը բարեհաջող հանգամանք համարելով, Հովնաթան Մարչն աթոռն ավելի չե մոտեցրել նրան, սկսել ե պատմել այդ տիպի բարեգործության առավել կողմերի մասին: Ծոցից հանելով քառածալ թղթի մի կտոր, Մարչն սկսել ե կարդալ թե

այդ նոր ավանը կամ քաղաքը, այդ ապագա Նոր-Յեթովպիան քանի տուն պիտի ունենա, ամեն մի տուն պետք արան մը վեց մետր խորությամբ, չեկեղեցի մը, ուր պիտի հավաքվեն բնակիչները կիրակի որերը իրենց ընտանիքներով, լսելու հոգևոր հորդորներ և այլն:

Հովնաթան Մարչը հայտնել է, վոր Փղշտացոց Բարեսիրաց Մարմնի վորոշումն է այդ և վոր իրեն է հանձնարարված դիմելու մեծանուն հայրենակցի հայրենաբաղձ սրտին:

Յեվ սիգարի ծուխի մեջ, յերբ Բալիքչանի աչքին չերագի պես չերևացել է մանկությունը, հոր տան կտուրին՝ աղափատուն, ցորենի կարմիր արտերը և նման բարեմասնություններ, վորոնք չերանության ժպիտ են հարուցել նրա չաղ և մաքուր սափրած չերեսին, ժպիտն արտացոլել փափուկ մատներին հագցրած մատանիների աղամանդների մեջ, Հովնաթան Մարչը աթոռը համարյա Բալիքչանի բազմոցին միացնելով, շարունակել է այնպիսի մանրամասնություններ ասել, ինչպես որինակ՝ վարժապետին ընտրությունը:

Այս և այս կարգի խոսակցությունից հետո ինչ է իջնում Բալիքչանի սրտին, ամենևին հայտնի չէ, վորովհետև այդ սիրտը կակղում է, վորպես արևի տակ ընկած մեղրամոմ, նա իր համաձայնությունն է տալիս և առաջարկում Հովնաթան Մարչին ճանապարհվել հին հայրենիքը, այնտեղ վորոշել Նոր-Յեթովպիոտեղը, այդ չերկրում չեղած փղշտացիներին ու չեթովպացիներին հավաքելու, նոր քաղաքում տեղավորելու:

Այստեղ հարկավոր է հիշատակել մի չնչին դեպք: Նոր-Յեթովպիո մասին խոսելիս Հովնաթան Մարչը հայտնում է, վոր Փ. Բ. Մ. (Փղշտացոց Բարեսիրաց Մարմին) նիստում առաջարկ անողը չեղել է այրիացյալ տիկին Մարինե Քրաջյանը: Այս հանգամանքը կարևոր է հիշատակել, քանի վոր մինչ այդ Բալիքչանը բազմոցի վրա պառկած եր լսում Մարչին, իսկ այս խոսքերից հետո վեր է կենում, սենյակի գորգապատ հատակի վրա քայլում և մի քիչ խորհում: Հենց այդ բոպին ներս է մտնում Անդրեաս Բալիքչանի կինը և Մարչը նկատում է, թե ինչպես գորգավաճառ բարերարի թավ հոնքերը կախվում են: Մի պահ լռություն է տիրում, և կինը ստիպված է լինում հեռանալ, վորից հետո Անդրեաս Բալիքչանը նորից է պառկում և հրահանգներ տալիս Հով-

նաթան Մարչին, թե ինչպես պիտի մեկնել, ում պիտի տեսնել այն տեղ, ինչպիսի վայր պիտի ընտրել:

— Տեղը հովոտ չպիտի ըլլա... Խոտը շատ ըլլալու չե, վոր հայրենակիցները կրնան մաքրիներ ալ պահել: Կը կարծեմ թե աղվոր գորգեր կը գործվի հոն, չեթե բուրդը աղեկ ըլլա...

Բավական յերկար ժամանակ գրուցելուց հետո Հովնաթան Մարչը սեղմում է նրա ձեռքը և սենյակից դուրս թռչում, վազում իր բնակարանը, ուր սպասում էին Մարինե Քրաջյանը, Բարունակ Ճիթեչյանը և մյուսները: Յեվ այդ նույն գիշեր, ընկերական փառավոր հավաքույթին, Հովնաթան Մարչը դառնում է հերոս...

Ահա, ընթերցող, Անդրեաս Բալիքչյանի այդ համաձայնությունից է սկսվում այն յերկար ճանապարհորդությունը, վորվախճանը չեղավ հուլիսյան մի շոգ օր:

Յերբ նույն օրը Հովնաթան Մարչը պառկել էր բաղնիսի քարին և քիսաչի Հովակի բոբիկ վոտքերը սահում էին նրա մեջքի վրայով, քիսաչու գլխում խորհրդածություններ էին ծնում այն մասին, թե ինչ լավ պահած մարմին ունի մուշտարին, — Հովնաթան Մարչը քթի տակ մոմում էր հայրենաբաղձ չերգերից և գլխին բամբակի քուլաների պես թափվող սապոնի պղպջակների միջից նայում Հովակին, նրա շիւ աչքին, կախ ընկած, բարակ պոչով բեխերին:

— Փղշտացի՞ չե, — մտածում էր Մարչը նրա մասին: Ինչքան կուրախանա, չեթե հենց այդտեղ, հայտնի իր միտքը՝ Հովակին տեղավորել կառուցվելիք Նոր-Յեթովպիայում:

— Ուսկից էս բարեկամ, — հարցրեց Մարչը, չերբ Հովակը նրա մազերի մեջն էր խրել իր մատները և լվանում էր փղշտական գլուխը:

— Հող ունի՞ս, տուն-տեղ...

— Հողն ի՞նչ պիտի անեմ... Եսպես յոլա յենք գնում: Ունեմ հա, հող ունեմ: Քարոտ տեղ է մեր տեղը: Եստեղ լավ է, որական հացի փող ենք աշխատում...

Այս վերջին միտքը Հովակը վորոշ նկատառումով ասաց, նորեկ մուշտարու առատաձեռնության դռները բանալու հուսով: Յեվ յերբ դուլլով լի սաօը ջուր թափեց նրա գլխին, Հո-

վակը չնկատեց, վոր իր բառերն արդեն պաղություն եին թափել Մարչի տաք հայրենասիրության վրա:

Ինչպէս: Մարդ հող չուզենա՞, չկամենա կապվել հայրենիքի հետ, իր քրտինքը չթափի՞ պապերի կոխած տեղում, չքերի՞ այս չքնաղ յերկրի կուրծքը և նրա ողում չհնչեցնի՞ գյուղական հորովել: Ուրեմն փղշտացի չե ք ի ս ա չ ի Հովակը և լավ ե, վոր ինքը նրան չհայտնեց Նոր-Յեթովպիո մասին:

Յերբ հյուրանոցի մահճակալի վրա պառկած, Հովնաթան Մարչը լիաթոք շնչում եր բաց պատուհանից ներս մտնող իրիկվա հովը և հովի հետ ել փողոցից յեկող ձայները լսում, — նա ապրում եր հոգու խաղաղ մի վիճակ, վորպիսին մարդ ունենում ե, չերբ մեջքի վրա պառկած, կտրան վրա, յերկնքի աստղերն ե դիտում:

Ինչքան հեռու չեր այն յերկիրը, վորտեղից նա ճանապարհավեց: Մարչը մտքով մի անգամ ել չեկած ճանապարհը կտրեց և այդ անելուց հետո ինքն իր աչքում բարձրացավ, դարձավ հերոս: Վերադարձին ինչեր պիտի պատմի և ինչ ճառեր ասի, ճառեր, վոր արցունքներ հոսեցնելուց բացի, դ ո լ լ ա Ր ն ե Ր պիտի հավաքեն և ճամբու դնեն այս յերկիրը՝ շենացնելու, ց ե դ ի ն հ ա մ ա Ր ո Ր Ր ա ն մ ը կ ե Ր տ ե լ ու ...

Մի անգամ ել վերհիշեց Բալլիքյանին, սիգարի կապույտ ծուխի մեջ, իր ճառը, ճանապարհավելու վերջին որերը, ընկերական հավաքույթը, վորի հերոսն եր, անհայտ մի յերկիր ուսումնասիրելու գնացող խիզախ հետախույզ: Ապա չերգեր, պար, տիկի՛ններ, վորոնցից ամեն մեկն այդ գիշեր աշխատում եր ավելի շատ խոսել Մարչի հետ, ժպիտներ տալ, ասես ժպիտները ճամբի պաշարի գաթաներ եին:

Ամենից շատ սիրալիր եր տիկին Մարինեն:

Այստեղ արդեն, ընթերցող, Մարչը վերհիշեց այնպիսի դեպքեր, վոր կապ չունենալով նրա առաքելության հետ, կազմում են հոգու այն թանկագին անկյունը, վորի ամեն մի իրի ինչ լինելը միայն տիրոջն ե հայտնի: Այդ վերհիշումի հետևանքն չեղավ այն, վոր Հովնաթան Մարչը մի կողքին դարձավ, ձեռքերը ծալեց այնպես, ասես ձեռքով գրկել եր մի գլուխ: Բայց չես խոստացա չը պատմել այդ մասին, քանի վոր այդ գլուխն ամենից թանգ իրն եր նրա հոգու անկյունում:

Յերեկոյան նրա մոտ չեկավ կարճլիկ մի մարդ, վորին փո-

դոցում տեսնելիս շատերը կարծում եին թե քաղաքի ամենից դրադված մարդն է, վորի վրա չե ծանրացած անթիվ հոգս՝ հիվանդներ բժշկել, չերկաթուղիներ անցկացնել, ձիարուծարան հիմնել և այլն և այլն:

— Բժիշկ Յերանոս:

— Շատ ուրախ եմ...

Յեվ բժիշկը հեվ ի հեվ սկսեց պատմել մի ուրիշ տեղ շտապող մարդու պես արագ-արագ խոսելով, վոր ինքը վաղուց է լրսել նրա գալուստի մասին, անհանգստանում եր թե՛ չլինի՞ ճանապարհին մի բան և պատահել:

— Լամվ յեկաք, չնեղացրի՞ն...

— Ո, վո՛չ, փառավոր: Յես հիացած եմ...

— Գիտե՞ք, այստեղ շատ բան կտեսնեք...

— Անշուշտ, հարկավ:

Մի քիչ հետո Մարչը բժիշկ Յերանոսին պատմում եր նոր-Յեթովպիո մասին, թե ի՞նչ սքանչելի քաղաք պիտի լինի, ովքեր պիտի ապրեն և թե մեծաքանակ գումար և հատկացված այդ գործի համար: Բժիշկ Յերանոսը զմայլանքով եր լսում: Ահա մեծ սենսացիա: Իսկույն հարկավոր է դուրս թռնել, ասել սրան նրան, լուրը տարածել: Յեվ բժիշկը թոթվեց Մարչի ձեռքը, խոստացավ հաճախ տեսնվել, ուրիշներին ել բերել:

— Շատ պատվական և ազնիվ մարդիկ կան, — ասաց բժիշկը և դուրս գնաց, — վո՛չ, գլորվեց վորպես Ֆուտբոլի գնդակ, վոր հարվածից դիպչում է մերթ այս քարին, մերթ այն պատին, նորից հետ դառնում ու նորից դիպչում:

Իսկ Հովնաթան Մարչը գոհ առաջին ծանոթութունից մեկնվեց մահճակալի վրա, առաջին հանդիպումը խմբագրելով այսպես.

— Հոս ալ պատվական ազգայիններ կան...

Այդ գիշեր մի սոսկալի արշավանք սկսվեց Հովնաթան Մարչի գեմ: Ճամբից հոգնել եր, քիսաչի Հովակի բորիկ վտաքերն ել մաժել եին նրա չերակները: Յեվ քունը չուշացավ վոչ միայն նրա կոպերն իջեցնելու, այլ և մարմնի մասերը այս ու այն կողմ ազատ ու հանգիստ փոփոխելու:

Հուլիսյան այդ կես գիշերին, յերբ թվում եր, թե բացել են անթիվ անհամար կրի և գաճի գործարանների դռներ ու թեժ

վառարաններից տաք ող են մղում քաղաքի փողոցները, չեք բնակիցիոնները մինչև ծնկերը վեր քաշած վոտներն առվի ջրի մեջ եր կոխել և ննջում եր, հրացանի կոթից բռնած, յերբ շոգից անքուն, ինչ վոր մարդիկ լուսնոտների պես թափառում եին փողոցներում և մի գով տեղ փնտռում նստելու և նստած ննջելու, յերբ բաց պատուհանի առաջ քնած ամուսնական զույգը թարմ ող շնչելու համար գլուխն եր կախել մայթի վրա, խոռացնում եր և շնչում,—տոթ այդ գիշերին Հովնաթան Մարշը կոշիկի չերկաթ կրունկով, հին հաչրենիքում, հյուրանոցի պաստառների վրա ջարդում եր մլակներին, վորոնց անթիվ շարքերը, քաղցած վոհմակի պես, մութից ոգտվելով գրոհ եին տվել մահճակալի վրա մուշ-մուշ քնած մաքուր մարմնի բարակ մաշկը ծակելու և ծծելու Հովնաթան Մարշի փղշտական արչունը:

Ամեն անգամ, յերբ չերկաթ կրունկի տակ ճլփոցով դիապաստ եր լինում մլակը, գարշահոտ տարածում, Հովնաթան Մարշը ժպտում եր, բարիք կատարող մարդու պես:

— Ահա, կերար,—ու մի հարված ել:

— Աչսպես ել հոթ ել:—Ու մի զարկ ել և գարշահոտ, արչունոտ պաստառ:

Մերթ ընդ մերթ վոտքերն եր բարձրացնում, ձեռքով խրփում մարմնի զոնազան մասերին, վորովհետև այն ժամանակ, յերբ Մարշն աչքերը ման եր ածում պաստառի վրա կամ վերմակն եր աջ ու ձախ դարձնում և հարվածում, մի ուրիշը վոտքնի վեր բարձրանում եր և ուզած տեղը ծակում, ծծում, մինչև նրա ձեռքը հասներ:

Այդ աշխատանքն սկզբում դյուրեկան թվաց: Ահա վորսորդը, վոր չեղեգնուտում կրակում և անընդհատ և ամեն մի կրակոցից վայրի մի խոզ թավազլոր ե լինում: Հետո քունը հաղթեց, գլուխը ծանրացավ... Իսկ մլակները հա գալիս եին: Յեվ այդ պահին նրա բեզարած գլխում ծնվեցին մտքեր, վոր դառնահամ եին, մասամբ հուսահատ, մասամբ զղջումի շեշտով:

— Ինչո՞ւ չեկար այս յերկիրը... Կար փափուկ անկողին, մաքուր սենյակ և ուրիշ պարագաներ: Կար և գլխի մեջ մի կակուղ դանգված, սրտի մեջ կարոտ դեպի հեռու չերկիրը: Յեվ այդ ամենը վորպես կապույտ մշուշ, անհաս, ինչպես ամպն Արարատի գլխին, վորպես առասպել, Նոյան տապանի պատմութիւնը:

Իսկ այժմ... կեղտոտ պաստառներ, մլակներ, տոթ, անքուն գիշեր...

Հովնաթան Մարչի աչքն ընկավ պատից կախած հյուրանոցի կանոններին: Մայրենի լեզվով եր գրած, Մեսրոպ Մաշտոցի հնարած տառերով: Այդ կանոններին ի տես նրա սիրտը թունդ առավ և չերբ ձեռքը մոտեցրեց, տախտակը բարձրացրեց, մլակների մի հոծ բազմութուն, խրտնած վոչխարի հոտի պես, շաղ չեկավ:

— Ինչո՞ւ չեկար այս չերկիրը...

Նրա սրտին հովութուն չտվավ և գրաֆիկնի պաղ ջուրը, հայրենիքի ջուրը, վորի մասին հավաքույթի այն գիշերը, վոսկեգույն խոպոպներով տիկինը այնքան չքնաղ ժպտով, բարակ շրթունքներն իրարից բաժանելով, ասել եր.

— Պարոն Մարչ, ինձի կը հիշեք, յերբ առաջին անգամ հայրենիքի ջուրը խմեք...

Յեթե մինչև արևի բարձրանալը լուսաբացի գովութունը չլիներ, Հովնաթան Մարչի գեմքին մյուս որը նայողը պիտի կարծեր, թե նա ուրիշ ծանր հոգսերի հետ ունի և ստամոքսի խանգարում, կերածը չի մարսում:

Տղան, ինչո՞ւ կարգապահ չեղար՝ և Հովնաթան Մարչին իսկուչն ներս շթողիր, չերբ նա դանդաղ քայլերով և ամենայն վեհությամբ մտտեցավ այն դռան, վորի վրա գրված եր պետի առանձնասենյակ և վորի կողքին կանգնել եիր, ձեռքդ դռան պղնձե կթից բռնած: Յեվ թութակի նման կրկնեցիր.

— Առանց զեկուցման չի կարելի, ընկեր:

Հովնաթան Մարչը ցնցվեց, մի քիչ հետ քաշվեց և չերբ այցետոմսը մեկնեց, դու զիրկապ անելով կարդացիր.

— Փղշտացոց Բարեսիրաց Մարմնի լիազոր, — նորից ուսերդ թոթվեցիր, կրկնելով նուչն անիմաստ բառերը հերթի մասին:

Նախասենյակում խոնավել եին գյուղացիք: Վոմանք չոքել եին գետնին, գրուցում եին իրար հետ, վոմանք ել մուտքից քիչ հետու կանգնած հերթի եին սպասում: Հայ, թուրք, չեզիզի ու բոլոր բարբառները, բոլոր գավառների բուչրը, տեսակ-տեսակ շորեր և շորերից տարբեր հոտ՝ գոմի, հողի, աղբի, քլրտիներ: Հարկավոր եր, վոր Հովնաթան Մարչը նախասենյակում շնչի այդ ծանր հոտը և հաճախ մետաքսե թաշկինակով սրբի ճակատի քրտինքը, վորի ամեն մի կաթիլը գլորվում եր փղշտական մի քաղաք հիմնելու ցամաք ու աղքատ Արմենիայում:

Յերբ Հովնաթան Մարչը պատուհանի առաջ կանգնած փողոցի անց ու դարձին եր նայում և պատին սեղմվում, հենց վոր նախասենյակում սպասողներից մեկն ու մեկը անցնում եր կողքով ու քիչ եր մնում վոտքը կոխեր, — նրա գեմքին չերեում եր այնպիսի մի արտահայտութչուն, վորի մասին դեռ դարեր առաջ այսպես ե գրված Հովհաննու ավետարանում.

— Յուրան չեկն և չուրքն զնա վոչ ընկալան...

— Խնդրեմ, ընկեր, — ասաց տղան և դուռը լայն բաց արեց: Հովնաթան Մարչը կայծակի արագությամբ մտքերը ժողովեց,

դասավորեց վորպես խաղաթուղթ և դոնից ներս մտնելիս պատ-  
րաստվեց կրկնելու այն, ինչ յեղավ Անդրեաս Բալիքչյանի սեն-  
յակում, յերբ պետը հեռախոսի խողովակն ականջին մոտեցնե-  
լով, աջ ձեռքով Հովնաթան Մարշին առաջարկեց նստել ազատ  
աթոռին:

Մոտ հինգ րոպե, մի ուրիշը, վոր չեր սպասել նախասենյա-  
կում, հեռախոսով այնպիսի մի նշույթի մասին խոսեց, վոր պե-  
տական խոշոր գաղտնիք թվաց Հովնաթան Մարշին: Վորովհետև  
չերեխան ել կհասկանա, թե ինչ է նշանակում:

— Ասում ես սահմանի մոտ են...

— Այո, միջոցներ ունենք: Կարող ենք մի խումբ ուղար-  
կել...

— Յեղեգնուածները կխանգարեն: Թող վառեն: Բոլոր մի-  
ջոցները կտանք:

— Այո, այո:

— Ութ հազարի չափ: Իհարկե վտանգը մեծ է: Գյուղերից  
սայլեր կհավաքենք: Յեթե կարիք լինի, կարող ենք բնակիչնե-  
րին դուրս հանել...

— Լավ, լավ: Հենց այս գիշեր մերոնք դուրս կգան...

Դուք կարծում եք, թե այս ամբողջ խոսակցութչան ժամա-  
նակ Հովնաթան Մարշը չեզիպտական մուծիպի քարացած դեմք  
ուներ և չէր հուզվում, աթոռի վրա տեղը չէր շտկում, թուքը  
սովորականի պես եր կուլ տալիս:

Քով և մի լիցի: Այն ժամանակ, յերբ հեռախոսի խողովակը  
լսեց սահմանի մոտ են բառերը, Հովնաթան Մարշը մեջքը  
ձգեց ճիշտ այնպես, ինչպես զինվորներն են անում, յերբ զենք  
ու զրահի մեջ կորած, մարդադաշտում անցնում են հրամանատա-  
րի կողքով: Ինչպես ասում են, Հովնաթան Մարշի լեղին ճաքեց,  
չերբ ամենայն անտարբերութչամբ պետը մի ուրիշ աներևույթ  
մարդու հայտարարեց, վոր մերոնք գիշերս դուրս կգան...

Զորաժողով, սայլերի բռնագրավում, ի գեն, ի սուր, հայ-  
րենիքը վտանգված է... Յեվ այդ՝ հուլիսյան շոգ որին, չերբ ո-  
գում ամեն ինչի հոտ կար, բացի վառողի: Այո, այո, անպարտե-  
լի չեն Արմենիո տերերը, չեթե նրանք պատերազմի հրամանն  
արձակում են այդքան անտարբեր, նույն իսկ քնատ աչքերով:

Այս ամենը կատարվեց հինգ րոպեում: Վեցերորդ րոպե-

յին պետը աչքերը դարձրեց Հովնաթան Մարչի հարթուկած ըզգեստին, մաքուր ածիլած չերեսին և այդ չերեսի քնքուշ, բարակ մորթուն:

— Ինչո՞ւն է բանը, — հարցրեց նա և չերբ պետը աչքերն երտրորում, Հովնաթան Մարչը մի քիչ մոտեցավ նրա սեղանին ու շարեց բավական սահուն մտքեր:

— Հեռուներեն յեկած եմ: Կփափազիմ քաղաք մը հիմնել, աշխարհիս մեջ ցան ու ցիր յեղած փղշտացիներով բնակեցնելու: Հոս տեղ ալ կը փնտռեմ փղշտացիներ, յեթովպացիներ: Անոնք հայրենակիցներ են...

— Լավ, բարի...

— Հարկավ, առանց Ձերին բարչացակամության այս գործը գլուխ չի գար: Հուսով եմ, վոր Դուք ալ տոգորված սիրով դեպի այս յերկիրը, մեզի հողամաս մը կը տրամադրեք Նոր-Յեթովպիո...

— Լավ, լավ... — Յեվ այդ լավերը զուգորդում եին կապուղ հորանջոցների:

— Այո, այսպես: Մեր ուզած տեղը յերկրի սրտին մեջն ըլլալու յե: Նախընտրելի յե ազգային վայր մը, պատմական և այլն: Մեր հայրենակիցները գորգագործությամբ պիտի պարապին: Գիտեք վոր, աշխարհիս մեջ մերայինք մեկ հատիկ են, մըրցակից չունին: Հոչակավոր հնդահաններ են, աֆիոն, ծխախոտ և նման անվանի գործեր ունին ամենքն ալ, դրամ շահելու կողմանե: Ինքը Բալիքյանն ալ այդպես պղտիկ գործ մը նախընտրեց, յետքը դարձավ մեծանուն ազգասեր: Հիմա անոր կողմեն և վոր կբանակցիմ, նաև Փղշտացոց Բա...

— Լավ: Քանի դեսյատին հող ե պետք, ջրովի, թե՞ անջրդի:

— Մեզի առաջին հեղ սանկ հինգ հարչուր հեկտար կբավե: Վերջը, յերբ մեծնանք, ամեն կողմերե հոս հավաքվին փղշտացիք, յեթովպացիք, հոս ծաղկչալ դրախտ մը պիտի շինվի: Ամենքն ալ այդ փափագով կը տառապին, հայրենիքի հողին վրա մեռ...

— Դուք հիմա՞ յեք հող ուզում, — ասաց պետը պահարանից քարտեզը հանելով: Տղան դուռը կիսաբաց եր անում, աչքի տակով նայում: Այդ ընդունված պայմանական նշանն եր այն մասին, թե նախասենյակը հուղվում ե:

— Ահա ձեզ ազատ հող: Արաքս կայարանի մոտ, Ղամըշ-

լուի շրջան և Արագդայան: Այս չերեք տեղից բացի ազատ հող չունենք:

Հովնաթան Մարշը նաչեց քարտեզին: Սա չե Արմենիան, տեղ-տեղ կանաչ ոազիաներ, այգեշատ ավաններ, ապա ցամաք տափարակ, դեմի ապառաժներ և լեռներ՝ անտառներով և առանց անտառի:

Արաքս... Դաշնամուրի մի ակկորդ կարող է ձեզ հիշեցնել անցյալի մի պատմություն: Ինք կարող եք փափկանալ, ինչպես կրակին մոտեցրած մոմ, գուցե և հալվել, այսինքն արտասովել և այդ ամենը դաշնամուրի մի ակկորդ լսելուց հետո: Արաքս... Հովնաթան Մարշ, քաջլամ ու լոր գնում եմ և ապա հին հին դարեր, ինձի կհիշեք, պարոն Հովնաթան, գանգուր խոպոպներով բարեգործական մի տիկին, վորի համար այս հեռավոր չերկիրը, Փոքր Ասիայի խորքում ընկած Արմենիան, դյուրեկան միրաժ է, մանուկ որերի չերազ:

Պետը քարտեզը կոլուեց և չերը Մարշի աչքերից ծածկվեց քաթանի վրա գծած վերջին հորիզոնական գիծը, հայրենասիրական սեանսը վերջացավ: Մնաց մինչև փողոց հասնելը մի քիչ ել ապրելու նկարի գեղեցկութամբ, վորովհետև փողոցի ժխորը պիտի հողս ցնդեցներ այդ միրաժը:

— Գեղեցիկ: Յես կերթամ, կպտտիմ այդ կողմերը, — ասաց Մարշը ընդունելով պետի մեկնած ձեռքը, — վտանգավոր չե՞ն, Չեզմե մանդատ առնելու հարկ չկա՞, — հարցրեց նա: Հասկանալի չե, վոր նա վերհիշեց մերոնք այս գիշեր դուրս կգան...

— Վոչ մի թուղթ: Նշանակեցեք անունները, տեղում ծանոթացեք, մենք համաձայն ենք: Կհատկացնենք հինգ հարյուր հեկտար:

Յեվ չերը Հովնաթան Մարշը մոտեցել էր այն շեմքին, վորից նախասենյակ մտնել հնարավոր է և առանց գեկուցման, — հանկարծ հետ դարձավ:

— Ինձի մեծ պատիվ ըրած պիտի ըլլաք, չեթե հուշատետրիս մեջ Ձեր անունը ստորագրեք: Հավետ անմոռաց հիշատակ մը մեր առաջին հանդիպումի:

Պետի ժպիտը հաչերենով գրելու համար հարկավոր է գլտնել այնպիսի մի բան, վոր նշանակի և՛ դարմանք, և՛ ծիծաղ և՛ արհամարանք: Բայց և այնպես ստորագրեց: Մանդուղքներից

իջնելիս Հովնաթան Մարչը հուշատետրի այդ սպիտակ թերթը տանում եր վորպես մասունք:

... Հեռախոսի զանգը այնպես զիւ քրքջաց, յերբ Մարչը փակեց դուռը:

Այդ ուրը № 27 փոստարկղն ընդունեց զարմանալի մի նամակ:

«Սիրելի հայրենակիցներ, կպտտին զժնդակ լուրեր: Սահմանի մոտ ինչ վոր չեռ ու զեռ կա: Այս գիշեր ութ հազարնոց բանակ մը պիտի անցնի Արաքսը: Չեմ կրնար չերկար գրել, ձեռքըս կդողա: Վճրն ե այս յերկրին ներքին իմաստը, հողին ուշտը: Ով ալ տիրելու ըլլա չքնաղ Արմենիո, կոնակը Արարատին պիտի կրթնեցնե: Տեղեկությունները ստույգ են, բայց գաղտնի կպահվի: Ի՞նչ պետք կա ավելորդ թմբկահարության: Ա՛հ, կսիրեմ, կսիրեմ այս վերին գաղտնիքը: Գործս հաջող կերթա: Վաղը նոր-Յեթովպիո տեղը տեսնելու պիտի չերթամ: Ինձի կըսեն, թե այդ հողին վրա արքայական դամբարաններ կան: Ո՛ր, ցնձա, յերկիր մայրենի: Փղշտացի դեռ չեմ տեսած, լուր ունիմ, վոր Ալազյազի կողմերը քանի մը չեթովպացի կա: Առայժմ այսչափ: Հոս տաք ե, սակայն կառավարության դիրքը անսասան կերևա»...

Յեթե ստորագրությունը ցույց տալին Բուենոս-Այրեսում ապրող խոպոպիկներով տիկնոջ, անպատճառ ուրախությունից ձեռքերն իրար պիտի զարկեր և կանչեր.

— Հովնաթան Մարչ...

Հենց այդ նույն ուրը, յերբ հովը մի քիչ կոտրեց ցերեկվա շոգը, ութ հոպի, նավթի բիդոններով, չեղեգնյա չերկար ցողերով, դեղորայքի արկղներով քաղաքից մեկնեցին սահմանամերձ մի վայր, վորի յեղեգնուաների մեջ մորեխ եր չերևացել և սպառնում եր հարևան գյուղերի ութ հազար դեսյատին արտերին ու բամբակին...

Ավտոմոբիլը սլանում եր առավել արագութեամբ: Շոֆֆերի աչքը սլաքին եր և ժապավենին, վոր դառնում եր և ցուցց տալիս՝ 75-80-75: Թվում եր, թե մեքենան անիվներ չունի, սլանում ե վոչ թե խճուղով, այլ չեթերում ե ճախրում: Այն, այդպես թվում եր, և տեսնողը գուցե կարծեր, թե ավտոմոբիլն արագ քշելով կարելի չե դարձնել այերոպլան, կամ վերհիշեր Յեղյա մարգարեի քառաձի կառքի առասպելը, չեթե մեքենան փոշու ամպ չբարձրացներ և այդ ամպը չնստեր խճուղով անց ու դարձ անող սայլերի, սելվորների և գոմեշների վրա:

Զորութեունը մեքենայի մեջ չեր, այլ այն մարդու հոգում, վոր կաշվի բարձի վրա նստած, աչքերը տափարակի անհունութեան մեջ սուզած, մտքով հեռուն եր թռչում, տասնյակ դարեր հետ և պատմութեան փոշեպատ խորքերից հանում դեմքեր, վորոնց ստույգ լինելու մասին միայն ծերունի մատենագիրն ե վկայել:

Մեքենայի թափը արագ բռնկվող բենզինից չեր, այլ Հովնաթան Մարշի հրդեհվող հայրենասիրութեունից: Սլանում եր մեքենան, քամուց ֆոֆոում եր նրա լայն վերնազգեստը: Կարծես մարդ չեր նստած, այլ թևավոր վոզի, վոր հուլիսյան շոգին հայտնվել եր անամպ յերկնքի խորքից, փոշի բարձրացրել ու անհետանալու չեր փոշու ամպի մեջ:

— Ինչ չաման կքշո՞ւ անիրավը... Տեսնես ո՞վ ա...

— Ամերիկացու կլմաներ:

Այսպես եին խոսում սելվորները, փոշու ամպի մեջ փորձելով վորոշել, թե ո՞ւր կորավ մեքենան:

Ուրիշ ել ինչ կարող եին խոսել մարդիկ, վորոնց ուղեղը արևի տակ կակղել եր և վորոնց լեզուն ցեխախառն թուքի մեջ դառնում եր այնքան ծուլորեն, վորքան գոմեշը տիղմի մեջ: Հարկ



չկա վիրավորելու Հովնաթան Մարչի պայծառ հիշատակը (ընթերցողը հետո կտեսնի, վոր հիրավի, խոսքը միայն հիշատակի մասին կարող եւ լինել) և գրել, վոր գյուղացիներից մեկը, վորի գոմեշները խրտնեցին և սայլը թեքեցին այնպես, ինչպես նախ և թեքվում ճեղքված ստանալիս, վոր գյուղացիներից մեկը ծանր, շատ ծանր հիշոցք շարտեց, ուղղված և՛ Մարչին և՛ նրա... Ո՛ր վուկեգանգուր խոսպոպիկներով աիկին, չեթե Բուենոս-Այրեսում դու լսեիր...

Հովնաթան Մարչը գնում եր Նոր-Յեթովալիո տեղը վորոշելու, տեսնելու այն տափարակը, քարոտ և անջուր յերկիրը, վորի մասին բանաստեղծները չերգել են վորպես չքնաղ դրախտավայր և ուր Փղշտացոց Բարեսիրաց Մարմի մոզական ուժով պիտի հարուժվուն առնի մի մեռած քաղաք, մի Նոր-Յեթովալիա, վոչ, ահագին մի աշխարհ:

Արարատյան դաշտը ամենևին չքնաղ գեղեցկուհի չեր հուլիսյան այդ շոգ որին, թեկուզ այդպես եր չերևում Հովնաթան Մարչին՝ ակնոցների հաստ ապակու չետևից: Այդ մի պառավ կին եր, ստինքները՝ չորացած տրեխներ, վորի ճաքճքած պոռշները միայն ջուր եին ուղում, խոստանալով այդ դեպքում միայն չերևան հանել իր խորքում թաղված ուժը:

Հովնաթան Մարչը ուշք չեր դարձնում մեքենայի ցնցումներին: Նա չեր ջոկում բամբակի դաշտերը ցորենի դեղնած արտերից, մեքենան գյուղերի միջով սլանալիս նրան այնպես եր թվում, թե հասարակ հողաբլուրներ են և վոչ բնակավայր, հնուց մնացած թմբեր, վորոնց տակ, հասկանում եք, թաղված ե այս յերկրի արքայական անցյալը, չերբ իշխանները Արարատյան շամբուտներում վորսի եին գուրս գալիս, վարազներին նիզակահար անում և Արաքսի կղզիների վրա սարքում խրախճանք:

Քշիր, շոֆֆեր, քշիր... Ինչքան ել արագ սլանաս, պասաժիրի դմաքի թափին չպիտի հասնես, թեկուզ գյուղերն ել տրորես անիվների տակ: Քշիր և թող իրականը Հովնաթան Մարչի աչքին մի պահ չերևա, թող Արմենիան դառնա ամպերից կախ ընկած դրախտ, վորի բնիկները զտարչուն են, թորգոմյան ցեղի անաղարտ հոգով, կատարյալ և իսկատիպ փղշտացի, յեթովապացի և վոչ մոլլա-բայազետցի մի ջակ կամ աղքատ:

Հեղափոխություն, սոցիալիզմ... Քշիր, շոֆֆեր: Հովնաթան

Մարչը այդ համարում է անցողիկ յերևույթ, նո՛ւ, վորպես պատմութեան մի գրիպ, մարմնի ժամանակավոր խանգարում, վորից հետո մոխիրների տակից պիտի հարուժուեն առնեն բոլոր մեռած քաղաքները, քանի յերկրագնդի անկյուններում Հովնաթան Մարչի պես մարդիկ Արմենիա ասելիս աչքերից արցունքներ են գլորում և գրկում այդ գաղափարը, վորպես թունդ հարբեցողը վերջին շիշ ողին:

Մեքենան կանգնեց: Շոֆֆերը քրտինքը սրբելով հետ նայեց ու պահ մի դարմացավ: Հովնաթան Մարչը քնել էր փափուկ բարձերի վրա և բնագդարար շարունակում էր որորալ, վորպես ովկիանոսի շոգենավ՝ մարմանդ կոհակների վրա: Միայն մարմինը չէր որորվում, մտքերը ճոճանակի պես տար ու բեր էին լինում, թեկուզ միտքն էլ աշխատում էր, վորպես խանգարված ժամացույց:

Շչակը վռոնաց: Հովնաթան Մարչը ցնցվեց, աչքերը տրորեց: Ա՛խ, չեթե շամբուտներ լինեին և իշխանական վարազը մոնչար շչակի պես: Շուրջն ամայի տափարակ էր, տեղ-տեղ քարակույտեր:

Ահա ինքը՝ փղշտացոյ լիազորը վոտք է կոխում ապագա քաղաքի սահմանը և քայլում է վորպես հաղթանակից վերադարձող զորավար: Ո՛ւր են կամարները, ինչո՞ւ շեփորները չեն ավետում քնած քաղաքին այն մասին, թե...

Շոֆֆերը մեքենայի գլուխը հետ դարձրեց և վորովհետև Հովնաթան Մարչի պատվերը կար մի հով տեղ սպասելու, քշեց դեպի դեմը չերևացող ծառաստանը: Հովնաթան Մարչը նայեց հեռացող մեքենային, ապա չերեսը դարձրեց տափարակի կողմը:

Անշուշտ, չերբ Պետրոս Մեծը ճահճուտների մեջ կանգնած, աչքը ծովախորշին, իր խոսքն էր ասում, անշուշտ ոուսական արքայի դեմքին էլ նույն արտահայտութունը կար, ինչ վոր Հովնաթան Մարչի դեմքին, վորի քնքույշ մորթը արևից մի քիչ խանձվել էր: Ծիշտ է, տարբերութուն կար, ինչպես որինակ այն-վոր ոուսական արքան չերկարավիզ կոշիկներով էր, իսկ Մարչը գեղին բոտերով, կամ այն, վոր Մարչը յերկրորդ անգամ էր պատմութունը կրկնում (իսկ այդ հայտնի ֆարս է), — բայց և այնպես նմանութունն ակներև էր:

Հովնաթան Մարչը շատ քայլեց ամայի տափարակում: Հին,

հայրենիքի փոշին նստեց նրա գեղին կոշիկներին: Մարչը քայլում էր, նայում աջ ու ձախ, մտքում հաշիվներ անում, տների, ագարակների հաշիվներ, պարտեզներ տնկում, փողոցներ անցկացնում, և ընդարձակ հրապարակ, կենտրոնում հսկա մի շինք, ամենաքիչը իններորդ դարու վոճով կառուցած, փղշտական հանդեսների ու յեթովպական հավաքույթների համար: Նա տեսնում էր այդ քաղաքը և բայլում էր այնպես, ասես ասֆալտած են մայթերը:

Մի ոճ, մաշկն սպիտակ բծերով մի ոճ, քարի վրա տաքանում էր: Վոտնաձայնից գլուխը վեր հանեց և, հավատճում էք, գլուխն այնպես տնկեց, ասես ոճային իր լեզվով հարց էր տալիս նորեկին՝ ո՞վ ես, ի՞նչ ես ուզում ամայի այս դաշտում: Մարչը շտեսավ ոճին: Փուցե դրանից նեղացած ոճը բարվոք համարեց շուլալվել քարի տակ և շարունակել ոճային չուր մտքերը ակնոցավոր նորեկի մասին:

Բայց զայրացածը արևն էր: Ասես ուրիշ յերկիրներից իր շողերը հետ էր կանչել, վորպեսզի այդ ժամին խիտ շարքերով շիկացնի քարերը, մինչև կարիճներն ել արևահար լինեն և քարերը ձաքեն: Սակայն Մարչը չէր զգում վոչ արև, վոչ լուսին: Յեվ այդ ավելի յեր զայրացնում արևին: Ո՞վ էր նա, գուցե վաղուց մեռած մի արքա, մի Արշակ թագավոր կամ Փազիկ զորավար, վոր ամերիկյան տուրիստի տարազ հագած՝ հարուժյուն էր առել և շոգ ցերեկին անմարդարնակ դաշտում իր պղպակի հեռքերն էր վորոնում և ստուգում, թե ի՞նչպես է հիշում իրեն սերունդների սերունդը...

Մի հավաքույթ, բաժակաճառեր, կենաց խոսքեր, ստարազգի հյուրեր և հայրենական յերգեր, վորոնցից ստարազգի հյուրերի լսողությունը սակավ էր շոյվում, սակայն ժպտում էին, վայելուչ մնալու համար: Հովնաթան Մարչը խոսում էր.— Ոտար հորիզոն... Այնտեղ, հայրենի հողի վրա, ուր ջուրը մայրենի բարբառով կը կարկաչե... Մարչը խոսում էր վոսկերերան լեզվով և Մարչի լեզվով խոսում էին բոլոր մատենագիրները, զորավարները, ժպտում էին վոսկեգանգուր խոպոպիկները: Մեկի կուրծքը հե ի հե բարձրանում էր, յերբ Մարչը հնչեցնում էր իր ձայնը, վորպես բամբիս՝ բամբ վորոտանե

և իջնում, չերբ նրա ձայնը դառնում էր առավոտյան զեփյուռ, ու շոյում կտավատի կապույտ ծաղիկները:

Հոփնաթան Մարչը ճակատը տրորեց, թեթև գլխապտույտ զգաց: Արևը միամտորեն կարծում էր, թե նրա գլխարկի տակ հաստակլեպ դդում է և ուզում էր խաշել այդ դդումը:

Հոփնաթան Մարչը այդ գիշեր հերոս էր... Ախ, չեթե տեսնեին նրան այդ դիրքով, հայրենի հողը կոխելիս, ինքն իրեն զրուցելիս, վորպես մի Լիբրարա, վոն, վորպես աշխարհակալ, վորի վայրկենական մտքերը պատգամներ են գալիք սերնդի համար:

Հոփնաթան Մարչը կոացավ, քարերի արանքում բուսած խոտերից մի փունջ պոկեց և մետաքս թաշկինակի մեջ լեցրեց մի բուռ հող: Մետաքս թաշկինակ... Այրիացյալ տիկին Մարինե Քրաջյան...

...Յերեկոյան Մարչն աչքերը բաց արեց, նայեց չորս կողմ ու նորից փակեց: Յերմզ էր: Ո՞վ կառուցեց այս խրճիթը տափարակում: Քներակները զարկում էին և ամեն մի զարկի հետ ծակոցներ էր զգում գլխում: Մարչը ձեռքը ճակատին տարավ և զովություն զգաց ճակատին դրած թաց շորից: Յերբ շորը փոխեցին, Մարչը նորից աչքերը բաց արեց, ճրագի լույսի տակ տեսավ շոֆֆերի դեմքը և մի ուրիշ դեմք: Մի կին ճրագը բարձր բռնել էր, ասես գլխին էր դրել: Նա փորձեց խոսել, բայց հազիվ կարողացավ ջուր ուզել ու աչքերը նորից փակեց:

Հոփնաթան Մարչը արևահար էր չեղել այն ժամանակ, չերբ հուլիսյան արևի տակ, ցամաք տափարակում, վորպես միրափ, նա տեսնում էր Նոր-Յեթովպիո սպիտակ տները: Շոֆֆերը սպասել էր մի ժամ, չերկու, վերջը մոտեցել էր և նրան տեսել արևի տակ ուշաթափ ընկած:

Յերբ մի անգամ էլ նա աչքերը բաց արեց, մի մարդ ամանի մեջ մածուն էր խառնում ջրին, կինը կանգնել էր կողքին, ինչվոր չերեխաներ կախվել էին կնոջ փեշերից և զարմանքով նայում էին խսիրի վրա պառկած մարդու շորերին, կոշիկներին, ակնոցների ապակիներին, վորոնց մեջ արտացոլում էր ճրագի լույսը: Յեվ մանուկներին այնպես էր թվում, թե մարդը կրակե աչքեր ունի:

— Ո՞ւր եմ, — հարցրեց Մարչը և մինչ շոֆֆերը պատաս-

խան կտար, նրա սնարի վերև տնկվեց չերկարհասակ մեկը և  
ասաց.

— Անհոգ յեղեք: Հաջի Սարար գյուղն է, կամ հին հայոց Բազ-  
նարանը:

— Հին հայոց... Հրամանքնիդ ո՞վ էք:

— Անթանոսյան Հմայակ, գյուղի վարժապետը: Յես ել ու-  
տարական եմ, այս հեռու գյուղում եմ աշխատում:

Յեվ Անթանոսյանը շատ կցկտուր պատմեց իր կյանքն ու  
գլխով անցածը, ամեն ինչ համեմելով այնպիսի բառերով, վորոնց  
քաջ ծանոթ են հին գրաբար գիտցողները: Շոֆֆերին այնպես  
եր թվում, թե մարդը սրջ ունի և խոսելիս պոչը գետնուփն է տա-  
լիս:

Տան տերը առաջարկեց հիվանդին կտուրի վրա տեղավոր-  
ել:

— Վերև քամի կլինի, լավ կքնեք: Համ ել կարիճից, մժե-  
ղից յերկյուղ չի լինի:

Մարչին վերև տարան: Սանդուղքով բարձրանալիս նա թե-  
թև գլխապտույտ զգաց ու հենվեց Անթանոսյանի թևին:

— Վաղը չեղեգնուտը պիտի տեսնեմ: Ինչպես ե՞ անունը:

— Տեղացիք Ղամբշու չեն ասում, — ասաց Անթանոսյանը, —  
Պատմական...

Ղամբշուի պատմական անունը Հովնաթան Մարչը այնպես  
ել չլսեց: Կտուրը բարձրանալիս զգաց, վոր վտաքերը դողում են,  
հազիվ հասավ թախտին ու մեկնվեց:

Յերկինքն աստեղազարդ եր, ի հարկե, վորովհետև հուլիսյան  
գիշերը բոլոր հորիզոնների տակ ել աստեղազարդ է: Հովնաթան  
Մարչը աչքերն աստղերին ուղղելուց առաջ հարկ համարեց, անձի  
ապահովության համար, հարցնել կարիճների մասին և տեղեկա-  
նալով, վոր այդպիսիք կտուրների վրա հաղվազյուտ են, չերեսը  
դարձրեց Անթանոսյանի կողմը:

Այդ այնպես հանկարծ չեղավ, ասես մինչ այդ նա չեր զգա-  
ցել նրա ներկայությունը: Մարչը նրան հարցրեց հողի, ջրի մա-  
սին, վոչ վերացական մի ինչ վոր հողի կամ ջրի, այլ վորոշ  
մ եր, այս, հին, հայրենի և այլն: Այդ խոսակցությունը այն-  
քան հաճելի թվաց Մարչին, վոր նա գլուխը վեր հանեց, նստեց  
տեղում ու ցնծության աղաղակ արձակեց:

— Ահա փղշտացի մը...

Շոֆֆերը կարծեց թե կարիճը խաչթեց պասաժիրին: Խըր-  
ճիթում քնած տանտերը կնոջը հարցրեց.

-- Ինչո՞ւ ճվաց:

Յերկինքն աստեղագարդ էր: Սակայն այդ չէր կարևորը, այլ  
այն, վոր Հաջի Խարաբ գյուղի ծայրին, կտուրի վրա Հովնաթան  
Մարչը զրուցում էր մի մարդու հետ, վոր իր նախատիպն էր,  
սակայն մի քիչ ավելի պակաս աշխարհ տեսած, ավելի բարձրա-  
հասակ և գյուղի ուսուցիչ, այն ժամանակ, յերբ ինքը... Նո՛ւ,  
ինքը, ի հարկե...

Խոսքը դարձավ Նոր-Յեթովպիո մասին: Հովնաթան Մարչը  
պատմում էր, ավելի ճիշտ գառանցում, վորովհետև քներակներն  
մեջ ծակոցները շարունակում էին: Իսկ Անթանոսյանին թվում  
էր, թե այդ ձայնը մոռացված, բայց հարազատ հեռուներից է  
գալիս:

Նրանք անվերջ կզրուցեին, չեթե մի դիպված չլիներ, ան-  
մեղ մի քայլ: Յերբ Անթանոսյանը պատմում էր հին որերից,  
յերկուսին հասկանալի լեզվով, Հովնաթան Մարչին այնպես էր  
թվում, թե ինքը ինչ վոր կղզիների վրա յե և վոչ հայրենի չե-  
կրում: Մի Տայիտի, Փորձողա կամ անհայտ այլ կղզի, ուր ասլ-  
րում են կարմրամորթներ և ջրերի վրա գերաններից տներ կա-  
ռուցում ճիշտ այնպես, ինչպես տան կտուրը:

Անթանոսյանը պատմում էր: Կարճ էր անհայտ կղզու բը-  
նակիչը պատմել, թե ինչ գեղաքանդակ է Ղամբշլուից վոչ հեռու  
ընկած ավերակ յեկեղեցին, ուր չեզիղի հովիվները ձմեռը վոչխար  
են պահում: Կարճ էր Տայիտի բնակիչը պատմել...

Միայն փղշտացին կարող էր արտասովել հուլիսյան աստեղա-  
գարդ յերկնքի տակ, լսելով Հովնաթան Մարչի խոսքը այն մա-  
սին, թե ինչպես տափարակի մի քարի տակ, թաշկինակը հողով  
լեցնելուց հետո, նա մի թուղթ է թաղել, վորպես հիմնադրեք Նոր-  
Յեթովպիո, վորպես նոր ուխտ:

Յեվ այդպիսի զրույցները վերջ չեին ունենա, չեթե չլիներ  
մի դիպված, վորի պատճառն այն էր, վոր Հովնաթան Մարչի  
քներակները ցավում էին, ու կարծում էր, թե Հաջի Խարաբ  
գյուղը անհայտ կղզու վրա յե, տները ցցաշեն են, պատերի տեղ՝  
գերաններ են ջրի մեջ: Յերբ Անթանոսյան Հմայակը հայրենի

յերկնքում մի համաստեղութունն եր փնտռում և Հարգագողի ճանապարհից մտքով գիծ անցկացնում մինչև  $\beta$  աստեղաշարը, Հովնաթան Մարչը վեր կացավ, մոտեցավ կտուրի ծայրին ցցած կտորած կարասին, վորով ամեն առավոտ ոջախի ծուխն եր բարձրանում:

Դիպվածը, ճիշտ է, վերևից սկսվեց, հենց ծխնելուզդի կարասից, բայց աղմուկը խրճիթից չեկավ, վորովհետև վերից ծլլացող հեղուկը հանդցրեց ճրագը և Հովնաթան Մարչին այնպես թվաց, թե պետք արանում մարդիկ են խեղդվում: Այդպես չեր կարծում, սակայն, տան տերը, վորի խոր համոզմամբ, հուլիսյան աստեղադարդ գիշերին, յերկինքը յերբեք անձրև չի թափում և այն ել ծխնելուզով:

Աղմուկի վրա շոֆֆերը դուրս թռավ և մինչդեռ Հովնաթան Մարչը Անթանոսյանին ապացուցում եր, վոր պետք արանում մարդիկ են խեղդվում, իսկ փղշտացի Հմայակը մեջքով կտուրն եր հրում, ուզում եր, վոր կտուրը տեղ անի և պարտակի իրեն, — շոֆֆերը, բակում շապկանց կանգնած և ըսունցքը դեպի կտուրը ճոճող տանտիրոջ հետ՝ մտաավորապես այսպես եր խոսում.

— Լավ, հերիք ե, դուցե են չեր, խմելու ջուր եր:

— Ի՞նչ ես ասում, ենպես խմելու ջուր կլինի: Ես ել իմ պատվի տեղն եր: Յերեխեքս վեր թռան...

— Դե չիմացավ, մեր տեղին ծանոթ չի, Ամերիկացից ե չեկել...

— Ե լավ, եղ անտեր յերկրում բա կտուրով տուն չկան...

Խնդրին վերջնական լուծում տվին այն արձաթիւերը, վոր Անթանոսյանի բռի մեջ իջան սանդուղքով և զրնդոցով թափվեցին գյուղացու բուռը, վորպես յերկնքից իջած աստղեր:

Ահա այդ դիպվածն եր, վոր ընդհատեց նրանց քաղցր զրույցը: Ասվում է ընդհատեց, քանի վոր խաղաղութունն արկելուց հետո, Հաջի Խարար գյուղում, խղճուկ մի կտուրի վրա, յերկու փղշտացիների զրույցը նորից ծայր առավ:

Լուսարացը այսպիսի պատկեր տեսավ: Անթանոսյանը պառկել եր գետնին, մեջքի վրա, դեմքին՝ յերանության ժպիտ: Ընթերցող, մանուկ ժամանակ սպանել էք գորտ ու տեսել էք, թե ինչպես գորտը դառնում է մեջքին, վոտքերով շանչ անում, ասես գանգատվում է յերկնքին: Այդպես պառկել եր Անթանոսյա-

նը, սակայն վոչ վոքի գանգատ չեր անում: Թախտի վրա Հով-  
նաթան Մարչն եր պառկել, ձեռքը գլխի տակ, չերեւը դեպի հե-  
ռու՝ մշուշի մեջ չերեացող տափարակը:

Այդպես քնել էին խաղաղ ու անխռով յերկու փղշտացի:

Յեւ էին նրանք ան ձիւն քն վիւր յաւլք սիւրուչն Արմե-  
նիո... )

Այդ որը պատարագիչ Արիստակես չեպիսկոպոսը, յերբ չե-  
րեսը դեպի աղոթողները դարձրեց և սկիհը բարձրացնելով ասաց՝

— Առեք կերեք, այս և մարմին իմ, — մյուսների հետ մո-  
տեցավ և Հովնաթան Մարչը, ուտելու այն մարմինը, վոր ամ-  
փոփված եր չեպիսկոպոսի ձեռքին բռնած անոթի մեջ: Յեւ չերբ  
սրբազանի մատները շոչեցին նրա լենդերքը, բերանում գինու  
համ զգաց, Հովնաթան Մարչի չերակներում արչունը խաղաց, վոր-  
պես յետման հասած ջուր: Յերջանկության գագաթնակետն եր  
նրա համար:

Ախ այդ չերջանկությունը... Կատուն դռան շեմքին, արևի  
տակ ծուլորեն պառկում և, հորանջում և յերբ արևից խաղում և  
արչունը, թաթերն այնպես նազանքով և մեկնում, ասես չերջան-  
կությունն արևի շողերի մեջ լողացող դեղին թիթեռնիկ և:

Պատարագը շարունակվում եր: Մերթ բեմից եին չերգում,  
մերթ ներքևից պառաված ու յերբ ձայնով մեկը պատասխանում  
եր, գովում լուսավորչական աստծուն, վոր մուտքի առաջ չոքած  
գաղթական բիձայի համար բավական նման եր պատարագիչ Ա-  
րիստակես չեպիսկոպոսին: Նույն ալեհեր միրուքը, փառահեղ մա-  
լանչներով մինչև գոտին կախ ընկած, նույն սպիտակ ու կակուղ  
մատները, վոր դեղին մոմի եին նման և բույրը՝ կնդրուկի,  
խունկի և զանազան անուշահոտ յուղերի միախառնված բույրը,  
վոր ողում բարակ հետք եր թողնում ամեն անգամ, չերբ Արիս-  
տակես չեպիսկոպոսը մայր դռնից ներս եր մտնում, վիզը վե-  
հորեն աջ ու ձախ դարձնում՝ տեսնելու, թե քանի հոգի յեն  
չոքել վանքի սառը քարերին: Համարչա ամեն որ նույն տեղում  
գաղթական բիձային եր տեսնում, մի քիչ հեռու մշեցի տեր Հու-  
սիկ քահանային, մոմի արկղի առաջ կանգնած:

Այն բառերը, վոր չելնում եին պատարագիչ սրբազանի  
բերանից, վոր հնչում եին դպիրներն ու չերգասաց տիրացու-

ները, — Հովնաթան Մարչի համար սոսկական գրարար չեր, այլ աստվածային չերաժշտութուն, մի անտես չերգեհոն, վորի ամեն մի յելեկի հետ հոգին վոչ միայն բարձրանում եր մինչև վանքի գմբեթը, այլ և աղամբակերպ դուրս թռչում նեղլիկ պատուհանից և ո՞վ գիտե, ի՞նչ հրաշքով խառնվում հուլիսյան կապույտ չերկնքին:

Յոնավությունից պատերի կրածեփը տեղ-տեղ ճաքել եր, թափվել: Հին յուղաներկ նախշերն ավերվել էին, ասես ժամանակը կեղտոտ լաթով սրբել եր պատերը, ցեխոտ ջուր շաղ տվել, մի տեղ սևացրել, մի տեղ ել գույները առաջվա պայծասությամբ թողել: Ժամանակը վաղուց եր իր վճիռը կարգացել վանքի համար, մնում եր, վոր նույն ժամանակն ուղարկի դատական կատարածուն ըստ ցուցակի չեղած գույքը հանձնելու այն անհատակ անդունդին, վոր պատմություն է կոչվում:

Հովնաթան Մարչի աչքերը սահում էին պատերի վրայով, նայում նկարներին, նախշերին: Ահա հրեշտակապետը՝ թրով ու կշեռքով... Հին սոսապել մեղքի ու արքայության մասին: Քանի դար նա արնոտ աչքերով նայել է միամիտ պառավներին, նրանց հոգում սարսափ ծնել և սնտուի ջերմեռանդութուն, վոր վախճան է ստացել կեղտոտ թաշկինակի ծայրին կապած պղնձե դրամը հրեշտակապետի նկարի ներքևը կախած գանձանակի մեջ գցելով:

Տիրամայրը... Բավական համակրելի դեմքով մի կին և այնքան ճերմակ ուսեր ու կարմիր շրթունքներ, վորոնցից մայրությունը կաթում է, վորպես հասած նոսն ջուր: Տիրամոր նկարը, վորին ի տես շարվեշար կանգնած միաբանները շատ վորոշ տեսել են և մարմնի այն մասերը, վոր չկան նկարի վրա:

Վո՞րտեղից ներս ընկավ մեղրաճանձը և տղզալով պտույտներ գործեց, մոտեցավ, նստեց տիրամոր նկարի վրա, թևերն իրար քսեց, հետո թռավ, կորավ գմբեթի տակ:

Յերբ վոր հիմնվի Նոր-Յեթովպիան, ուրիշ նորանոր քաղաքներ, այս չերկիրը կդառնա ամենից չքնաղը գլոբոսի վրա, հին քաղաքների վոգին հարություն կառնի, փղշտացոց ցեղը նորից կդառնա հզոր ու անպարտելի:

Այսպես մտածելուց հետո Հովնաթան Մարչը տեղը փոխեց, վորովհետև պատուհանից արևի շողերի մի խուրձ տաքացնում եր այն գլուխը, վոր հարբել եր լուսավորչական պատարագից ու հայրե-

նարազմ մտքերից: Տեղը փոխելիս Մարչը տեսավ գաղթական չերկու բիձայի հետև կանգնած Անթանոսյան Հմայակին: Նրանց հայացքներն իրար հանդիպեցին:

— Յես ել Չեզ պես, — ուզում եր ասել Անթանոսյանը:

— Կսքանչանում, հավատարիմ զինակից, — այսպես կարելի չեր խմբագրել Մարչի զեմքի արտահայտությունը, հիմք ընդունելով նրա աչքերի փայլը, վոր և՛ կրոնական եքստազ եր, և՛ փղշտական հայրենասիրություն, և՛ մեղմ քնքշանք ի տես Անթանոսյանի նիհար ու բարակ մարմնի, գզգզված մազերի և այն խեղճ կեցվածքի, վորպիսին ուներ Անթանոսյանը, աղոթող բիձաների կողքին:

Այն առավոտ, չերբ լուսարացը Հաջի Պարար գյուղում տեսավ նրանց վորպես անձինք նվիրյալք, այն առավոտ արևի շողերի խողտոցից զարթնելով, Հովնաթան Մարչը տրորեց աչքերը և նաչեց տափարակին: Նրա հոգին թունդ առավ, կոշիկի թելերը կապելուց հետո, վճռականորեն մոտեցավ կտուրի ծայրին վորպես լուսնոտ մի մարդ, վոր թևերը ձգելու չե վեր և խջնելու կտուրից:

Շունը մոռաց: Մարչը հետ նահանջեց և նահանջելու հետ միասին աչքին շատ պարզ չերևաց Հաջի Պարար գյուղը, հողաշեն տները, անկարգ փողոցները, բամբակի ու ցորենի արտերը և կտուրի կարասե ծխնելուչը:

Անթանոսյանն ել զարթնեց, վեր թռավ և այնպիսի ժպտով մոտեցավ նրան, ասես աչքն ել չեր փակել և ամբողջ գիշեր ժպտացել եր:

— Դիտում եք: Հրաշալի չե, — ասաց նա:

Մարչը մոմոաց, վորից չերևաց այն վոր, տեսարանը հրաշալի լինելով հանդերձ, նրա հաղթ մարմինը ուտել եր ուզում: Յեվ չերբ շոֆֆերը ներքևից ձայն տվավ, վոր թելը պատրաստ ե, Մարչը ժպտաց:

Վոչ վոք զսեց, թե ի՞նչ խոսեցին Հովնաթան Մարչն ու Հաջի Պարար գյուղի ուսուցիչ Հմայակը տան սովերում, այն ժամանակ, չերբ շոֆֆերը մեքենայի փոշին եր սրբում, իսկ տան տերը հողուրազն եր սարքում:

— Ո՛ւր, վարժապետ, — հարցրեց տան տերը, չերբ մի քիչ հետո Անթանոսյանը նստեց ավտոմոբիլի մեջ:

— Նոր չերկիր, — չեղավ պատասխանը: Գյուղացին վռնչեց չհասկացավ: Յեթե նա լսեր, թե ի՞նչ խոսքեր ասացին իր հողաշեն խրճիթի ստվերում, այնտեղ, ուր հորթերն են պառկում:

Վանքի մայր դռնից ներս մտավ պարարտամարմին մի կին, սև վռալով: Կինը խաչակնքեց այնպես արագ, ասես մատերի ծայրին բամբակ կար, պուղրայի մեջ թաթախած: Այդ արարից հետո վիզը թեքեց այնպիսի խեղճությամբ, կարծես ամենքին ասում եր.

— Յես եմ հոգով աղքատը, վորի համար ե կահավորած չերկնի արքայությունը: Յես եմ կայծակից խանձված ծառ՝ կանաչ պարտիզում:

Վեղարավորներից մեկը չետ նայեց, պառավ չեզի դանդաղ կոտ շարժումով: Հովնաթան Մարչը չիմացավ վեղարավորը բուրվառող սարկավազին խոնարհեց, թե՛ կնոջը վողջունեց:

Չանգերը դարկեցին: Սառը քարերի վրա չոքած պառավ կանաչք որորվեցին, արտի մեջ տնկած խրտվիլակների նման, յերբ թեթև քամի չե չեչնում:

— Իձին-բոմ-բոմ, դձին-բոմ-բոմ...

— Յեվ յերկիր և չերկին անցցեն, բայց բանք լմ մի անցանիցեն...

Արիստակես չեպիսկոպոսի ձայնը բեմի վրայից աղոթողներին ազդարարում եր գալիք կյանքի մասին, և վոչ վոք չեր ըզգում բորբոսնած այն ձանձրույթը, վոր կար պատերի վրա, մոմավաճառ տեր Հուսիկի դեմքին, Գաբրիել հրեշտակապետի աչքերում, թեկուզ այդ աչքերը սարսափել ծնեցրել են միամիտ պառավների հոգում:

Հովնաթան Մարչի մտքերը հեռու եին, շատ հեռու: Ահա մանկության որերը, ապա վանքի դպրանոցը, շատ հեռու մի քաղաքում, ուր բարձր մայրիներ կան, չնաշխարհիկ պուրակներ: Հայրը՝ բարեպաշտ լուսավորչական, անվանի Սերոբ աղան, գորգագործարանի տեր: Ու միշտ հայրը կասեր.

— Չգե չավրիս, այդ քու գործը չե:

Այդպես եր ասում հայրը վորդուն, չերբ վերջինս հարևան տղաներից խուժր կազմած, պարսատիկներով ու կեռ փայտերով զինված, դպրոցից գալիս հոռոմ ու տաճիկ տղաների հետ կովի յեր բռնվում: Ո՛ հերոսական մանկություն, վոր կնիքդ դրե՛ր

Հովնաթան Մարչի հետագա տարիների վրա և նրան դարձրիր վոբոտման վորդի:

Մի անգամ ել թշնամին հարձակվեց և հայրական տան ապակիները փշրեց: Այդ գիշեր, ծեծի ու լացի անմոռաց գիշեր. պահվել եր սնդուկների հետև, մայրը վորպես սլահապան հրեշտակ սլատվում եր սենյակում, մինչև հայրը տուն դար և խմացներ: Հետո ծեծ, քաշկրտուք, թուք ու մուր և մառանը, չոր մրգերով լեցրած մառանը, վորպես աքսորավայր:

Ապա Պոլիս, ազգային վարժարան, ճառեր, ցույցեր... Յերագներ, մոտ, շատ մոտ: Հարկավոր եր միայն ցանկանալ, ուժեղ ցանկանալ, վոչինչ չանել, նստել սրճարանում, ծխի թանձր քուլաներ արձակել, բերանը վողողել դառնահամ սուրճով, ծամել սուրճը, մինչև նյարդերը սրվեն և ձգված նյարդերը պատկերացնեն յերազը:

— Պատարագը վերջացավ, — ձայն տվեց Անթանոսյանը: Հովնաթան Մարչը ցնցվեց: Կաղլիկ լուսարարը, փայտը գետնին դեմ տալով, մեկ-մեկ հանգցնում եր մոմերը, բաց գրքերը ծալում: Տեր Հուսիկը պղնձե դրամն եր հաշվում: Յեկեղեցում ուրիշ վոչ վոք չկար:

Մարչը մոտեցավ, տեր Հուսիկից դեղին մոմեր գնելու, մայր աթոռի մոմեր:

— Հավատացյալ հայրենակից մը ունիմ Բուենոս-Այրես: Անոր բաղձանքն ե, չերբ վախճանը մոտիկնա, սնարի վերև մայր աթոռի մոմ վառել, — ասաց Մարչը մանրիկ արծաթներ գլորելով մոմավաճառի առաջ:

— Աստված թողություն շնորհեսցե — պատասխանեց մշեցի քահանան ու կոացավ գետնին ընկած արծաթը վերցնելու:

Յեվ հանկարծ մի միտք, վորպես կալձակ, փայլատակեց Հովնաթան Մարչի գլխում: Ահա նա, արծվաքիթ, տիպար քահանան, վորի միրուքի մազերի արանքում հացի փշրանք ու պանրի կտորներ կալին, կատարյալ քահանա, այն չերկրից, հասկանում եք, այն մեռած չերկրից, ուր կար Մ շ ո Ս ու լ թ ա ն ս ու ը ը կար ա պ ե տ և մեղրագետեր, և վորի անունը ելեքտրական հոսանք եր նրա նյարդերի համար: Ահա նա, հայրենի չերկրի սխտորահոտը կարկատած Փարաջայի փեշերին, ճակատի կնճիռները վորպես անընթեռնելի հիյերոգլիֆ:

Տեր Հուսիկը միրուքն առավ վոսկրոտ մատների մեջ և ներքին հրճվանքից այնպես տրորեց միրուքը, ասես հիմա պիտի պոկեր, վորպես սոսինձով փակցրած գրիմ: Սակայն վոչինչ չեղավ արտաոց: Հուլիսյան այդ որը, հենց մայր տաճարի կամարների տակ, բոլոր հրեշտակների ու առաքյալների ներկայությամբ, մշեցի տեր Հուսիկ քահանան նշանակվեց Նոր-Յեթովպիո ծխատեր:

Ինչո՞ւ, ինչու լաց չեղավ Գարրիել հրեշտակապետը և ձեռքի կշեռքը դողաց թեթև, շատ թեթև...

Մինչև ճաշ բավական ժամանակ կար:

— Հայրենի հուշարձանները տեսնելու յերթանք,— ձայնեց Մարչը: Անթանոսյանը հետևեց նրան վորպես և՛ թիկնապահ, և՛ գրուցընկեր: Անթանոսյանից քիչ հեռու քայլում եր տեր Հուսիկ քահանան:

Այդպիսի շքախմբով Հովնաթան Մարչը վանքի դռան գերեզմանաքարերը դիտելուց հետո, տեր Հուսիկի առաջարկությամբ, գնաց Գայանեի վանքը:

— Ոտարը պարծանք կսեպե մեր վանքի պատի տակ թաղվի, իսկ մենք չենք հարգել նախնյաց հիշատակը,— ասաց Մարչը, վորից հետո տեր Հուսիկն ավելացնելու վոչինչ չունենալով, անխ քաշեց, հասկացնելու համար, թե Մարչն իր սրտից խոսեց:

Ամաչի չեր ճանապարհն ել, վանքի շրջապատն ել: Յեվ չերը դռնով ներս մտավ, վանքի բակում մի շուն հաջեց նրանց վրա, այնպես անտարբեր, ասես շնական իր լեզվով ասում եր:

— Միևնույն ե, ել հաջելու չեմ, չեթե դուք վանքն եք ուղում տեսնել, վորովհետև այնտեղ ինձ պահ տված վոչինչ չկա:

Բայց այդ չեր կարևորը և դրանից չեր, վոր Մարչը ցնցվեց: Մեկը թրի ծաչրով չեթե նրա սիրտը ծակեր և դրանով ել շքավականանալով, սիրտը տեղախան աներ, Մարչն այդպիսի ցընցում չպիտի աներ: Սրբապղծություն չե՞ հնադարյան վանքի բակում շուն կապել, բուրդը գզգզված քոսոտ շուն, լեզուն շոգից կես արշին կախ և այդ այն ժամանակ, յերբ նրա մտքի առաջ Գայանե կույսն եր, մազերը թիկունքին կախված, չերկար զգեստով և հողե հնձանը, ուր կույսերն ուլունքներ եին պատրաստում և պահվում Տրդատ թագավորի անսանձ կրքերից:

— Ո՞ւր կերթաք, — ձայնեց մի կին, վոր շան հաջոցին տընից դուրս եր չեկել ու, ձեռքով չերեան արևից պահելով, նայուա եր նրանց:

— Վանքի դուռը բաց ե, քույրս, — հարցրեց Անթանոսյանը:

— Ապա ի՞նչ, — ասաց կինը և ներս մտնելուց առաջ կանչեց.

— Հորթը չթողնեք, վոր դուրս ելնի:

Սակայն չերեքից և վոչ մեկը չլսեց կնոջ կանչը: Այդ ժամանակ տեր Հուսիկը Հովնաթան Մարչին ինչ վոր պատմություն եր անում, ավելի ճիշտ հնարում, իսկ Հովնաթան Մարչը մերթզուցան եր որորում, մերթ ահնոցների արանքից նայում տեր Հուսիկին, ասես՝ ուզում եր ստուգել, թե վորքան հաջող ե նոր-Յեթովպիո ծխատեր քահանայի ընտրությունը:

— Այստեղ թաղված ե Հովհաննես չերկրորդ կաթուղիկոսը, — ասաց տեր Հուսիկը: Յեթե նա մի քիչ նրբազգաց լիներ, կտեսներ Հովնաթան Մարչի այլայլված դեմքը, չերբ աչքը գցեց դամբարանին և աչքն ընկավ մարմարի վրա մատիտով գրածին.

— Այստեղ չես Սիրուշին... Ինչ լուրջ եր...

Ընթերցող, դուք հասկանում եք (դուք, իհարկե, հասկանում եք), թե ի՞նչ ե կատարվել վեհապետի շիրմաքարի վրա և ինչպես նրա վոսկորները շուռ են յեկել մյուս կողքին, չերբ վորբանոցի աղջիկ Սիրուշին... Մի՞թե այդքան անհողի յեն մաշտոցյան գրերը: Նոքա պատմում են փառապանծ որերի մասին ու նույն սառնությամբ շարվել են կողք կողքի, մեկի պղծությունը ավետելու այն խաղաղ ու սրբազան անկյունում, ուր ննջել են հոգևոր հայրերը:

Մարչը թուքը հաճախ եր կուլ տալիս, շրթունքները շարժում: Այդ ամենը հուզմունքի և ներքին զայրույթի նշան եր: Սակայն դիմացիը Մարչ, վորովհետև հեռու չես զայրույթի նոր պոթքումից:

Վանքի արևմտյան մասում ուրիշ գերեզմաններ ել կային, և նրանցից ամենից հասարակի քարին, վորի տակ հանգչում եր 18-րդ դարու նշանավոր հայրենասերի աճյունը, այդ քարի վրա վորպես ապահով վայր, կինը փոել եր իր կարկատած...

Մանրացած սերունդ, վորի սրտում նախնի փառքը տեղ

ել շունի, սարգի վոստայնի պես, գոնե ոճորքից կախվելու: Ի՞նչ ուրազան եր, վոր սրբեց, տարավ: Յեղե՛լ ե արդյոք այդ հինը...

Ահա այսպես եր մտածում և ինքն իրեն հարց տալիս Հովնաթան Մարչը այն ժամանակ, յերբ տեր Հուսիկը յերեսը մի կողմն եր դարձրել քահանայական իր անարատութունը զերծ պահելու, իսկ Անթանոսյանը վոգևորված պատմում եր այն որբից, յերբ հենց այդ վանքի պատերի տակ կամավորների վեցերորդ գունդը բանակ եր դարկել: Վոչխարները մայում եին վաւովող խարուշկի մոտ, յեռանդով ու ավյունով լցված կամավորները թրի հարվածով վանքի թթենիներն եին կտրատում:

— Յես ել եի... Հավետ անմոռաց որեր:

Վանքի դուռը բաց արին: Աղափսիները թռան, պահվեցին գմբեթի ճեղքերում: Կիսամութի մեջ Հովնաթան Մարչը տեսավ լղարիկ հորթին, վոր աղափսիների աղմուկից վախեցած կանգնել, նայում եր յեկողներին:

Մարչը տեղում մեխվեց: Վոսկի հոթ թ, կուռք... Սակայն հորթը շարժվեց դեպի դուռը և դռան մոտ բռնաչեց այնպիսի ուրախությամբ, վոր միայն հորթին ե հատուկ:

Իգուր եր տեր Հուսիկը այս ու այն խաչքարի կամ քանդակի մասին մի բան պատմում և ամենը շաղկապում Գայանե կույսի անվան հետ:

— Այս քարով են անիրափները ջարդել խեղճին,—ասաց տեր Հուսիկը, ցանկանալով միանգամից ցույց տալ և՛ ջերմեռանդ, և՛ գիտուն լինելը: Յեվ այդ բուն վոգևորությունից այնպիսի մի քար ցույց տվեց տեր Հուսիկը, վոր անհնար եր տեղից շարժել, թեկուզ այն ժամանակ:

Վանքի բակում շունը մի անգամ ել հաջեց: Կինը թոնթորաց, յերբ տեսավ, վոր հորթը բաց դռնով դուրս ե յեկել և կըրծում ե բակի կաղամբը: Այդ ամենին անտարբեր Հովնաթան Մարչը անցավ բակի յերկայնքով, նրանից պատշաճ հեռավորության վրա՝ Անթանոսյանն ու տեր Հուսիկ քահանան:

Յերբ Մարչը թաշկինակով ճակատի քրտինքն եր սրբում ու քայլում փոշոտ ճամբով, նա իր մտքերի ծովումն եր, վորպես անդեկ, անառագաստ նավ: Լավ չեր զգում իրեն, նեղվում եր հով ու տաքից: Յեվ յեթե փոշի յեր բարձրանում նրա քայ-

լերից, շիկացած մտքերն ել պաղ գոլորշի եին արձակում, յերբ այդ մտքերը թաղվում եին առտնի առորյայի սառը ջրում:

Դուք սիրում եք մի սիրուն աղջիկ, վորի մեջ թերի վոչինչ չեք տեսնում և վորը ձեզ համար կատարչալ տիպ է, խտացրած գեղեցկութուն, բարի սիրտ, մի խոսքով մարդկային բոլոր առաքինի բարեմասնությունների գումար: Յեվ հանկարծ հայտնվում է, վոր աղջկա ատամները անմաքուր են, գարշահոտ կա այն շրթունքների հետև, վորոնց կարմիրը ձեզ համար և՛ վարդ եր և՛ նոան կլեպ:

Այսպես եր և Հոփնաթան Մարչը: Մերթ տաք, մերթ հով: Մերթ հերարձակ Գայանեն՝ ուլունքների շարանը պարանոցից կախ, մերթ լղար հորթ, խոնավ, ճաքճքած պատեր, վորբանոցի աղջիկ Սիրուշ...

Մռայլ եր և Անթանոսյանը: Յեվ չերբ ճամբի չեզրին կապույտ քարը ցույց տվեց ու ասաց թե՛

— Այստեղ թաղված է Խենթի սիրած աղջիկ Լալան, — Անթանոսյանն իր գերը պահ մի վերջացած համարեց, վորովհետև մտքերը մի ուրիշ հողաբլրի շուրջ ցատկոտեցին, կապույտ քարից վոչ հեռու, վորի տակ թաղված եին մայրն ու կինը, իր՝ Անթանոսյան Հմայակի, վեցերորդ կամավորական գնդի զինվոր Անթանոսյանի հարազատ մայրն ու կինը:

Խուլերի տարի յեր, թեկուզ հույսի բոլոր դռները կրնկահան եին և ուղտերի քարավանը խոստումներով բարձած Վանա չերկրի ճանապարհն եր բռնել: Մի բան ճվտկաց նրա սրտում: Մոխիրների տակ մոռացված մի կայծ ել պսպղաց: Ունեցե՛լ է կին... Ինչո՞ւ յե մոռացվում դեմքը և ինչ ծանր է, չերբ մարդու հիշողության առաջ մեռած մի հարազատ կանգնում է անիմաստ ժրպիտն յերեսին: Չգիտես հանդիմանո՞ւմ է, թե՞ շոյում:

Թեև շոգ կեսոր եր, պլպլում եր արևը, բայց Անթանոսյանը սառնություն զգաց, կուչ չեկավ: Յերբ հրդեհում են չերխտասարդ որերը, առատաձեռն ու սրտաբաց ցրիվ տալիս, հանկարծ, մի վայրկյան միայն, չերխտասարդ որերի տերը իրեն հարց է տալիս.

— Վաղն ել, մյուս որն ել, և ապա առաջին ձերմակ մազը...

Սակայն այդ տևում է միայն մի վայրկյան, վորովհետև հաջորդ վայրկյանին չերխտասարդը դառնում է նույն հրձիգը:

Այդպես մտածեց Անթանոսյանը:

— Անցա՛մ ամեն ինչ... Ո՞ւր են կրակները:

Սակաչն նորից սիրտը թունդ առավ... Հովնաթան Մարչի առողջ պարանոցից, լաչն թիկունքից, վճռական քայլերից:

— Ահա մարգարեն: Ու ծովը պիտի ճեղքի, պիտի գան փրկողացիք, յեթովպացիք, կեսարացիք, ուսհայեցիք, բոլորը, բոլորը և չերկիրը պիտի դառնա մրգաշատ պարտեղ, աղբյուրները պիտի ծորան մեղր ու կաթ:

— Ճաշի ժամանակ չե՞, հայրենակից, — դարձավ Մարչն Անթանոսյանին: Տեր Հուսիկն այնպիսի ցատկումով մոտեցավ նրան, վոր ուզում էր ասել.

— Ի՛նձ հարցրու...

Սակաչն իզուր: Հենց այդ վայրկյանին Արիստակես չեպիսկոպոսի ծառան, վոր հեռվից տեսել էր նրանց, մոտեցավ և Մարչին սրբազանի անունից հրավիրեց ճաշի:

Մարչը հետևեց ծառային: Տեր Հուսիկը տուն գնաց: Մնաց Անթանոսյանը՝ գլուխը կախ, վորպես հարցական նշան:

Մոտակա տափարակում ցել անող տրակտորը, ասես, վոչ թե ֆրթֆրթում էր, այլ քրքջում և թքում բենզին:

Ծղրիտները գիշերվա կիսին այնքան միալար ու մեղմ եին ձայնում, վոր յեթե Հովնաթան Մարչի ծանր մտքերը չլինեին, նրանց չերգը քնաբեր որոր պիտի լիներ և նա մուշ-մուշ պիտի քներ փափուկ անկողնում: Սակայն կային այդ մտքերը և դրա համար ել Արիստակես չեպիսկոպոսի ննջարանի ծղրիտներն այդ գիշեր վոչ թե քուն բերին, այլ ջղայնություն:

Հովնաթան Մարչին թվում էր, թե պատի ճեղքերում անթիվ, անհամար մանրիկ ժամացույցներ են և բոլորն ել նույն ձայնն են հանում, վորպես ծղրիտներ:

— Ծղի-տակ, ծղի-տակ...

Դրանից եր, վոր նա չերբեմն մեջքին եր պառկում, յերբեմն աջ ու ձախ դառնում, վերմակը մի կողմ նետում: Յերանի թե միայն դրանով վերջանար, և Հովնաթան Մարչը քներ:

Այդ որն այնքան բան անցավ նրա գլխով: Յեվ ահա այդ անցածն եր նրա քունը խանգարում, նստում կրծքին, յերբ Մարչը պառկում եր մեջքին: Կողքին դառնալիս մտքերն ել շրջվում եին: Մի ուրիշն եր ցցվում և հարցնում.

— Ինձ մոռացել ես...

Յեթե միայն այդ որվա մտքերը լինեին: Ի՞նչ կապ, որինակի համար, Բուենոս-Այրեսում կատարած հանգանակության մի հաշվեկշռի հետ, յերբ պակասում եր միայն յերկու հարյուր դոլլար և Մարչը տքնում եր վաղվա ժողովին արդարանալու պատճառ յերկնել, ի՞նչ կապ այդ յերկու հարյուր դոլլարի մոռացված պատմության և թղթադրամի այն կապի հետ, վոր սրտի ներքին թրթրոով, Արիստակես սրբազանի սեղանին խմած վանքի հին գինուց գլխի պտույտով, ճաշից հետո նա դրեց ամենից գերազնիվ և վեհ պատրիարքի պառավ ու համարյա կանացի ձեռքին:

Բարի, շատ բարի ժպտաց ծերունին, շուքեց Հովնաթան Մարչի փղշտական ճակատը, հարցրեց ովկիանոսի մյուս ամին մակաղած հոտի վարք ու բարքից, իղձերից:

Հավիտյան անջնջելի վարկյաններ, վոր այնքան կարճատև չեղան, վորովհետև ծերունին խոսքը, չծածած պատառի պես, կիսատ թողեց ու քնեց փափուկ բազմոցի մեջ ընկղմած:

Պատկերը սրտառուչ էր: Կարճահասակ մի վարդապետ ծերունու ձեռքից կամացուկ վերցրեց թղթաղրամի կապը, համրեց ու պահեց: Մարչի աչքերը գամված էին ծերունու պատկառելի արտաքինին և նրա մարմնի կանոնավոր մակընթաց ու տեղատու լինելուն, վոր կուշտ ու փափուկ ապրած մարմիններին և հատուկ: Յերբ նա տեսավ թղթաղրամը... Պատկերն, այն, սըրտառուչ էր:

Վեհի վոտքերի առաջ Վանա պառավ կատուն, թավ բրդի մեջ թաղված, այնպիսի նսրանքով էր լիզում դունչը, ասես պարծենում էր, վոր պալատական կատու չե և վոչ թե մարտ ամսին կտուրներին տակ սեր չերգող թափառական գուսան:

Ահա քեզ հինը, պատկառելին, միակը... Հովնաթան Մարչ, ապրիլ, ծծիլ այդ պահը, բաց արա ուղեղիդ ծալքերի մեջ այնպիսի մի եջ, ուր վոչինչ չես դրոշմել ու տպիր այնտեղ ծերունու և Վանա պառավ կատվի կլիշեն: Դու չտեսար, ամսոս վոր չըտեսար, թե ինչքան խոշոր էին ու աղամանդի պես փայլուն արցունքի այն կաթիլները, վոր սափրած այտերիդ վրայով գլորվեցին և ընկան ընդունարանի պայծառագուչն գորգի վրա: Տառապած փղշտացիք լալիս էին արցունքներիդ հետ, ցեղիդ հավատքի տասնարանյա տախտակներին առաջ:

Անասելի տոթ էր: Լուսինը, կարծես, մոտացել էր, վոր իր դերը արևից խանձված յերկրին սառնություն պարգևելն է: Հովնաթան Մարչին բաց պատուհանից չերևացող լուսինը թվում էր նույն արևը, մի քիչ համեստ ջերմությամբ: Իսկ ծղրիտները հականշում էին ժանգոտած ձայնով:

Դուրս չեկան ընդունարանից: Արխատակես յեպիսկոպոսը մի ուրիշ սենյակ մտավ և մինչ դեռ ինքը նախասենյակի նկարագարդ պատերին էր նայում, ժպիտը դեմքին, կարճահասակ վարդապետը տնկվեց նրա առաջ և Մարչին մեկնեց ամենից վեհ ծերունու թուղթը՝ հայրական որհնությամբ ու մաղթանքով:

Պատշգամբում կանգնել, նայում եին հրապարակին: Հանկարծ՝ փողերի ձայն, շեփորները կանչեցին, թմբուկներն աչնալեա ամուր թնդացին, ասես՝ պատուելու չեին հաստ կաշին:

Յերևաց մի ջոկատ: Զինվորները համաչափ քայլերով հետեւում եին գրոշակակրին, միասին ել փոշի հանում: Յեվ փոշումեջ աչնալես եր չերևում, թե հազարվոտանի մի մարմին<sup>7</sup> և քայլում:

Մարշի սիրտը թունդ առավ: Ահա հաչրենի դորքը: Լայնաթիկունք յերիտասարդներ, վորոնք նետվում են կրակի մեջ վոշ թե ուրիշի համար շագանակ հանելու, այլ ցեղի փառքը, փղշտական ու յեթովպական հին փառքը հանելու և ցցելու ամենից բարձր սարի գագաթին: Ահա սրանք են ութ հազարը, քսանը, բչուրը՝ կազմ ու պատրաստ:

— Մերոնք այս գիշեր դուրս կգան...

Զոկատ ջոկատի հետևից անցան ու գունդը կանգ առավ հրապարակում: Ուրիշ շարքեր յեկան, տղաներ, աղջիկներ, կանայք գրոշակներով, անդրոշ, յերգով, շարքերով: Արխատակես սրբազանն ասաց, թե ստացվել և հեռագիր, հեղափոխություն և մի յերկրում, վորի ժողովուրդն արժանի չե գեհենի: Ինչ վոր բան ասաց չեպիսկոպոսը, սակայն Մարշը չլսեց և արագորեն իջավ սանդուղքով, խառնվեց հրապարակի բազմության:

Ինչո՞ւ մարդիկ սկսել են անհասկանալի լեզվով խոսել: Մարշը նորից հին հարցը տվեց: Մի՞թե ուրազան և անցել այս յերկրով, մի՞թե խորն և անդունդը, վերադարձ չի լինելու: Չկան կամուրջ, թեկուզ բարակ մի փայտ, վորով ցեղը հետ դառնա հին փարախը և հաչրենական խոտն ուտի:

— Աղգուրաց, աղգաղավ...

Այսպես եր ասում Հովնաթան Մարշը այն յերիտասարդի հասցեին, վոր պատշգամբից, բանակի ու բազմության ցնձանքի աղաղակների տակ խոսում եր, ասում աչնալիսի բառեր, վոր սումբերի պես եին պաշխում:

— Կարմիր բանակը հաչրենիք չունի, ընկերներ: Այսօր մենք միացած համաշխարհային... Մենք պատրաստ ենք մեր ընկերներին... Հեղափոխությունը, ընկերներ... Բանվոր դասակարգի գլխաված բուռնցքը... Ալիքը բարձրանում և, ընկերներ...

Յերիտասարդ ընկեր, ինչ՞ու գրպանիդ ն ա գ ա ն ի ց մի անգամ

չկրակեցիր և չսպանեցիր Հովնաթան Մարշին, վորի սիրար, գիտես, նախ կուչ չեկավ քո բաներից և ապա, սեռինե գնդակի պես լայնացավ ներքին զայրույթից: Յեզ յեթե Անթանոսյանը բազմության մեջ տեսած չլիներ Հովնաթան Մարշի արգուկած զգեստը...

Որը իր վերջում պահել եր Հովնաթան Մարշի համար հըրճվանքի մի շտեանված թոխք և ապա անկում: Մի ջոկատի կողքով անցնելիս Մարշը հանկարծ տեսավ ծանոթ մի գլուխ, ապա խած աչքեր ու թևերը լայն բաց արած ի բր և ար ծ ի վ սլացավ դեպի գինվորականը:

— Մեսրոպ, Մեսի...

Քեոորդին եր, Մեսրոպը, մանկության ընկերը: Թևերը լայն բաց արած արծիվը շսլացավ մի սոսկական ջոկատապետի գրկելու, աչլ մի ամբողջ անցյալ, մանկություն, Սերոբ աղան և այլն: Տաքությանը հաջորդեց քրտինքը: Մեսրոբը ձեռքը մեկնեց նրան, ճանաչեց, մի քանի հարց տվավ, սակայն ուշքը հոկտորի ճառին եր: Յեզ հենց Մարշի քթի տակ այնպես լիաթոք սլոռան կանչեց, վոր Մարշը մի քիչ հետ քաշվեց: Ահա այստեղ, Հովնաթան Մարշը իր քեոորդու աչքերում տեսավ մի այլ բոց, վոր հրդեհվում եր վորպես հուլիսյան արև և վոչինչ փղշտական այդ բոցի մեջ:

Անգութ, անխիղճ Մեսրոբ: Դու ջարդեցիր այն անոթը, վորի մեջ Հովնաթան Մարշը իր ջերմ զգացումներն եր զեղում: Նա թռավ դեպի քեզ, վորպես մանկության նետ, դու հետ կանգնեցիր և նետը խրվեց վանքի մամուտ պատին:

Յերբ ժամացույցը չերկու անգամ խփեց, ծղրիտները մի պահ տապ արին, հետո մեկը համարձակ յեղավ, ձայն տվավ, մյուսներն ել միացան:

— Ծվի-տակ, ծղի-տակ:

Մի մուկ պահարանում ուշացած ընթրիքն եր անում, չերբեմն լուում, յերբ Հովնաթան Մարշը ծանր մտքերից անքուն, անկողնում աջ ու ձախ եր դառնում և դառնալիս ճոնչացնում մահճակալի չերկաթյա գոպանակները:

Գիշերվա ժամը չերկուսին, յերբ մանկության հուշերն ել մի կողմից եին կանչում վորպես ծղրիտներ, իր քեոորդի Մեսրոբի արածը վերհիշելուց հետո, Հովնաթան Մարշին վոչինչ չեր

մնում անելու, շորերը հագնելուց և բաց պատուհանի առաջ նրստելուց բացի:

Բակում խաղաղություն կար և այդ խաղաղությունը կատարյալ կլիներ, չեթե հարևան սենյակում քնած Արիստակես սրբազանի կոկորդից չելնեին այնպիսի ձայներ, վորպիսին հանում է չեղը, յերբ մսագործի դանակը խրվում է վզի փափուկ մսի մեջ:

Այդ ձայնը մի պահ ցրեց նրա մտքերը, սակայն մի պահ միայն: Ինչպես եր ուզում քնել, վոչինչ չզգալ, յիրազ ել չտեսնել՝ վոր ուղեղը հանգստանար և ուղեղի հետ ել ծանրացած կոպերը:

Մի այլ չերկրում մարդիկ հիմա աշխատում են, որը ցերեկ է: Գուցե փղշտացիք ժողովի չեն, կարողում են իր ուղարկած նամակները, հանձնաժողովները գործի չեն անցել, փորում են առուներ, վորոնցով աշխարհի մեջ ցրված բոլոր փղշտացիք կաշք ու գույքով պիտի հոսեն և շունչ առնեն Նոր-Յեթովպիայում:

Ա՞յս չերկրում... Յեվ դարձյալ պաղություն, ուղեղի ցավ, զինվորի պողպատյա սվինը: Մեսրոբը կանչում է ուռն: Մարչը աչքերը փակեց: Թվաց, թե սվինը հենց իր աչքին է ուղղած:

Մեկը շատ հեռվից աշխարհով մի կաշձեր է ցանել, կաշձերն ընկել են դեզերի վրա, խուրձերի մեջ, կաշձերը ցուք են տալիս վառողի պահեստների առաջ, ուռնքերի բուրգերի մոտ: Մի տեղ արդեն հրդեհ կա, մի այլ չերկիր պայթում է ինչպես վառողի պահեստը, կաշձն ընկնում է ներս: Կաշձերը վառվում են և այս չերկրում, ուրիշ փայլ են ստանում մարդիկ, ժամանակն այլ կերպարանք է տալիս ժողովրդին, այլ շահեր են, ալիքներն ուրիշ ավեր են ծեծում:

Բաց պատուհանից Հովնաթան Մարչը տեսավ վանքը, գրվածքները: Յերեկոյան Արիստակես չեպիսկոպոսի հետ գնացին թանգարան, տեսան ձեռագրերը և ուրիշ շատ հնություններ:

— Լեոն վեցերորդ թագավոր կլլկլիո... Ահա նրա թուղը:

Ել ինչպես արագ չբարախեր Մարչի սիրտը, արքայական արձաթապատ թրին ի տես... Արձաթը շողշողում էր: Չեռքը դողաց, չերբ մեկնեց թրի կոթին:

— Մեսրոպ, Մեսի... Յեթե տեսնեիր .. Ի՞նչ է քո պողպատյա սվինը Լեոն վեցերորդի հսկա թրի մոտ:

Ահա քեզ ազգային արժեք, դարերից մնացած մասունք, վոր հնություն չե, ընթերցող, թանգարանի մի անկյունում

ընկած իր, այլ կենդանի ուչժ: Թուրը խոսում է, թուրը պատմում է վերջին թագավորի քաջագործություններից, թուրը վոզևորում է: Ել ինչո՞ւ զարմանալ, վոր Հովնաթան Մարչը կոացավ ու համբուրեց թրի արծաթյա կոթը:

Յեղեղ է հնում Գարեգին անունով հայոց սպարապետ: Չի չեղել, —ասում են պատմաբանները: Սակայն սխալ են նրանք, վորովհետև այդ չերեկո Արիստակես սրբազանը մի առանձին ակնսածությամբ մոտեցավ գունավոր ծոպերով դրոշին, մեկնեց այն Հովնաթան Մարչին է հայտարարեց.

— Հայոց վերջին սպարապետ Գարեգնի դրոշը:

Յեվ չերբ ընդունեց Մարչը վերջին սպարապետի դրոշը և, այն է, պատրաստվում էր մտքերին սպարապետական ընթացք տալու, Արիստակես սրբազանն այնպես կանչեց ու կոացավ, վոր չեթե լսեիք, պիտի հիշեիք այն կենդանուն, վորի վրա մանուկ Հիսուսը, ձիթենու ճյուղը ձեռքին, մտավ Յերուսաղեմ՝ գիտական դիսպուտի:

Այն ժամանակ, յերբ սրբազանը պատմում էր սպարապետի մասին, կարիճը բարձրանում է և խաչթում սրբազանին: Մարչն իր շորս կողմը նայեց, բնազդմամբ վոտքերի տեղը փոխեց: Չլինի թե...

Ծղրիտները կանչում էին: Լուսարացը հեռու չեր:

Քիչ հետո Մարչը բակում քաչլում էր: Լուսաղեմի հովը շուրջում էր նրա կուրծքը, ասես՝ բարակ ցնցուղից ջուր էին մաղում մարմնի վրա և ջրի հետ ել անուշ նիհր: Բակում խաղաղություն կար: Մարչը լսում էր իր վոտնաձայնը և հետ ու առաջ քաչլում, մտքերն ել քաչլերի հետ մեկ մեկ հետ էին դառնում, մինչև Բուենոս-Այրես, մեկ առաջ՝ դեպի Նոր-Յեթովպիա:

Այդ անունը նրա համար նյարդային մարմաջ էր: Այն տափարակը, վոր փովել էր ուշաթափ ընկած մարդու պես, նրան էր սպասում: Չուր է ցանելու ուշաթափի վրա, և հարություն է առնելու սպիտակաշեն Նոր-Յեթովպիան, մի աշխարհ, ուր չի լինելու վոչինչ խորթ ու անհարազատ, վոչինչ ոտար:

Այս և սրա նման մտքերով տարված, Հովնաթան Մարչը վորպես լուսնոտ կամ ուրվական, կես գիշերին քաչլում էր վանքի պատերի տակ և շնկատեց, թե ինչպես մոտեցավ վանքի մուտքին:

Ո՛ր, սոսկում... Մարմարի վրա մի սև դունդ կուշ եր չեկել: Մեռած եր, թե՛ քնած: Սպանութչուն և այն ել տաճարի մուտքի մոտ: Մարչը մի քանի քալ ճետ արեց, ուղեց տուն դառնալ: Մարքը քրտինքը կաթիլներ շարեց նրա ճակատին: Մեկ ել սիրտ արեց, մտեցավ, ձեռքը կամացուկ մտեցրեց սև կիտուկին: Տեսավ կուշ չեկած վոտքերը, լսեց շնչառութչունը: Հանկարծ սև կիտուկը ձգվեց, մի գլուխ տնկվեց ու գլուխը խոսեց.

— Յես եմ, հայրենակից...

Մարչը ճանաչեց իր զինակից Անթանոսյանին:

...Հյուրանոց վերադառնալուց առաջ, մյուս առավոտ, Հովնաթան Մարչը Հաջի Սարաբ գյուղն ուղարկեց Աթանոսյանին և պատվիրեց պատրաստ լինել ամեն վաչրկյան, գրութչունն ստանալուց անմիջապես ներկայանալու, Նոր-Յեթովպիտ աշխատանքներն սկսելու համար: Բաժանվելիս Հովնաթան Մարչը նրան ինչ վոր խոստումներ արավ, կրկնեց այն, ինչ ասել եր Հաջի Սարաբ գյուղի տան ստվերում:

Բարեկամներից բաժանվելուց հետո Հովնաթան Մարչը սիրով ընդունեց հյուրընկալ սրբազանի առաջարկը՝ տեսնելու ավերակների մի ուրիշ վաչր, ուր թաղված ե չեղել իրեն՝ Լուսավորչի գանգը, ուր Տրդատ թագավորը դատ ու դատաստան ե արել, հին կրակատները, վերջապես ուրարտական Ռուզաս թագավորի քարե գրութչունը:

Յերբ կառքը կանգ առավ այն մուտքի առաջ, վորով քուրմերն եին ներս ու դուրս արել և հերթապահ կանգնել կրակն անշեջ պահելու, — պատերի վրա տաքացող մի քանի խլեզներ բավական դանդաղաշարժ ու ծանրարարո սողացին ու պահվեցին պատի ճեղքում, հայտարարելով չեկվորներին, վոր իրենք հող ուտող խլեզներ չեն, այլ ունեցել են հեթանոս կրակատան մոխիրը լիզող պապեր:

Ներս մտնելուց հետո, չերբ սրբազանը աչքը տնկեց պահակի բոստանի սեխերին, վորոնք կախ եին ընկել կրաշաղախի կլտորների վրա, Հովնաթան Մարչը կանգնեց, աչքերը փոքրացրեց: Տեսարանն այնքան բարդ եր և տպավորիչ, վոր անհրաժեշտ եր մի ակնթարթ աչքերը փոքրացնել, քիչ բան տեսնելու համար:

Մի ժամ հետո Արիստակես սրբազանը խոհեմութչուն համարեց նստել ստվերում, սրտի տկարութչունը պատճառ բռնելով,

և զրուցել պահապանի փոքրիկ տղայի հետ, վոր հենց մուտքի կողքին ցեխից տնակ եր շինում՝ իր վոճով, իր ճաշակով:

Իսկ Մարչը մերթ աչս քարին եր մոտենում, գնում, մի քանի քաչլ հետ կանգնում, բացականչում բառեր, վորով իր հիացմունքն եր հայտնում, վոզևորությունն ու զարմանքը:

Մի ժամ ել սպասելուց հետո, չերբ կառապանն անհամբերությունից սկսեց բարձրաձայն տրտնջալ, Արիստակես սրբազանը անհրաժեշտ համարեց տեղից վեր կենալ և ավերակների մեջ փնտոել Հովնաթան Մարչին:

Մարչը կանգնել եր սեպագրերով պատած քարի մոտ, աչքերը տնկել եր քարի գրերին: Ինչքան անքննելի և խոր խորհուրդներ ունի պատմությունը իր խորքերում պահած: Քսան չոթ դար առաջ ուրարտական Ռուզաս թագավորը կապույտ քարի վրա փորագրել և տվել իր կամքը և ասել գալիք սերունդներին հետևելալը:

— Յես յեկա կոյ ի տի չերկրին տիրեցի, քաղաք շինեցի, այգի տնկեցի, ջրանցքն եր անցկացրի և իմ աստվածներին գոհ մատուցի:

Իրավունք չունե՞ր քսան չոթ դար հետո փղշտացի Հովնաթան Մարչը նույնն ասելու, յերբ Նոր-Յեթովպիան կառուցվեր...

Միթե չերկիր չե Նոր-Յեթովպիան:

Յեվ Արիստակես սրբազանն իզուր խանդարեց նրան: Հայտնի չե՞ր, վոր սեպագիր քարի մոտ Հովնաթան Մարչը, մի մեռած լեզվով, խոսում և ուրարտական Ռուզաս թագավորի վոզու հետ, հարցումներ և անում:

Հեթանոս խլեզներն ավելի խոհեմ չեղան, քան քրիստոնյա յեսլիսկոպոսը:

Որեր անցան, հուլիսն իր հերթը զիջեց ոգոստոսին, սակայն շոգը մնաց առաջվա պես սաստիկ։

Շոգը չէր, վոր պիտի նեղեր Հովնաթան Մարչին և հետ կասեցներ նրան ծրագրած գործից։ Այն սիրտը, վոր մսագունդ չէր, այլ հայրենիքի սիրով այրվող մոտոր, որ ու զիշեր բաբախում էր և փղշտական արյուն մղում չերակներով։ Արչան կաթիլներն ուղեղին սնունդ էին տալիս՝ նորանոր ծրագիրներ հղանալու։

Մարչը տարվում էր անտառներում բնոդ բոլոր վայրի տանձն ու խնձորը պատվաստելու կալիֆորնիայից բերած ընտիր տեսակներով և թղթի վրա շարում էր զրոներ, վորոնք չերկիրը պիտի դարձնեին խնձորենու ու տանձենու մի անծայր պարտեզ։

Յեվ չերբ նրա առաջարկի վրա ծիծաղում էին, կամ մեկը, մի հասարակ պաշտոնյա, վորի չերակներում արչան տեղ հոսում է ավշանման պղտոր ջուր, յերբ այդ մեկն ամենայն անտարբերությամբ հայտնում էր, վոր չիք են և անխմաստ այն ամենը, ինչ Մարչի ուղեղն է հղանում, — Մարչը այնպիսի մոնչյուն էր հանում և աչքերն այնպես էր խոթոտում, վոր զիմացինը սարսափահար պիտի լիներ, չեթե պաշտոնյա չլիներ։

— Կգարմանամ սա մարդկանց ուղեղին վրա։ Յերկիր մը ունին, վորու նմանը չկա և չեն գիտնար չերկրին համն ու հոտը։

Այսպես էր ասում Հովնաթան Մարչը բժիշկ Յերանոսին, (հիշում էք, ջրածտի պես վոստոստալ գիտեր), այն ժամանակ, յերբ իրիկվա հովին քայլում էին փողոցի մայթերն աննպատակ մաշող բազմության հետ։ Բժիշկ Յերանոսը պիտի թեքվեր, նրա ականջին կամացուկ փսփսար, վոր ինքը վոչ միայն համամիտ է, այլ ավելին գիտե և ընկերաբար կարող է այդ ավելին միայն Հովնաթան Մարչի ազնիվ սրտին վստահել։ Ու կամացուկ պիտի հայտներ վերջին սենսացիան այն մասին. թե՛

— Հայկոսպը Աստուծոյ կարասները չի տալիս... Ահագին աղմուկ, իրարանցում:

Սենսացիայից հետո բժիշկ Յերանոսը պիտի չքանար, Հովնաթան Մարչին մենակ թողներ և անպատճառ գտներ մի ուրիշին՝ կարասների պատմությունն անելու, այս անգամ իբրև Հովնաթան Մարչից լսած լուր: Յեւ գարձջալ վստահելով վորպես ընկերական...

Անտառների պատվաստման առաջարկին մերժում ստանալուց հետո, կարծում եք՝ նրա սիրտը հանդարտ եր մնում: Ահա քեզ մի ուրիշ հեռանկար, չեկամուտի մի այլ անսպառ աղբյուր: Արմենիո բարակ աղիքները՝ վոչխարի, այծի աղիքները, վորոնցով կարելի է վոսկիներ դիզել և անբավ գանձեր, չեթե միայն հարկ չեղած ուշքը դարձվի: Իսկ աղիքները փտում են, շները լափում են վոսկին, և յերկիրը մնում է սակավարչուն ու գունատ:

Հապա վորդան կարմիրը... Հիմա չեւ մի հիմնարկի պահարանում, ուր խառնիխուռն թափված են թղթեր, ծրարներ, գործեր, թանաքի դատարկ շներ, արաբական չորացած խեթ, հիմա չեւ չեթե քրքրեք այդ պահարանը, փոշոտված գործերի մեջ կգտնեք կապույտ շապիկով մի գործ, վրան գրած՝ Փղըշ տացոց և Յեթովպացոց: Քրքրեք այդ թղթերը և դուք կտեսնեք Հովնաթան Մարչի ձեռքով գրած մի չերկար առաջարկ, վաղուց անհետացած վորդան կարմիրը վերականգնելու: Վորպիսի խո՛ր մտքեր կան, հայրենաշունչ ինչ բառեր, վորոնց վրա, ավանդ, փոշին նույնպիսի սառն անտարբերությամբ են նըստել, ինչպես և ընդունվեց նրա առաջարկը: Գտնել հին թիթեռների ձվերը, վորոնց մասին այնքան գովեստով խոսում է այսինչ մատենագիրը, այդ ձվերը գտնել և բազմացնել կարմիր թրթուրներ, վորոնց մարմինը տալիս եր արնագույն ներկ:

Սակայն փղշտական մոտորը բարախում եր վո՛չ միայն վորդան կարմիրի, անտառի պատվաստման և աղիքների համար: Հիմնականը, վորի շուրջը դառնում եր նրա ուղեղը, ինքը և իրեն հետ եւ Անթանոսյանը, Նոր-Յեթովպիան եր:

Այդ որը, չեբբ Անթանոսյանը բարձրացավ սանդուղքով, ի քիչ հետո հյուրանոցի սպասավորը տեսավ, թե ինչպես Մարչը գնդակի արագությամբ իջավ սանդուղքով, միջանցքից թռավ դուրս չեկավ, ճանապարհը կորցրած ծիծեռնակի պես:

— Ի՞նչ պատահեց:

Անշուշտ սպասավորի պարտքն էր բարձրանալ վերև, տեղում ստուգել չեղածը, սակայն նա թերացավ իր պարտքը կատարելու և մեկնվեց հերթապահի բազմոցի վրա այնպիսի դիրքով, վոր կարծես՝ հայտնում էր.

— Միևնույն է, վեր չեմ կենալու:

Այն ժամանակ, յերբ Անթանոսյանը սենյակում նստած ճակատն էր շոյում և քրտինքի փոշոտ կաթիլները ճակատից սրբում, հենց այդ ժամանակ Հովնաթան Մարչը կանգնել էր այն դռան առաջ, վորի վրա գրված էր առանց գեկուցման... Անհամբերութունից նա քայլում էր նախասենյակում, մեկ էլ հանկարծ կանգնում, ունքերը կխտում և ձեռքը, սպիտակ, փափլիկ ձեռքը մեկնում այնպես, կարծես՝ անտես մի մարդու վրշտով ու զայրացած հարցնում էր.

— Ի՞նչ արիք...

Յերբ Հովնաթան Մարչը նստել էր աթոռին և հարցնում էր պետին Նոր-Յեթովպիո հողերի մասին, հենց այդ նույն ժամանակ հյուրանոցում Անթանոսյանը կատարում էր սկսնակ դերասանի այն վարժությունները, վորպիսիք արդեն սերտել էր Հովնաթան Մարչը նախասենյակում:

— Դավաճանությո՞ւն... Չար նախանձ, վոր կրծում է վորդի պես... Մեզ խոստանա՞լ և հետո՞...

Այդ հետոն հենց այն էր, վորի համար էլ Անթանոսյանը այդ որը յեկել էր, արևի տակ փոշի կուլ տալով: Հաջի Խարաբ գյուղում ծանոթ մի գյուղացի ծիծաղելով հայտնել էր.

— Ե՛, վարժապետ, հողերդ հրեն չափում են, ջուր են բերում, ջուր...

Յեվ ի՞նչ տեսավ Անթանոսյանը հենց այն հարթության վրա, ուր պիտի լիներ Նոր-Յեթովպիան: Այստեղ, այնտեղ ձողեր, սեպեր, չերկաթյա շղթաներ, մարդիկ, վորոնք աշխատում էին, գրում, չափում: Ինչո՞ւ արևը չզարկեց նրանց և գետինը ձեղք չարեց կլանելու այն մարդկանց, վորոնք սառնարյուն, առանց վոզևորության կտրատում էին դաշտը, ձևում, ինչպես զինվորական մասերից կապալով պատվեր վերցրած դերձակ:

Անթանոսյանը դիմեց նրանցից մեկին, վոր քարտեզի վրա ինչ վոր գիծ էր քաշում և հաշիվներ անում:

— Իսկ ո՞ւր մնաց Նոր-Յեթովպիան:

— Մենք գեո հաշվում ենք, ձևում: Կուղենան, թող շինեն, —  
ասաց մարդը:

— Պղծվեց, պղծվեց փրկության կղզին ..

Ի հարկե Անթանոսյանը խոհեմություն ունեցավ այդ բա-  
ռերը մտքում ասելու և շրթունքները կրծոտելով հետ դարձավ  
Հաջի Սարար և այնտեղից ել հյուրանոց: Սպասավորի տեսածը  
կատարվեց նրա գալուց տասը րոպե հետո:

— Այդ հողերը կան վոտոգման մեր ծրագրի մեջ: Հարուստ  
են, բարեբեր և մեծ ծախս չի պահանջվում...

Այսպես պետն եր խոսում:

— Կը խնդրեմ հրամայեք Նոր-Յեթովպիո տեղը պարապ  
ձգեն: Յես հեռագիր քաշած եմ, այսօր վաղը պատասխանի կըս-  
պասեմ: Բալիքչանեն լուր ունիմ, վոր կլոր գումար մը վորոշած  
ե հատկացնել Նոր-Յեթովպիո շինության... Դրամը կտրվի ամե-  
նանվազ տոկոսով, գրեթե անվերադարձ: Յես արդեն գրած եմ  
ուր հարկ ե, շուտով հանգանակություն սկսելու: Լուր ունիմ, վոր  
Արգենտինի մեր հայրենակիցները սիրահոժար են այդ ձեռնար-  
կության և կփափագին որ առաջ հայրենյաց հողի վրա տեղա...

— Գիտեմ, գիտեմ, — ասաց պետը: Ել ուրիշ ի՞նչ պատաս-  
խան կարելի չեր տալ:

— Նոր-Յեթովպիան պիտի ունենա չորս թաղամաս, հա-  
մեստ յեկեղեցի մը, մանչերու և որիորդաց վարժարան: Բարե-  
կամս ինձի կգրե, վոր յեթե այս գործը գլուխ բերվի, ինքը  
հանձն կառնե նոր քաղաքի շինության համար պետք չեղած գա-  
մերը ձրիարար տրամադրելու: Յերեկի հայրենասեր ե բարե-  
կամս, և չեմ կասկածեր, վոր...

— Կով: Յերբ եք մտադիր սկսելու քաղաքի շինությունը:

— Աճապարելու հարկ չկա կարծեմ: Նամակներ դրկած եմ  
թե Բարեսիրաց Մարմնին և թե ազգային այլ և այլ հիմնարկնե-  
րու: Ամեն տեղ ալ խանդավառությունը մեծ ե և չես կկարծեմ,  
վոր նյութական խոշոր ոժանդակություն մը պիտի ըլլա, յեթե...  
Յեվ ատկե գատ (ներեցեք, վոր կխլեմ Չեր այնքան թանկագին  
ժամերը) վորոշած էնք ցուցակագրություն սկսիլ: Ամենեն կա-  
րևորն այդ ե, թե քանի փղշտացի կա չերկրեն դուրս և ներս,

վորովհետև Բալիքյանի բարեհաճ ցանկութիւնն և քաղաքի մեջ տեղավորել փղշտացոց և...

— Իսկ...

— Այդպէս պաղ մի նայեք գործին: Յես մարդիկ զրկած եմ զանազան կողմեր իմանալու, թե ուր կմնան փղշտացոց և չեթովպացոց բեկորները: Յեթե դուք անգամ մը տեսած ըլլայիք, թե ինչ պատվական չերկիր եր փղշտացոց աշխարհը, Յեթովպիա քաղաքը: Մատթեոս Ուոհայեցին կը վկայե, վոր ութերորդ դարին Յեթովպիան ուներ...

— Գիտե՞ք ինչ: Այդ ամենը բարի... Մենք մեր խոստումից հետ չենք կենա: Կառուցեք այդ քաղաքը կամ գյուղը և ինչքան շուտ, այնքան լավ:

Պեարը ձեռքը գրչին այնպիսի վճռականութեամբ մոտեցրեց, վոր Մարշը մտքում ասաց.

— Ալ լմնցավ, յեկիր ու նորեն խնդրե:

— Ուրեմն խոսք կուտաք, վոր հողը մեզի պիտի հատկացնեք և այն ժամանակ...

— Այո, ձերն և, կսպասենք...

Ել ուրիշ ինչ եր մնում Մարշին, չեթե վոչ ճեպընթացի նման փողոցում վոչ վոքի և վոչինչ չնկատելով հասնել հյուրանոց և հասնելուց անմիջապէս գրկախառնվել հավատարիմ Անթանոսյանի հետ, վորը նրա բացակայութեան ժամանակ Արմենիո պատմական անցյալը վերաքննելով, տասնմեկերորդ դարի շեմքին եր, յերբ Մարշը բացականչեց.

— Փրկված և Նոր-Յեթովպիան...

Այդ որը Անթանոսյանն ու Մարշը միասին նախաձեռնեցին: Ճիշտ և, բժիշկ Յերանոսը մոտեցավ նրանց, բայց Անթանոսյանին կասկածանքով դիտելուց հետո հեռացավ այն արտահայտութեամբ, վոր ունենում և մարդ, չերբ փողոցի ծայրին չերկացող մեկին իր մտերիմին նմանեցնելով, արագաքայլ վազում և, մոտենում և...

— Ներեցեք, դուք այնքան նման եիք...

Սոսակցութիւնը փղշտացոց մասին եր: Մարշը հանձնարարեց Անթանոսյանին փղշտացիներ և չեթովպացիներ գտնել և հայտնել, վոր քաղաքը հիմնովում և ամենաձեռնաու պայմաններով:

— Հայրենակիցները դրամ կուտան... Ամուսնացողներուն՝ մրցանակ: Տասը դավակ ունեցող մայրերուն՝ ցմահ կենսաթոշակ: Փոխասաց մանուկներուն՝ ձրի ուսում... Ցուցակն աճապարանոք ինձի դրկե, հայտնեմ ուր վոր անկ ե... Չմոռնամ ըսելու, վոր Յեթովպիո բնակիչներու կրճքին վրա նշան մը պետք ե կախել, վրան Բալիքչյան Անդրեասի անունը գրված:

Անթանոսյանն ուսում եր: Անթանոսյանը ժպտում եր և նրա հոգին թոկը կտրած և պարտեզն ընկած հորթուկի պես մեկ վեր եր թռչում, մեկ ցատկոտում խոտերի վրա և ուրախությունից բառաչում:

— Տեր Հուսիկին ալ չես կհայտնեմ, վոր պատրաստ մնա:

Այդ որը չեթե մեկը քաղաքից հեռացավ թևեր առած, չեթե մեկը մինչև կայարան հասնելը աչքերը չերկնքից ցած չխոնարհեց և գնացքում որորվելիս տոմսակի փոխարեն կ ո ն դ ու կ տ ո Ր ի ն Հովնաթան Մարչի աչցետոմսը մեկնեց, — այդ մեկը Անթանոսյան Հմայակն եր, ապագա մեծ քաղաքի հիմնադիրներից, վոր նոր քաղաքին եր նվիրել սիրտն ու հոգին:

Հյուրանոց գալով Հովնաթան Մարչը սեղանի վրա մի քանի նամակներ գտավ և մի հրավիրատոմս՝ մասնակցելու Գրասիրաց Ընկերության հավաքույթին, նվիրված քանքարավոր քնարերգակ Տաղավարյանի ծննդյան հարյուրամյա տարելիցին: Մարչն ազահությամբ բաց արեց կապույտ ծրարը:

— «... Կգրեք, վոր հաջողակ եք: Հոս Ձեր անունին շուրջը կդառնա ամեն ինչ:... Սիրտս վորքան ուրախ ե, չեթե գիտնայիք...: Կհիշեմ որը, չերը մեկնեցաք և կմխիթարեմ զիս այն մեծ գործով, վորուն զեկավարն եք: Նորություններ չկան... Անցյալ որը Ձեր բնակարանը գացինք: Ամեն ինչ առաջվա պես ե: Կուղարկեմ անթիվ վողջույններ...: Բախտավոր սեպեցեք Ձեզ, վոր հայրենի հողի վրա կկոխեք: Հանգանակությունն արդեն սկսած ենք: Գուժար մը կա: Գրեցեք՝ մեր հայրենակիցները պետք ունին հագուստներու, կոշիկներու... Բավական հավաքած ենք...»

Մարչը մի անգամ ել նայեց նամակի այն տողերին, ուր ասված եր «Սիրտս վորքան ուրախ ե. . Կհիշեմ որը...»: Մարինե Քրաջյան, վոսկեգանգուր խոպոպիկներ և շրթունքներ, վորոնց նմանը չկան ովկիանոսի յերկու ափին ել: Բնակարանը... Յեվ այլն, և այլն: Դեպքեր, վորոնց վերհիշելիս Հովնաթան Մարչը

իրավունք ունեւր մահճակալի վրա պառկելու և աչքը անթարթ հառելու նամակին: Սպիտակ, փոքրիկ ձեռք... Գրում ե... Գուցե հենց այստեղ ժպտաց: Բայց ինչո՞ւ չի ասում այդ մասին կապույտ ծրարը, վոր կտրել է նույն ճանապարհը ե հասել Փոքր Ասիայի հեռավոր խորքը:

Յերկրորդ նամակն ավելի թե տվավ Մարչին: Գրողը ընկերն եր, Բարունակ ձիթեչյանը, Յեթովպական մամուլը թերթի խմբագիրը: Ինչքան են միասին ճակատամարտել և ի՞նչ որեր են ապրել: Նամակից ավելի լավ ազդեց նրա վրա իր նկարը, և թերթում տպած հոդվածը, վոր Բարունակն ուղարկել եր նամակի հետ:

Ահա նա, Հովնաթան Մարչը... Լայն ճակատ, մազերը խնամքով սանրած գլուխ և աչքեր, վորոնց մեջ չեթե կայծակներ չեին փայլատակում, համենայն դեպս հանգած մոխիր ել չկար: Իհարկե կրկիշեն ավերել եր դեմքի այն արտահայտությունը, վոր ունեւր Հովնաթան Մարչը և վորի մասին դժվար է գրել: Միևնույն ե, շես տա միամիտ այն վիշտը կամ վշտոտ միամտությունը, աչքերի կապույտի մեջ քարացած այն արտահայտությունը, վորպիսին կա ուղտի աչքերում, չերբ բեզարած նստում ե և տատասկ վորոճում:

Ի՞նչ եր ասում Յեթովպական մամուլը Հովնաթան Մարչի մասին... «Ծնած ե Յեթովպիա քաղաքի մեջ: Առաջին կանչի հետ ան հայրենիքի փրկության մասին ե աղաղակած... Յով ահա վերջին հերոսությունը: Ծամբա յելնել հեռո՞ւ, բայց հարազատ աշխարհ մը, ուր կարիքի մեջ կտառապին... Հսկա ծրագիր մը, վորուն ի գլուխ բերելուն անտարակույս ենք, քանի գործին դեկավարն ե ազգանվերն Հովնաթան Մարչ, վորուն խիզախ ճանապարհորդությունը, վտանգներով և անակնկալներով լեցուն, մոռնալ կուտա մինչև հիմա յեղած նման դեպքերը»:

Հասկանո՞ւմ ես, Հովնաթան Մարչ...

— Քո անունը պիտի հիշվի դարեդար:

Այս ամենը կարդալուց հետո հանցանք ե միթե մազերը շոյել, կանգնել պատուհանի առաջ, մերթ հայելու մեջ սեփական դեմքը դիտել, զանազան դիրք ընդունել և ապա հայելին դեն նետելով աչքերը հառել հեռվի մշուշում չերևացող Արարատին և

հղանալ այնպիսի մտքեր, վորոնցից սիրտը բարախում ե սովորականից արագ:

Յեթե մեկը դռան ճեղքից նայեր, կտեսներ, թե ինչպես Հովնաթան Մարչը ճեմում եր սենյակում, մերթ կանգնում, հոնքերն իրար տալիս և ինքն իր հետ խոսում կամ հանկարծ հետ դառնում և աչքը լվացարանին դարձնելով, շրթունքները շարժում: Յեթե այդ բաները դուրս թռնեին... Կցնդեր աշխարհը, աշխարհի հետ ել անթիվ, անհամար բազմություն: Լավ եր, վոր դուռը փակ եր:

Սպասավորը զարմացավ, չերբ մի քիչ հետո, Հովնաթան Մարչի մաքուր սրբած կոշիկները ձեռքին, ներս մտավ:

— Կնիկը մեռել ե, — մտածեց սպասավորը, չերբ դուռը դրեց:

Բայց այդպես մտածելը միայն սպասավորի տկարամիտ լինելն եր ցույց տալիս: Ինչո՞ւ պիտի լաց լիներ Հովնաթան Մարչը, ինչո՞ւ նրա խնամքով սանրած մազերը պիտի ցրվեին, խառնրվեին իրար, ինչո՞ւ նա գլուխը պիտի առներ ձեռքերի մեջ և շրթունքները կրծոտեր, չերբ քիչ առաջ ամբոխներին շանթանրման բաներ եր շարտում և Արարատին ի տես շոյում մազերը:

Յերրորդ նամակը, կարճ ու չոր, չերրորդ նամակը, վորի տակ ստորագրել եր Անդրեաս Բալիքչանի գոհարազարդ ձեռքը, — այնպիսի արհամարհանքով եր նայում Հովնաթան Մարչին, ասես՝ ուզում եր ասել.

— Յես թուղթ չեմ, այլ իմ տիրոջ հրամայող ձայնը...

«...Հատակագծեն կերևա, թե Յեթովպիտ տեղը խորդ ուրորդ ե: Հովոտ տեղ ե կըսեն այդ յերկիրն ճանչցողները: Հող կտառապին բազմատեսակ հիվանդությամբ և մանավանդ վոր գազաններ կան մոտերը: Հարմար տեղ մը չկըցա՞ք ընտրել: Հայրենակիցներու ցանկը դրկեցեք՝ նայիմ: Տեսա՞ք Վեհափառ Հայրը, որհնությունը առի՞ք: Նյութական ոգնություն շատ մի հուսաք, գործերնիս հաջող չեն երթար: Քաղաքին տեղը շտկելե հետո հայտնեցեք ինձի: Խնդրածս չմոռնաք բերել: Դուք վերցուցեք մայր Արաքսի ջուրեն: Նաև տեղեկացուցեք բուրդի գինները: Լավ գորգերը քանի՞ով կարելի չե գնել»...

Այս եր Բալիքչանի նամակը: Ի՞նչ, միթե ցնորք ե նոր-Յեթովպիան և ո՞վ ե ասում, թե տեղը հարթ չի: Յերբ Հովնաթան

Մարչը տեղը նստեց, աչքերը տրորեց, նա ուզում էր ասել, վոր յեթե ամպը ծածկում է արևին, այդ չի նշանակում, թե արևը գոյութունն չունի:

Ճաշից հետո նրա գրած նամակները հենց այդ էին ապացուցում, վոր արևը գոյութունն ունի, վոր յերկիրը կարող է կորցընել իր ուղին և տիեզերքի անհունության մեջ հոլի պես ֆոռալ, բայց Նոր-Յեթովպիան պիտի լինի:

...«Մերայնոց յերազն է այս, վոր մարմին կառնե, սիրելիդ իմ Բարունակ: Ամեն կողմի շնորհավորանք և խնդակցութունն կստանամ այս ձեռնարկած գործիս համար: Յուցակագրումը շուտով կլմննա: Ստույգ է, վոր հազարե ավելի փղշտացի ու յեթովպացի կապրին այս յերկրին մեջ: Մարդ զրկած էմ մաքիներու չետեհն: Ժողովրդին պետք է մաքիներ տալ: Ծրագրած էմ հոչակապ հանդես մը սարքել հիմնադրումի որը: Ա՛խ, յեթե գիտնայիր, սիրելիդ իմ Բարունակ, սքանչելի յերկիր է սա Արմենիան: Մինակ ժողովրդին դաստիարակության գործը սխալ կընթանա: Ամենքն ալ վարակված են տեսակ մը թուլնով. շատ անգամ ըսածնին չես հասկնար, ցեղակիցդ կխոսի, թե՞ ոտարական: Հոգ չե, յերկիրը կմնա, հոչակապ վանքերը: Քեզի գրած էմ Եջմիածին կատարած ճամբորդությանս մասին: Հոս ալ կան սիրանվեր հայրենակիցներ: Նոր-Յեթովպիան պիտի ըլլա յերկրին սիրտը և բոլոր յերակները պիտի բացվին անոր մեջ: Անգամ մը տես պարոն Բալիքյանին և համոզե, վոր գործը զո՞հ կը պահանջե ամենքես, ըսե՛ թող հոգ չընե: Քաղաքին վայրը շատ աղվոր է: Հոս պակասութունն շատ կա: Ուրիշ անգամի հետաձգելով այս մասին գրելս, ազնիվ սըրտիդ կապավինեմ և կուղարկեմ Նոր-Յեթովպիո հողեն բոլոր հայրենակիցներուս բյուր վողջույն: Ի՞նչ կընե Բարեսիրաց Մարմինը: Հանգանակությունը չմոռնաք...»

Յեթե նա կարող էր զեղել իր զգացումները Բարունակ Ճիթեչյանին գրած նամակում, նույնը չէր կարող անել Բալիքյանի հանդեպ: Բրդի և գորգի գները հաղորդելուց հետո, Հովնաթան Մարչը Եջմիածնից ստացած սրհնության թղթի մասին հայտնեց:

— «Յերջանիկ պիտի ըլլամ անձամբ մատուցելու Ձեր անվամբ ստացած թուղթը և Մայր Աթոռի սրհնությունը»:

Այդ գրելուց հետո, Հովնաթան Մարչը հայտնեց, վոր Բալիքյանի բոլոր ցանկությունները կկատարի և չենթադրելով,

վոր արդեն Բալիքչանի ներսում հայրենասիրութիւնը փոթորկում է, նամակի այդ մասն ընթերցելուց, — Մարչն զգուշութեամբ ավելացրեց

«Նյութականի կարիքն սկզբին պիտի ըլլա, անկե վերջ իրենք կը հատուցանեն Ձեզմե ստացած դրամը: Ամեն որ հարյուրավոր աղերսագիր կստանամ Ձեր անունով դրամ: Ամենքն ալ հայրենակիցներ են, կը փափագին բնակիլ Նոր-Յեթովպիայում: Պանքային միջոցով դրամ փոխադրեք... Հիմնադրումը սեպտեմբեր 4-ին, Ձեր ծննդյան օրը: Այդպես ե հայրենակիցներու միահամուռ ցանկութիւնը: Կը լսեմ, թե կառավարութիւնը ևս վորոշած է Ձեզ շնորհակալութեան թուղթ ղրկել: Ձեր անունը մեզի վահան դարձուցած ենք և հաջողութեամբ կաշխատինք: Նախորդ թվակրիս մեջ հիշած եի, վոր ուսուցիչն ու քահանան պատրաստ են: Յերկուքն ալ չերևելի հոգիներ են, մեր նախնի բարքերով: Կը հուսամ, վոր դրամի առաքումը չեք ուշացներ: Հայրենակիցներու վորոշմամբ ամենքն ալ կրճքին վրա Ձեր անունը փորագրած նշաններ պիտի կախեն հիմնադրումի օրը: Հինգ արու մանչ ցուցակ ըրած են, վորոնց մայրերու անզուսպ ցանկութիւնն է կնքել զանոնք ավազանի մը մեջ Նոր-Յեթովպիայում և հինգին ալ անվանել Անդրեաս: Կը հուսամ, վոր Ձեր անունը չեք մերժիլ շնորհելու փրդըշտական մանուկներուն...»

Այս ամենը գրելուց և ծրարները կնքելուց հետո Հովնաթան Մարչը թեթևութիւն զգաց: Սե ամպն անցավ, և վոզևորութեան արևը նորից շողաց:

— Խելուել ե պոլսեցին, — մտածեց սպասավորը, չերբ Հովնաթան Մարչը սուլելով իջավ սանդուղքներով և քայլերն ուղղեց դեպի այն շենքը, ուր գրասիրաց հավաքույթը պիտի տոներ Տաղավարյան բանաստեղծի հարչուրամյան:

Հովնաթան Մարչը դռնից ներս մտնելուց ստիպված չեղավ լուցկի վառելու, մութի մեջ դուռը գտնելու համար: Յեվ վորքան մեծ չեղավ նրա զարմանքը և ուրախութիւնը, յերբ մուտքի մոտ տեսավ սպիտակամուրուս մի մարդու և բժիշկ Յերանոսին: Բրժիշկն իսկուչն մոտ վազեց, նրա թևից բռնեց:

— Ձեզ եինք սպասում: Մենակ կղժվարանայիք սրահը գրտնել:

Յեվ մինչև Մարչը աչքերը բաց ու խուփ անելով կվարժվեր միջանցքի մուտքին, բժիշկ Յերանոսը կարկուտի պես վրա տվավ:

— Մոռացա ծանոթացնել, Դրաստամատ Սաչատրյան, չե-  
րեի...

— Ա՛հ, ինչպես չե, շատ ուրախ եմ...

Ծերունին չկարողացավ բռներն իրար կապել: Յեվ մյուս միջանցքն անցնելով, ուր ճրագի աղոտ լույսը կար, Մարչը ձեռքը մեկնեց և թոթվեց Դրաստամատ Սաչատրյանի պառավ ձեռքը, վոր 19-րդ դարու վերջին գրել էր Պե տ ր ո ս Գե տ ա դ ա ր ձ կ ա-  
թ ու դ ի կ ո ս ի հ ր ա շ ա գ ո Ր ծ ու թ չ ա ն ց պ ա տ մ ու թ չ ու ն ը ,  
իսկ 20-րդ դարում՝ այդ նույն պատմութչյան չերկրորդ հատորը: Յեվ այդ հատորի հրատարակութչյան հոգսն էր, վոր բժիշկ Յերա-  
նոսի զրդմամբ Սաչատրյանին մուտքի մոտ սպասեցնել էր տվել մոտ կես ժամ:

Սրանը գետնափոր քարայրի յեր նման և չերբ Մարչը ներս մտավ, ներկա յեղողների մեջ մի շշուկ անցավ: Բժիշկ Յերանոսը սարկավագի պես աչքերը խուփ, ծանոթ շարականը կարդաց.

— Խոչեցչյան Սերովբ, մեր վաստակավոր պատմաբանը: Ան-  
շուշտ գիտեք:

— Հարկավ, մի՞թե, շատ ուրախ եմ...

— Ահա կովկասի Հայոց կուլտուր-կրթական Ընկերութչյան նախագահ Շահնազարյանը...

— Ա՛հ...

— Ինչպես էք, ինչպես էք հավանում մեր չերկիրը...

— Գրիգոր Լեոնական, վեցերորդ կամավորական գնդի հրա-  
մանատար, Բասենի անպարտ հերոսը, այժմ Գրասիրաց Ընկերու-  
թչյան քարտուղար:

Լեոնականը Հովնաթան Մարչի ձեռքը սեղմեց զինվորականի կտրուկ շարժումով, ըստ վաղեմի սովորութչյան զինվորական պա-  
տիվ տալով նրան:

— Կհիշե՞ք ձեր բոլոր զինվորներուն:

— Մեկ-մեկ:

— Անթանոսչյան Հմայակին կհիշե՞ք:

— Վախկոտ զեղերտիր: Մի անգամ պիտի գնդակահարելի:

Լեոնականը ձեռքը գրպանը տարավ, թեև գրպանում կրա-  
կելիքը միայն լուցկու տուփն էր: Սակայն նկատելով Հովնաթան Մարչի հանկարծակի գալը, ժպտաց ու ավելացրեց.

— Բայց լավ յեղավ, վոր աչքիս շերևաց: Հետո իմացա, վոր հանցավորը ուրիշն էր...

— Տեսնում եք... Յես միշտ ել ասել եմ, վոր դիպվածը մարդու կյանքում վճռական է,— ասաց բժիշկ Յերանոսը, թեկուզ յերբեք այդպիսի բան չեր ասել:

— Սա չեղ մեր հարգելի հայրիկը: Իր ամբողջ կյանքը նվիրել է հայրենիքին,— ասաց բժիշկը, առաջ հրելով կարծիք ու նիհար մի ծերունու, վորի մի կողմ ծածկ վիզը խեղճ սցնում էր դեմքը ու տալիս նրան այնպիսի արտահայտութուն, վոր ասում էր.

— Հիմա չես տաշեղի կտոր եմ: Ինձ հանգիստ թողեք:

Քիչ հետո հավաքույթն սկսվեց: Նախագահ Շահնազարյանը (Կովկասի Կուլտուր-Կրթական) նիստը բաց արեց այնպես թույլ ու բեղարած, կարծես ուզում էր ասել, վոր առանց նրա խոսելու չեղ նիստը իրեն-իրեն կբացվեր:

Տաղավարյանի մասին խոսեց թեմական դպրոցում քսան տարի հայոց գրականության դասատու Տեր-Հովնանյանը, վորի միալար ու տրտում նվազի պես հնչող բառերը շատ շուտով քնարեր չեղան պատմաբան Խոչեցյան Սերոբի, Պետրոս Գետադարձի և ուրիշ մի քանիսնների համար: Նույնիսկ Հովնաթան Մարչը հորանջեց: Յեվ յեթե Գրիգոր Լեոնականը ստեպ-ստեպ հազում էր, անշուշտ, այդ արթուն մնալու քողարկված միջոց էր, թշնամուն չմատնելու համար իսկական նպատակը:

Ծափահարութուն չեղավ: Բայց այդ ծափահարութունը կարելի չեր բացատրել նաև ճառը վերջանալու ուրախությամբ: Յեվ յերբ բժիշկ Յերանոսը քնած աչքերը բաց ու խուփ անելով, ծանրացած գլխի համար մի հենարան էր փնտռում, հանկարծ Հովնաթան Մարչը մոտեցավ ամբիոնին: Ննջողներն սթափվեցին:

— Հայրենակիցներ, այսոր մեծ մարդու հարչուրամյա տարելիցին իմ խնդակցությունները կհայտնեմ ովկիանոսի մյուս ամիսը ապրող ցեղակիցներու կողմեն: Վնչ, մեռած չե այն մեծ մարդը, վոր քունեն զարթեցուց այս ժողովուրդը և ըսավ. չեիր, ազգ, ժամը հնչեց...

Բժիշկ Յերանոսը այնքան փոքրացավ... Յեթե հնար լիներ սեղանի տակ պահվելու, ապա կամացուկ դուրս ծլկելու: Ինչեր է խոսում, յեթե լսեն...

— Այն, հնչեցուց շեփորը և վոտքի յելավ ցեղը, նվաճելու իր հաչրենի անդաստանը, ուր խուժադուժ...

Բժիշկ Յերանոսը փողոցում այնքան արագ եր վազում, ասես՝ մահամերձ հիվանդ ուներ, վորի վայրկյանները հաշված են: Նրա հետևից, բայց փողոցի մյուս մայթով, վոտները քարշ եր տալիս Դրաստամատ Սաշատրչանը, յերկրորդ անտիպ հատորի հեղինակը: Իսկ Հովնաթան Մարշը մոնչում եր, թափահարում գլուխը, գլխի հետ ել մազերը.

— Դարերը կանցնին վորպես տարիներ, տարիները կթվան ժամեր, ժամերը վայրկյանի արագությամբ կսլանան, և հավիտենական յերջանկությունը իր թևերը կփռի այս յերկրի վրա...

Գրիգոր Լեոնականի հազը սաստկացավ: Դահլիճում Սոչեցյան Սերոբը շեր յերևում: Շահնազարյանը (կովկասի կուլտուրկրթական) հաչացքն իզուր եր ման ածում նոսրացած շարքերում, փոխնախագահ Ալլանվերդյանին գտնելու և իր տեղը նրան դիջելու համար: Փոխնախագահը տուն եր հասել ուրիշ փողոցով և հասնելուց գլխին թաց շոր եր դրել:

— Ի՞նչ և Նոր-Յեթովալիան, սիրելի հաչրենակիցներ, յեթե վոչ ցեղի տառապած հոգու համար սպեղանի, փրկության կղզի, գլխովին վոչնչանալու վտանգի դեմ: Սրբազան մի անոթ, ուր պիտի պահ տանք մեր ինքնությունը, թագստոց և ամուր պատասպարան, յեթովալական, փղշտական ցեղերի բեկորները փլուզումե դերժ պահելու: Այս պահին...

Գրիգոր Լեոնականը հազաց, սկսեց շրթունքները կրծոտել: Դահլիճի կիսամութում վոչ մի գլուխ չեր յերևում, իսկ Հովնաթան Մարշը խոսում եր, բառերի հետ թուքի կաթիլները թրուչում եին նրա բերանից և աշխարհին ավետում նոր, շլաված պատգամներ:

Կառքը ճանապարհով գլորվում եր չեզան սայլի դանդաղությամբ, վորովհետև վոչ միայն ճանապարհն եր վատ և կառքի բասորները խախուտ, մի քանի տեղից յերկաթե լարերով կապկըպված, վոչ միայն ձիերն եին լղար, աչքերը ճպոտտ, պոչի մազերը նոսր ու կողքի ճաղերը ցանկապատի փայտերի պես դուրս ցցված, — այլև ծանր եր այն բեռը, վոր բարձած եր կառքին:

Բեռ ե ասվում, վորովհետև զանազան պայուսակների, տոպրակների, թղթի փաթեթների ու կողովների միջից հազիվ եին յերևում չերկու գլուխ, վորոնց տերերին եին տանում լղար ձիերը բոլոր կապոցներով հանդերձ, վորոնցից մեկի մեջ տեղաշոր եր, մյուսի մեջ ուտելիք, կողովների մեջ սեխ ու ձմերուկ և այն բոլոր բարիքները, ինչ ոգոստոս ամսում տալիս ե Արարատյան դաշտը:

Յեթե ուշադրությամբ դիտեր մեկն ու մեկը փոշու մեջ գլորվող կառքն ու կառքի մեջ նստողներին, այդ մեկն անպատճառ պիտի տեսներ, վոր բարակ ու յերկար վզի տեր մարդը ուսին վորսորդական հրացան ուներ:

Ընթերցողն արդեն գուշակեց, վոր ուղևորներից մեկը Հովնաթան Մարչն եր, մյուսը՝ հրացանակիրը՝ Անթանոսյան Հմայակը, և վորովհետև ձիերի դուռնը հարավ եր դարձրած, ուրեմն և պարզ եր, վոր նրանք Նոր-Յեթովպիա չեին գնում, այլ մի ուրիշ վայր:

Ճանապարհին, ինչպես ասում են, կառքը բարև չեր տանում, բարև չեր տալիս անցնող ու դարձող քարավաններին, թեկուզ բոլորն ել զարմանքով եին նայում իրերի մեջ թաղված ուղևորներին:

— Շոգից չեն ճաքում, — հարցրեց Նազարապատ գյուղացի մեկը, չերբ կառքն անցավ կողքով:

Մարչը շտեց նրա հարցը, իսկ Անթանոսյանն այնպիսի հա-

չացք նետեց կողովներէ արանքից, ասես՝ ուզում եր նազարապատցուն տեղն ու տեղը խանձել:

Հովնաթան Մարչը մտածում եր: Ելի նույն հարթութունը, վորի վրա անպետք մացառներ կային, չորացած փշեր, իսկ ուր ջուր եր հասնում, հողը կատաղի արգավանդութուն եր ցուցադրում՝ փարթամ այգիներով, բամբակի ու ցորենի արտերով: Ի՞նչպես ե, վոր նիհար, տպեղ ու կեղտոտ շորերով կինը ծնում ե զարմանալի գեղեցկությամբ մի մանուկ, վորի կաթնագույն շըրթունքները ծծում են մոր չորացած, պարկերի պես կախ ընկած ստինքները: Ծծում ե մանուկը, թաթով շոյում այդ պարկերը և ժպտում: Ի՞նչ հզոր հյութ կա սմբած մոր մարմնի մեջ:

Յեթե յերկիրը դռն բաց նիստ լինի, հավաքվեն նրանք, մաքուրարչուն յեթովպացիք, իրենց վրանները զարկեն տափարակի վրա և կաթնակեր մանուկների պես կախ ընկնեն մոր պտուկներից, աճեն, բազմանան, յերկիրը դարձնեն յեթովպանոց...

Նախընթաց յերեկոյան նկուղի պես մութ թեյարանում, ուր Ավետիս աղան ձեզ վեյով սուրճ եր յեփում և պոլսո սուրճ հրամցնում պատվական հյուրերին (վորոնց համար չեր, իհարկե, պատից կախած աղղը՝ ապառկ վոչ մեկի, չնք դիմանար), — նախընթաց յերեկոյան սրճատան Գրիգոր Լեոնականը մաշված, տեղ տեղ թղթով կպցրած քարտեզի վրա (վեցերորդ կամավորական գնդի շտաբ) ցույց եր տալիս, թե վորտեղ ինչեր կարելի յեանել և ինչեր են արված այն ժամանակ, յերբ... (Պարզ չե՞ մի թե) և դեռ ինչեր պիտի արվեն, յեթե մեկ ել... Խոսքը բախտի անիվի մասին եր:

Բժիշկ Յերանոսը համամիտ լինելով Լեոնական Գրիգորին, խոսում եր ցած ձայնով: Թեկուզ նրա խոսքերը ըստ մեծի մասի այո, իհարկե եին, բայց և այնպես դավադրության աղղանշանի բառեր եին թվում իր, բժիշկ Յերանոսի և Անթանոսյան Հմայակի համար, վոր նախկին հրամանատարի հանդեպ տածած ակնածանքից, նստել եր հեռվում և սուրճը փոքր ումպերով կուլ տալով, նայում եր քարտեզի վրա խոնարհած գլուխներին այնպիսի հաչացքով, վոր ասում եր.

— Պանծալի քաջեր, հերոս հայրենչաց...

Մարչը արժարժում եր մտքեր, վորոնցից Ավետիս աղան ել կսարսափեր, յեթե լսեր ու հասկանար: Ինչո՞ւ տափարակի վրա

պիտի բանեն փշեր, և վոչ ուրարտական կորեկ, ինչո՞ւ յերկիրը պիտի կոխ տան մարդիկ, վորոնց չերակներում փղշտական մի կաթ արյուն ել չկա, ինչո՞ւ հայրենի մթնոլորտին ածխաթթու պիտի խառնեն աչլազդի թոքեր այն ժամանակ, չերբ ցեղակիցների թոքերը թունավորվում են ոտար չերկրի թթվածնով, կորչում ե լեզուն, ցեղի տիպարը, հալվում ե, ձուլվում...

Հանկարծ... Բժիշկ Յերանոսի աթոռն ընկավ: Մուտքի առաջ ցցվեց միլիցիոները, նաչեց սրճարանի մարդկանց: Հովնաթան Մարչը դեմքը ծամոեց ու նրա դեմքին քարացավ յերկու բառ.

— Ինձի կը ներես...

Անթանոսյանի բկում սուրճի մի ումպ պնդեց, ձյութի պես փակչեց կատիկին: Չկարողացավ կուլ տալ:

Միլիցիոները Ավետիս աղային հիշեցրեց տուրքի ժամկետի լրացման մասին ու հեռացավ:

— Կայնենք, ձիերին մի քիչ կեր տանք: Մեռանք շոգից, — ասաց կառապանը, յերբ կառքն անցավ Նազարապատի կամուրջը և կանգ առավ ուռիների շվաքի տակ:

Կառապանը կողովներն ու կապոցները գետնին դարսեց, վորից հետո իջան ուղևորները, վորոնց ուսերից կախված եին ջրամաններ, հեռագիտակ, հաստ շորով փաթաթած շշեր և այլն: Անթանոսյանը այդ կերպարանքով նման եր քարվանի նառ ուղտի՝ գորգերով, գունավոր փնջերով, մեծ ու փոքր զանգուլակներով:

— Բարև՝ ձեզ, — ասաց մեկը, վոր կառքի կանգնելը հեռվից տեսել եր ու մոտեցել:

— Բարև, սա ի՞նչ գչուղ ե:

— Նազարապատն ե: Ավերակ գչուղ եր, հիմա վերաշինված ե:

— Բնիկներ են, — հարցրեց Մարչը:

— Ամեն տեղից կան: Գաղթականներ ել կան, մշեցի կա, բուլանըխցի: Մի քանի տուն ել քուրդ կա:

— Քո՞ւրդ...

— Այո՛, քսանչորս նաֆար են:

— Քո՞ւրդ: — Այդպես ասողը Անթանոսյանն եր: Այդ ասելուց հետո հայացքը Մարչին հառողն ել նա չեր:

— Հրամանքնիդ ո՞վ եք...

— Յես խորհրդի քարտուղարն եմ, ինքս ել կուսակցական...

Մարչը շրթունքները լիզեց: Ինչքան շուտ եին շորանում:  
Քսկ Անթանոսյանի աչքերը պղտոր ջուր եին:

— Բնիկ եք:

— Վոչ, չես վանի կողմերից եմ:

— Վանա չերկրեն...

— Այո, բայց հիմա եստեղացի չեմ:

Ահա քեզ խաթարված հողի, մուրրյալ վոշիար, վոր մի  
խուրձ խոտի վաճառել ե հայրենի մսուրը: Հովնաթան Մարչ, ինչո՞ւ  
շփեցիր ճակատդ, ինչո՞ւ ծարավ զգացիր և թիկունքդ քրտնեց:

— Դպրոց կա՞:

— Ինչպես չե: Դպրոց, խրճիթ, լիկկայան: Անգրագիտու-  
թյունը վերացված ե 60 տոկոսով, նաև կանանց մեջ: Գյուղս ունի  
փոկ, 74 անդամով, վորից կին 23 հողի, շինարար սեկցիա, նո-  
րոզված են կամուրջները և հանդամեջ տանող ճանապարհները:  
Ունենք նաև...

— Կեցիր, այդ ամենը ո՞վ քեզի ըսավ...

— Յես եմ հաշիվը տանում, չե: Ամեն ամիս զեկուցում ենք  
տալիս շրջանին:

— Հոս չկան փղշտացոց չերկրեն վերաբնիկներ, յեթովպա-  
ցիք չկան...

— Եղպես ազգ մեր գյուղերում դժվար կճարվի: Ասորի կա:

— Ազգ չե, բարեկամ, ցեղ են ասոնք... Պատմությունը  
չե՞ս գիտեր: Արշակ թագավորը չերը դորքով անցավ...

Բայց Անթանոսյանը Մարչի թևից ծածուկ քաշեց, նաչեց  
աչքամիջին: Դրանից եր, վոր Մարչի խոսքի շարունակությունն  
այսպես ստացվեց.

— Չորքով անցավ և... վերադարձավ:

— Կարելի չե, կպատահի: Մեզ հայտնի չի: Այն ժամանակ  
յերևի փակ տնտեսություն եր:

— Ամեն ինչեն կար...

Յեղավ պառզա, վորի ընթացքում չերկու կողմն ել լարված  
ուշադրությամբ դնում եին իրար:

— Եթանք, չեղացանք,—ասաց կառապանը:

— Խոր-Վիրապի ճանապարհն այս չե,—հարցրեց Մարչը  
քարտուղարին, կողովների չեսե տեղավորվելուց հետո:

— Այդ կողմերում կլինի: Չեմ տեսել,—ասաց նա:

Կառքը շարժվեց և գլորվելով անցավ փողոցներով: Գյուղի առօրյան եր' փողոցներում, բակերում, այգիներում: Յեխում նրատած մի գոմեշ, պոչը վրձին շինած, մեջքի սև քաթանի վրա գորշ գույնի նախշեր եր շարում, ականջները շարժելով քշում ճանճերին: Կոտրած սալի ճաղի գլխից աքլորը կանչեց՝ քունը փախցնելու համար: Մի պառավ, փոր հարդախառն թրիքը գունդ եր արել և պատերին եր փակցնում, մի պահ նայեց կառքին՝ թրիքի գունդը ձեռքին:

Ահա գյուղը, ապրում են քյուրդ, բուլանլիսցի, մշեցի: Վարում են, ցանում, թրիք են ծեփում, ուտում են, ծնվում, մեռնում: Սակաչն ուր ե կայծը, վոր պիտի լուսավորի նրանց մտքի առաջ այս չերկրի վողջ իմաստը: Զգո՞ւմ են այն թելերը, վորոնցով կապված են ցեղի պարծանքի հետ, գիտե՞ն, վոր հոյակապ անցյալով ազգ են, թրիք ծեփող պառավը գիտե՞, կարոտում ե ցեղի անցյալ փառքին, գիտե՞ վոր իր յերակների մեջ թանկագին արյուն ե հոսում, վորի աժեն մի կաթիլը ադամանդ ե:

— Կապրեն պատմական չերկրում, վորի ամեն մի քարը թանձրացյալ պատմութուն ե, կաղտոտեն այդ չերկիրը և չեն մտածիր, թե ի՞նչ հերոսներ չեկել են ու անցել, ինչ մեծ, սրբազան անուններ...

— Այո, այո...

— Այս ճամբով շտարա՞ն Գրիգոր Լուսավորչին Խոր-Վիրապը նետելու...

— Հասանք: Ել դենը Փայտոն չի գնա, — ասաց կառավանը: Այդ դ են ը յեղեգուտն եր, վորի միջով, տեղ-տեղ ճումերի վրայով, անցնում եր նեղլիկ կածանը: Ուղևորներն իջան: Յեվ նոր միայն հասկացան, վոր ավելորդ եր կառքին բարձած ճամբի պաշարը, իրեղեններն ու կապոցները: Այդ ամենը հերիք կաներ յոթոր, յոթ գիշեր անջուր անապատով անցնող քարվանին:

— Ի՞նչ պիտի ըլլա, — հարցրեց Մարչը: Անթանոսյանի դեմքին ել նույն հարցը կար:

— Յետ տանեմ: Ի՞նչ կտաս, գնամ Նազարապատ սպասեմ, մինչև ձեր գալը:

Աշխարհի բոլոր կառավաններն ել նույն հայացքով են նայում նեղն ընկած ուղևորին, վորի միակ ճարը լուրջայն համաձայնեին ե: Յեվ չեթե Փայտոն չի Մուկուչն ել չետ չեր մնում

բոլոր կառապաններին, մեր ուղևորներին ել մնում եր միակ չեւքը՝ ապավինել կառապանի խղճին ու գթասրտութեան:

Կառքը հետ դարձավ Նազարապատ: Բեռից թեթևացած ձի-չերը մի քիչ արագ քայլեցին, իսկ կառապան Մուկուչը դիրքի բարձրութեան վրա, կառքի հետ որորվելով, արժան և վաչել համարեց սուլել:

— Ծիրան, ծիրան եր չարս...

— Ուղիդ կգնաք մինչև 3789 բարձրությունը, այնտեղից մի մասն աջ, մյուս ձախ կծովի և չերեկոյան դեմ կհանդիպեք: Միայն զգուշը, վորովհետև ամեն մի քայլափոխի կարող եք անակնկալ վտանգի հանդիպել, — ասել եր նախկին հրամանատարը դավադրութեան այն գիշեր, չերք սուրճի մի ումպ ձյութի պես փակչեց Անթանոսյանի կատիկին:

Խորհրդակցությունը չերկար շտեկեց: Հովնաթան Մարչը հարկ համարեց ուղղելու գլխարկը, վզից կախած հեռադիտակը և այն ամանը,՝ վորի մեջ սուրճը տաք է մնում տասը ժամ: Իսկ արևն այնպես եր այրում, ասես պատրաստակամ եր սառը ջուրը մի մի ժամում չեռման աստիճանի հասցնելու:

— Մժեղներ հոս շատ կըլլան: Կերևի թե վազրի ալ հանդիպինք, — ասաց Մարչը այն անտարբերութեամբ, վոր ունեն փղըշտացիք վտանգի մասին ապահով տեղում խոսելու ժամանակ:

— Կը կրակեմ... Փափուշտակալս լիքն է: — Յեթե Անթանոսյանի խրոխտ կեցվածքը տեսներ այն վազրը, վոր հարձակվելու չեր նրանց վրա...

— Ո՛հ, առաջ... Պետք է վոր խորը չըլլա...

Ընթերցող, դուք ջուրն գլխի չեք տեսել, և վոչ ել արևադարձային չերկրի անտառ, ուր մի թիղ հողի վրա բուսնում է անհաշիվ ծառ, թուփ, խոտ ու ծաղիկ: Բոլորն ել խառնվում են իրար, մճճվում՝ անլվա, չսանրած մազերի պես, բոլորն ել ձրգտում են դեպի արևը, վորի ամեն մի շողի համար կռվում են թփերը, ծաղիկները, ծառերն ու խոտերը: Յեվ այդ ամենի մեջ պես-պես թռչուններ, գետններ, գունավոր թիթեռներ, կապիկներ և ել ի՛նչ գիտեմ՝ ինչպիսի կենդանիներ, վորոնցից ամեն մեկը և՛ պաշտպանվում է ուժեղից և՛ հարմար բոպին հարձակվում թուլի վրա:

Դուք ջուրն գլխի չեք տեսել և վոչ ել արևադարձային չերկրի

անտառ: Եւ ի՞նչպես կարող եք պատկերացնել այն չեղեգնուտը, վորով նրանք պիտի անցնեին, անպատճառ պիտի անցնեին, թեկուզ մեկին եւ վագրը կամ մարդագայլը հոշոտեր, վորովհետեւ Գրիգոր Լեոնականի քարտեզի վրա նշանակած կարմիր կետը գտնվում եր չեղեգնուտից այն կողմը, իսկ այն կարմիր կետի մոտ եւ գտնվում եր նրանց արշավանքի կետ նպատակը:

— Խորճունկ ե:

— Կարևորութիւնն մի տաք...

— Մտեցնեիրը կ'սեղեն... Աս ի՞նչ գեռուն ե, վոր կսողա մեջքիդ վրա: Կեցիր, հալը ենակից, թունավոր կըլլա...

Անթանոսյանը հազիվ կարողացավ կանգնել ճումի վրա, մինչև Մարշը ձեռնափայտի ծալքով դեն հրեց սև ճիճուին: Յեղեգնը շարժվում եր, նրանց չերկար ու սրածայր տերևներն իրար եին քսվում, սվսվում, թվում եր, թե հոփս ե շնգշնգում: Սակայն թվում եր միայն, վորովհետև հոփս այդ ժամանակ արևի կիզիչ ճառագայթներից սինլքոր, սուլում եր հեռու սարերի լանջին:

— Թունավոր ոձեր կըլլան հոս, հալը ենակից... — Չայնեց Մարշը Անթանոսյանին, վոր առաջից եր քայլում, չեղեգնը դեն հրում, վոտքով ճումների վրա տեղ շինում և ստեպ-ստեպ կանչում.

— Չախ ծովեք... Աչստեղ խորն ե... Չգուչը ցատկեք...

— Կենդանու վոտնատեղեր եմ տեսնում, — կանչեց Անթանոսյանը: Մարշը տեղում կանգնեց:

— Կենդանի՞... Ո՞ւր ե...

— Ահա հետքերը...

— Թնգեղջյուրի կնձանի: Գուցե վագր ե... Չդառնանք:

— Կճղակավոր ե: Համենայն դեպս զգուշ մնանք: Յեթե փորձանք պատահի, հրացանս առեք, չթողնեք թշնամու ձեռքն ընկնի:

— Հալը ենակից, կըսես թե չեղեգնուտը շարժվեցավ...

— Սուս... Կուացեք:

Գորտերն ի՞նչ նախանձելի մարմին ունին: Տաքանում են գետափին և վոտնաձայն լսելիս թոնում ծանծաղուտը: Ո՞ւր գընար Հոփսաթան Մարշը, չերը վտանգն արդեն մոտ եր: Մե սարսափի վայրկյաններ, հավետ անմոռաց...

— Սև թիկունքը կերևա... Թնգեղջյուր չե՞:

Մարշին պատասխան տվավ Անթանոսյանի հրացանը, վո-

րի կրակոցից ինչ վոր աժդահա արարած յեղեգնուտները կոխ տալով ու փնջալով հեռացավ: Յեղեգնի սովերում պահված շամբահավերը վախից թեին տվին, կոնջալով թռան և ավելի հզորացրին ազմուկը, վորից Հովնաթան Մարչը քիչ մնաց հավասարակշռությունը կորցնելու և ընկնելու ծանծաղուտը:

— Թշնամին փախուստի դիմեց կամ նորից դարան մտավ, — հայտարարեց Անթանոսյանը:

— Հուսահատվելու չե, շուտով յեղեգնուտը կվերջանա...

Յեվ իրոք, կես ժամ հետո արևի ճառագայթներն արդեն թափանցում էին յեղեգնուտի կիսախավարը, ճահճուտն ավելի յեր նոսրանում, արահետը լայնանում էր: Յեվ յերբ Անթանոսյանը վոտքը դրեց տափարակի վրա ու պատրաստվում էր ուրախությունից բացականշելու, նրա առաջ, անհայտ էր թե վճրտեղից, անկվեց մի մարդ, չերկար մահակը ձեռքին:

— Բա վոր հայվանին սպանելիր...

— Ի՞նչ հայվան:

— Գոմեշին, չտեսար...

— Մի՞թե գոմեշ էր, մի՞թե...

— Դե լավ, անց կացեք... Փորձանք եիք բերելու գլխիս: Յերբ նրանք քիչ հեռացան, չերկար մահակով մարդը նըրանց հետևից ձայն տվավ.

— Պապիրոս չունե՞ք, թութունս հատել ա:

Բարի, միամիտ ցեղ, պարզասիրտ ու անվոխակալ... Հովնաթան Մարչի աչքերը վոչ միայն ժպտացին, այլ ժպիտից հավելեցին, ինչպես աստղերը լուսարացին: Յեվ այնքան ավստոսաց, վոր ծիտղ չե:

— Սուրճ հրամեցեք, պատվելի բարեկամ:

— Չե, եղ բաներում չկանք, — պատասխանեց մարդն ու հեռացավ յեղեգնուտի սովերում նստոտած գոմեշների կողմը:

Կածանը քանի գնում, այնքան բարակում էր, բաժանվուտ էր մանրիկ ճյուղերի, վորոնցից ամեն մեկը տարբեր ուղղությամբ էր գնում: Մեկը ձգվում էր բարակ լարի պես, կորչում ու հավվում տափարակում, մի ուրիշը հասնում էր խորխորատի և կըտրվում, չերբորդը միանում էր լայն ճանապարհին:

Քիչ հետո նրանք բարձրացան դիմացի բլրակի գլուխը: Հովնաթան Մարչը գլխարկը հանեց և վողջույն տվավ այն յերկրին,

վոր Արաքսի մյուս ափին եւ և վորի հողն ել նույնքան հարթ ե, կածաններով ու քարոտ:

— Կը տեսնեմ, կը տեսնեմ բաղձանքը հոգոս... Դիտե, սքանչացիր: Մշուշի մեջ կը տեսնես Խոր-Վիրապի գմբեթները... Հոն տապակվեցավ վիրապի մը մեջ, ոձերու և կարիճներու ընկեր յեղավ և գաղափարը շուրացավ սուրբն Գրիգոր Լուսավորիչ: Կը հիշես, Ագաթանգեղոսի զգայացունց տողերը: Ա՛խ, սրբազան յերկիր, աշխարհ դրախտավայր...

Անթանոսյանը մտաբերեց այն, ինչի մասին պատմիչը զարդանդով ե գրել: Չագարը, հասկանում եք, խրել են Խոր-Վիրապի կալանավորի հետույքի մեջ և հալած արձիճ լեցրել: Տրդատ թագավորը խոզ ե դարձել և չեղեգնուտում ապրել, մինչև յերազը:

Յեթե Բալիքյանն իմանար, թե ի՞նչ գոհողությամբ և ի՞նչ տանջանքով ե կատարում նա նրա ցանկությունը՝ Արաքսից ջուր առնել, վոչ թե Արաքսից հոսող առուներից, այլ Մալր Արաքսից, նրա սառն կոհակներից, վորոնք գալիս են Բինգյուլից, հեռուներից, շատ հեռուներից...

— Խնդրածս չմոռնաք բերել... Ինքներդ վերցրեք Մալր Արաքսի ջուրեն:

Բլրակից իջան: Հոփնաթան Մարչը բլրակի գլխից մի անգամ ել հետ նայեց չեղեգնուտին... Յեվ յերբ Անթանոսյանը վոզևորված կանչեց այն մասին, թե՛

— Յերկներ չերկին և չերկիր... — Մարչն ավելացրեց.

— Յերկներ և ծով ծիրանի:

Արաքսը բլրակի ներքևով ոձապտույտ դառնում եր, հանդարտ հոսում: Միակ բարիքը, վոր կտար գետն այդ ժամանակ, նրա սառը ջրերում լողանալն եր:

Հոփնաթան Մարչը թաղիքի մեջ փաթաթած շշի խցանը հանեց և ծովը տեսնող լողորդի ուրախությամբ կռացավ ջրի վրա: Անթանոսյանը հետևեց նրան՝ ձեռքին վորսորդական հրացանը:

— Ստոպ...

Տեսարանը, ընթերցող, ծանր եր, շատ ծանր: Ստոպ ասողը սահմանապահ կարմիր բանակայինն եր, վոր հերթական պլտույանն եր անում ափերով և վորը դեռ հեռվից եր տեսել նրանց: Յեվ ստոպ այն ժամանակ, յերբ Մարչի փափուկ մատները Արաքսի ջրի սառնությունն զգացին... Դուք ծարավ եք, ձեր լե-

դուն խանձվում ե ծարավից, թուքը շորանում ե, դուք ջուր եք գտնում, սառը ջուր, ձեր շրթունքները կախվում են ջրի վրա ե հանկարծ...

— Ստոպ:

Տեսարանն ուներ ե իր ծիծաղաշարժ կողմը, սակայն այդ ծիծաղաշարժ կողմը միայն պահակի համար եր, վորովհետև Անթանոսյան Հմայակի ուսերեն խոսելն ուրիշ բան չեր հարուցի, ծիծաղից բացի... Պահակը հարցնում եր թույլտվություն սահմանին մոտենալու համար, Անթանոսյանը սրտասխանի տեղ գըլուխը թեքում եր մերթ աջ, մերթ ձախ ե խեղճ ձայնով ասում աչնպիսի բառեր, վորոնց միայն առաջին վանկերն եին ուսերենի նման: Ինչո՞ւ հրացանը փոքրիկ մատիտ չե, վոր կոշիկիդ տակ առնես, վրան կոխես այնքան ամուր, վոր թաղվի հողի մեջ: Իսկ պահակը հրացանին եր նայում ե ժպտում:

Բոլոր լեզուներով ել շատ արագ կարելի չե հասկացնել, թե՛

— Դուք բանտարկված եք, խնդրում եմ հետևել ինձ, կամ առաջ ընկնել:

Յեվ չերբ Հովնաթան Մարչը Անթանոսյանի հետ քայլում եր պահակի հետևից, նրա գլխով աչնպիսի մտքեր եին անցնում, սարսափելի մտքեր, վորոնցից ամենից թեթևն ու դյուրեկանը անկողնում մեռնելու չափ քաղցր եր: Այս ո՞ւր ընկավ, ո՞վ ե այս պահակը, ո՞ւր ե տանում: Վորքան ճշմարիտ եին նրանք, վորոնք ասում եին.

— Այն չերկիրը մի գնա, Հովնաթան Մարչ, աչնտեղ մարդագայլեր են ապրում ե գեշ բռնակալներ...

Գուցե այլ աշխարհ ե բայց Արաքսը խոսում ե ե այդ Արաքսը ահագին հորձանք չի հանում, զայրույթից չի վռնում, վոր պահակը սրտաճաք լինի ե ազատություն տա Հովնաթան Մարչին:

Այսպես քայլում եին չերեք հոգի, վորոնցից առաջինը սուլում եր, իսկ վերջին չերկուսն ապրում եին այն, ինչ ապրեցին Հիսուսի հետ խաչվող չերկու հանցավորները, վորոնք մինչև վերջին շունչն ել դարձացած մնացին ե չհասկացան, թե ինչո՞ւ չե ժպտում Հիսուսը ե նույնիսկ սուլում խաչափայտի վրա բարձրանալիս, աչնպիսի ինքնագոհ հրճվանքով, վորպիսին ունի սպորտսմենը մարզափայտերի վրա մագլցելիս:

— Յերկներ չերկին և չերկիր...

— Դողայր և Հովնաթան Մարչ:

Արևը խոնարհվեց, հունձից դադրած և տուն դարձող ժշակի հոգնածությամբ: Յեւ այդ խոնարհվող արևը արցունքի կաթիլներ քամեց Հովնաթան Մարչի աչքերից այն ժամանակ, յերբ նա չեղեգնից շինած տաղավարի ճեղքից նայում եր արևին: Մեկ եւ պիտի արևը տեսնի՞, թե գիշերվա մութի մեջ սարսափելի և սուսերամերկ մարդիկ պիտի գան, միսը կտոր-կտոր անեն և փղշտական գանգը ջարդեն կացնով, ուղեղը շաղ տան, ոձերին, կարիճներին տան:

Անթանոսյանը պապանձվել եր: Պահակի առաջին խոսքը նման եր կռուներին յերամի մեջ արձակած գնդակի, վորից ցրրիվ են գալիս շարքերը, վախից խառնվում, կոնչում և իզուր փորձում շարքերը վերականգնելու: Առաջին խոսքը՝ ստոպ, գընդակի պես չեղավ և մտքերը շաղ չեկան:

— Հայրենակից, աս ուր ընկանք...

Անթանոսյանը արտասովեց և արցունքից խեղդվող ձայնով իզուր փորձեց Մարչին հիշեցնելու այն առասպելներից մեկը, վորի հերոսը յեղել ե Սոր-Վիրապի կալանավորը: Միթե զոհ չի պահանջում գաղափարը: Սակայն այդ սպեղանի չեղավ և վոչ եւ պաղ ջուր հրդեհվող մտքի համար: Ի՞նչ ե բերելու արևածագը:

Պահակը տաղավարի առաջ իրիկվա ընթրիքն եր պատրաստում: Շուտով ջոկատի պետը պիտի գար: Բայց ի՞նչ ծիծաղելի դեմք ուներ նա, վոր բարձրահասակ եր, բարակ ու յերկար վզով: Իսկ մյուսը...

— Բուրժույ, — ժպտաց պահակը ու գդալով ընթրիքը խառնեց:

Մութն ընկավ: Մի քիչ հետո յերևաց ջոկատի պետը, ճրագի լուսով նայեց նրանց, լսեց զինվորին և փորձեց հասկացնել մեթ Մանթանոսյանին, մերթ Մարչին, վոր սահմանի մոտ վորս անելու համար հարկավոր ե հատուկ իրավունք և վոր իրենք ազատ են այժմ, սակայն խորհուրդ չի տալիս գիշերով գնալ, ճանապարհը չեն գտնի:

— Կարճ գիշեր ե, շուտով կլուսանա, — ասաց նա:

Հովնաթան Մարչը համոզված եր, վոր զինվորականը իր մահվան դատավճիռն ե կարդում և հայտնում ե, թե ինչո՞ւ չեն ըս-

պանուժ, ինչպես պիտի մորթեն: Իդեալ աշխատանք... Կախաղանի դատապարտված հանցավորի համար հետաքրքիր և խմանալ, թե ինչպես և կանեփը բուսնում, ինչպես են քաղում, ցողունը թրջում, պարան հյուսում և ապա... պարանի ողը հագցնում վըզին:

Մարչին այդպես եր թվում: Մյուս փղշտացին լարված լըսողություն եր գինվորականի կցկտուր բառերից ամբողջական միտք հյուսելու համար: Յեվ յերբ մարդը հեռացավ, պահակը ծիծաղելով խոտի մի քանի խուրձ բերեց և փռեց հատակին: Իսկ Անթանոսյան Հմայակը հայտարարեց, վոր վաղն ազատ են:

— Միամիտ մարդ... Սոտ կը փռեն, վոր արյանդ կաթիլները գետնին չթափվին, հետքդ չերևա:

Յերկու հին ընկերներ, չերկու սրտակից բարեկամ այդ գիշեր խոսեցին իրար հետ վոչ թե սրտանց, այլ անհաշտ: Մարչը Անթանոսյանին ծանր խոսքեր ասաց, իսկ Անթանոսյանը չեղավ համբերատար, այդ խոսքերը մարսեց:

Կես գիշերվա լուսթյան մեջ ծղրիտները ձայն տվին, ծղրիտներին ձայնակցեցին մոտակա ճահճուտի գորտերը:

Տաղավարի դռան խոտերի վրա փովել եր պահակը, իսկ ներսում իրար կողքի կուչ եին չեկել Մարչն ու Անթանոսյանը: Առաջինն իր կրծքին եր սեղմել Արաքսի ջրով կիսով չափ լըցրած շիշը և գլուխը շին խոնարհած մտքով հեռուներում եր թափառում, իսկ յերկրորդը մութից ոգտվելով, ծածուկ բաց եր արել տասը ժամ սուրճը տաք պահող շին բերանը, ծծում եր, վորպես մոր կաթ, ծծում եր և կամաց կամաց գլուխը խոնարհում չոր խոտի վրա...

Պայծառ, հիշողութեան համար անջնջելի ուր, յերբ արևն ել կանգ եր առել և հանդիսատես եր: Այդ ուրն այդպես ել մնաց Հովնաթան Մարչի հիշողութեան մեջ, վորպես սիրո գարուն, ընթերցող, յերբ դող ես զգում և քեզ թվում ե, թե աշխարհը հում ձու չե ու դու չերկաթյա բռունցք: Անցնում են տարիներ, տեսնում ես և աշունը, քո սիրո աշունը և ինքդ քեզ հարց ես տալիս՝

— Ո՞ւր եի և ո՞ւր չեկա...

Սակայն սկիզբը մնում ե պայծառ, վորպես գարնան առավոտ: Յեւ այդպես ել մնաց Հովնաթան Մարչի համար: Դժբախտաբար հնարավորութիւն չկա ստուգապես ասելու, թե Հովնաթան Մարչն ապրեց իր աշունը և հարցրեց իրեն, այնպես, ինչպես չես, դու, նա հարցնում ենք սիրո առավոտը մտաբերելիս:

Հյուրանոցի բաց պատուհանից Արարատի սպիտակահեր գագաթին առավոտյան բարևը տալուց հետո, Հովնաթան Մարչը մաքուր սափրվեց, հագավ իր տոնական տարազը և սպիտակ ձեռնոցները, պսպղան քորոց հագցրեց փողկապին, — մի խոսքով՝ զարդարվեց հարսանիքի ուրախութեան շտապող հյուրի պես:

Հարսանիք չէր Նոր-Յեթովպիո հիմնադրումը...

Անթանոսյանը հայտնել եր նամակով, վոր իրեն հաջողվել ե գտնել մի զույգ իսկական յեթովպացի, վորոնք համաձայնվել են վոչ միայն ապրելու ապագա քաղաքում, այլ և իրենց ամուսնութիւնը կատարելու սեպտեմբեր 4-ին:

»...Շատ փնտռեցի: Մի քանի գլուղում կան յեթովպացիներ և փղշտացիներ, սակայն նրանք ձուլվել են տեղացիների հետ և նրանց արշունը պղտորվել ե կասկածելի խառնուրդով: Ալագչազի կողմերից իմ ծանոթս գրում ե, վոր հատ ու կենսաքրված փղշտացիք չեն մոտենում, վախենալով դրամի բարձր տո-

կոսից: Ի՞նչ ասել կուզի, վոր նրանց ապերախտութիւնը յեթե մի կաթիլով ել ավելանա, պիտի թափվի և հեղեղի աշխարհս: Ուրանում են իրենց ծագումը: Յես հիմա հասկանում եմ Ձեր արդար զայրույթը, յերբ սուրբ Եջմիածնում հանդիպեցիք Ձեր քեռորդուն: Վոչինչ հուսահատութիւն, վոր բաժին և փոքրոգիներին: Մենք կկառուցենք Նոր-Յեթովպիան, և բնակիչները կը բազմանան, ուրիշ յերկիրներից կհավաքվեն: Ձեր հանձնարարութիւնը կատարել եմ: Տեր Հուսիկը վորոշյալ ժամին տեղում կլինի: Մշակներ եմ վարձել հիմքը փորելու: Կրաշաղախը պատրաստել եմ: Տնտեսութիւնը մեծ ե և աշխարհը հավետ պիտի հիշի սեպտեմբեր 4-ի որը»...

Տնտեսութիւնը մեծ ե, Հովնաթան Մարչ, և աշխարհը յեթե հիշելու չե Նոր-Յեթովպիո հիմնադրումը, այդ որը պիտի փաթաթի անվանդ:

Հովնաթան Մարչը պատվիրել եր սպասավորին, վոր կառքեր վարձի՝ մեկ, յերկու, հինգ, հյուրերին իսկուչն ներս ընդունի և մանավանդ բժիշկ Յերանոսի քենուն՝ բժֆակի ուսանողուհի Կատարինեին, Կատչային: Ի հարկե նա այս մանրամասնութիւնները չասաց սպասավորին, այլ միայն պատվիրեց.

— Սանկ ձերմակ լաթերով կին մը ինձի հարցնելու ըլլա նե, վերն ե, կըսես, կուզեկցիս...

Այստեղ միջանկյալ մի դեպք: Բժֆակի Կատչային, տարիքն անցած որիորդ Կատարինեին նա տեսել եր մի անգամ և յերկու որ անց նրա հետ գնացել եր Դալմայի տյգիները: Այս պատմութիւնը մինչև վերջն ել մութ մնաց, իսկ այժմ վոչ մի հնար չկա պարզելու, քանի վոր բացակա չե հերոսը, Հովնաթան Մարչը չկա: Ասում են, վոր բժիշկ Յերանոսը նայել ե նրանց հետևից և ժպտալով ձեռքերն իրար շփել այն մարդու ուրախությամբ, վոր շուկայում ճարպկորեն հիվանդ և սլառավ ձին միամիտ մեկի վզին և փաթաթում և հետևից նայում, թե ինչպես ե նա ձին տանում: Այս չե կարևորը:

Կառքը հասնում ե Դալմային, նրանք իջնում են, Հովնաթան Մարչը վճարում ե կառապանին (այդ մասին այժմ ել կարելի չե հարցնել № 129 կառապանից) և ներս մտնում մի այգու դռնակով: Այստեղ արդեն ծայր ե առնում լենթադրութիւնը, ըստ վորի իբր թե որիորդ Կատչայն այդ այգում հանդիպում ե

իր վաղուցվա ծանոթին, վորին տարիներ առաջ տեսել եր և այդ տարիներին ընթացքում վերհիշել ու կարոտել, նրան մեռած համարել կամ անհայտ կորած: Մի այլ կարծիքով իբր թե այգում յեղել և ավելի զորեղ մարդ, քան Հովնաթան Մարչը և այդ մարդը ուղմաշունչ չերգեր և յերգել, հին գինի տվել Հովնաթան Մարչին ու որիորդ Կատչային, բարձրացել են հնձանի կտուրը և յերբ Հովնաթան Մարչը ձեռքերն ողում տարածած կանչել և Կատչային, նրան անվանել վոսկեգանգուր խոպոպիկներով տիկին, իբր թե նրա ձեռքն և ընկել միայն բարակ շղարչը, վորի տերը հնձանից մի քիչ հեռու, հին գինի տվող զորեղ մարդու կամ թեկուզ վաղուցվա ծանոթի (նա, վոր անհայտ կորած եր համարվում) գրկումն և յեղել:

Հյուրանոցի սպասավորն այդ սլատմության միայն վերջն և տեսել, այսինքն միայն այն, յերբ Մարչը, համարչա թե լուսաբացին, որորալով բարձրացել և սանդուղքով և բանալիի փոխարեն դռանը դեմ արել իր վոսկեկոթ մատիտը: Սպասավորը տեսել և և կոռքում նստած Կատչային ու զորեղ մարդուն:

Յեզ յեթե սեպտեմբեր 4-ի առավոտյան Հովնաթան Մարչը սպասավորին պատվիրեց սանկ ճերմակ լաթերով կնոջ մասին, սպասավորը տկարամիտ լինելով հանդերձ (այդ մեզ արդեն հայտնի յե) հասկացավ, վոր խոսքն այն կնոջ մասին և, վորին կճանաչեր նա, յեթե կինը սանկ սև լաթերով ել լիներ:

Հովնաթան Մարչը մոտեցավ, մեկ-մեկ վերցրեց սեղանի վրայից այն չկնքած ծրարները, վորոնց մեջ հիմնադրումն արդեն նկարագրված եր: Մնում եր միայն չերեկոյան վերադառնալուց, մի քանի անկարևոր նորույթներ ել ավելացնել, ծրարները վաղել ու փոստին հանձնել:

Անդրեաս Բալիքյանն իր այն վերջին նամակից հետո (հիշում եք, յերբ Մարչը պառկել եր ու լաց եր լինում, իսկ նամակը ծիծաղում եր), մի ուրիշն եր ուղարկել: Թե ինչո՞ւ յեր նա հարմար տեսնում, վոր Հովնաթան Մարչը մի քիչ ել ավելի մնա Փոքր Ասիայի խորքերում, ինչո՞ւ նա հանկարծ, առաջին նամակից հետո, փոխել եր իր վորոշումը և անորոշ խոստումներ արել միանվագ նպաստի մասին, — այդ բոլորը մութ եր Հովնաթանի համար: Հայտնի չեր միայն, վոր Բալիքյանը մի այլ նամակ եր ուղարկել

այս անգամ ուղիղ վեհափառի անունով, վորտեղ նա թուլլափու-  
թյուն եր ինդրում... ապահարզանի: Ո՞վ եր այդ կինը: Այս միտ-  
քը, այս կասկածոտ միտքն անհանդստացնում եր Հովնաթան  
Մարչին և նրան այնպես եր թվում, թե մեկը վոստայն ե հյուսում:

Բայց այդ տեսում եր միայն վայրկյաններ: Իսկ ռւմ միտքը  
մի վարկյան կասկածոտ չի դառնում ամենից հավատարիմ ընկե-  
րոջ հանդեպ: Հերիք եր, վոր նա հին նամակների մեջ քրքրեր,  
գտներ այն կապույտ ծրարով նամակը և կարդար.

— Կը հիշեմ որը, յերբ մեկնեցաք և կը մխիթարեմ զիս...

Այս տողերը կարգալուց հետո կասկածն ավերվում եր, ա-  
սես թե սպունգով ջնջում եին գրատախտակին գրածը:

— Կարելի՞ չե, — Մարչը հետ նայեց, բաց դռան մոտ տե-  
սավ բժիշկ Յերանոսին, քենուն՝ սանկ սպիտակ լաթերով  
կատյային, Գրիգոր Լեոնակահանին: Մի քիչ հետո ներս մտավ և  
Պետրոս Գետադարձը:

— Ուրախությունն աննկարագրելի չե... Բաղաքում միայն  
գրա մասին են խոսում, Նոր-Յեթովպիտ, — ասաց բժիշկ Յերանոսը  
և նայեց Գրիգոր Լեոնակահանին, ասես հարցնում եր.

— Ճշմարիտ չե...

— Այո, որը պատմական ե: Յես հիշում եմ Բասենի կռիվը:  
Յերեկ ճաշին մերոնք հաղթանակով վերադառնում եին, իսկ  
թշնամին անագին կորուստ տալով սարսափահար փախչում եր:

— Զգացված եմ: Ինչո՞ւ համեստությունս կը մեծարեք:  
Յես ձեզմով ե, վոր կը վողկորվիմ: Ի՞նչ եք...

Շարունակությունն ասելիս Հովնաթան Մարչը աչքը չեր  
հեռացնում բժֆակի ուսանողուհի Կատյայից (որիօրդ կատարի-  
նեից), վորը վոտքերը քսում եր իրար ճիշտ այնպես, ինչպես  
ճանճը՝ սեղանին ընկած շաքարի կտորը լիզելուց:

— Կառքերն սպասում են, — ասաց սպասավորը:

— Աճապարենք, աճապարենք... Այնտեղ ալ հյուրեր ու-  
նենք, պատվական հյուրեր:

Ճանապարհին միայն անաջին կառքում նստողներն եին  
ծիծաղում: Կատյան ինչ վոր ուրախ պատմություն եր անում,  
Հովնաթան Մարչը քահ-քահ ծիծաղում եր, իսկ բժիշկ Յերանոսը  
կարո՞ղ եր լուռ մնալ, յերբ ծիծաղում եր ինքը՝ Հովնաթան  
Մարչը:

Յերկրորդ կառքում նստողները՝ Գետադարձն ու Լեոնակա-  
նը վեճի եին բռնվել: Գետադարձը պնդում էր, վոր արամեյական  
ազգը հարավից է հյուսիս շարժվել և վկայություններ եր բե-  
րում, իսկ Լեոնականը՝ ռազմական տեսակետից անհարմար համա-  
րելով այդպիսի առաջխաղացումը, միակ ուղին ընդունում էր  
հարավից դեպի հյուսիս-արևմուտք գնալը: Յեվ կարծում էք,  
վոր չեթե տասը վերստ անցնելուց հետո Պետրոս Գետադարձը  
լռեց, այդ նշանակում էր, թե նա համաձայնվեց հակառակորդի  
հետ: Ամենևին վոչ: Շուրջն ամայի տարածություն էր, առաջին  
կառքը բավական հեռացել էր, իսկ Գրիգոր Լեոնականը այնպես  
էր ազմկում, բարձր բղավում, բռունցքը ողում ճոճում... Հան-  
կարծ բռունցքի մի հարված, Լեոնականի վոգևորության ժա-  
մին, թեկուզ պատահամբ, իջներ Գետադարձի մագաղաթյա դեմ-  
քին: Կարելի՞ չե փթանոց քարով խփել պատուհանի ապակուն և  
կարծել թե ապակին չի ջարդվի:

Անթանոսյանը մշակներից մեկին պատվիրել էր բարձրա-  
նալ տափարակի ծայրին գտնվող քարակույտի գլուխը և աչքը  
տնկել ճանապարհին: Յեթե կառք կամ մեքենա յերևար, մշակը  
ձեռքի բահը պիտի բարձրացներ և ազդարարեր հյուրերի գա-  
լուստը:

Մնացած յերկու մշակները փորում էին: Անթանոսյանը  
մեկ նրանց մոտ էր վազում, արագացնում, զայրանում, վոր ու-  
ղիղ գծով չեն փորում:

— Մի թիղ աջ կամ ձախ չծռեք... Լարով փորեք, լարով...

Մեկ մոտենում էր տեր Հուսիկին և նրան պատմում, թե  
ըստ հատակագծի վորտեղ պիտի դպրոցը լինի, վորի պատուհան-  
ները պիտի նայեն Արարատի կողմը, մի քիչ հեռու Նոր-Յե-  
թովպիո յեկեղեցին, քահանայի բնակարանը, ապա տներ, փո-  
ղոցներ, լայն հրապարակ:

— Պարոն Մարչի միտքն այնպես է, վոր հարկավոր է քա-  
ղաքը պարիսպներով պատել, ունենալ միայն մի դուռ... Ասում  
են բավական փող են խոստացել: Յեվ մինչև հիմա յիլ շարու-  
նակում են գանձել: Գուցե թե...

Բայց խոսքը կիսատ էր թողնում, մոտենում բանվորներին,  
ձայն տալիս՝

— Լարով, լարով:

Կամ թե հետ եր նայում, քարակույտի վրա արձանի պես կանգնած և բահին հենած մշակին: Տեր Հուսիկը շփում եր մի-րուքը, գլխով հավանության նշան տալիս և աչքերը լայն բաց անում, չերբ Հաջի Սարար գլուղի ուսուցիչը պատմում եր գանձ-վող փողերի և ամեն կողմից թափվող նվերների մասին:

— Հիմնադիրը Անդրեաս Բալիքչյանն է... Ինքը փղշտացի յե, բայց մոր կողմից չեթովպացի: Շատ հարուստ է, անթիվ գանձեր ունի, մեծ գործարաններ, որական մինչև հարյուր հազար չեկամուտ: Ինքն ել ազնվության, հայրենասիրության տի-պար: Բժիշկներն արգիլել են, վոր նրա մոտ ազգից կամ հայրե-նիքից խոսեն: Սիրտը շատ, շատ բարակ է...

Տեր Հուսիկը գլուխը որորեց.

— Վախ, ախոս մարդ...

Սակայն սպասողները միայն տեր Հուսիկն ու Անթանոս-յանը չեին: Նրանցից մի քիչ հետու, արևի տակ նստոտել եին յերկու հոգի, չերկու չեթովպացի, վորոնց պսակադրությունը պիտի այդ որը կատարվեր և վորոնց միացումից պիտի սերվեր չեթովպիկների և փղշտիկների սերունդ, լեցնելու Նոր-Յեթով-պիան:

Ավո բիձա և Սաղալ խանում:

Յեթե Ավո բիձան վեր կենար և քայլեր, հայտնի կաներ նրա կաղ լինելը: Իսկ չեթե Սաղալ խանումը քայլեր... Դուք տե-սել եք ինչպես է տուն վերադառնում պառավ սագը՝ չնզնզալեն, որորալեն...

Վորտեղից եր գտել Անթանոսյանը թշվառ այդ գուլգին, վոր մինչ այդ, իր վիճակից գոհ, ապրում եր ուրիշի գոմում ու տանը: Ավո բիձան տավարի տակն եր մաքրում, թրիքը գո-մից հանում, գոմեշներին ձեթ քսում, ջուր տալիս և գլշերով ել քնում գոմում՝ անկյունում, ցցերի վրա շինած թառին:

Սաղալ խանումն ել նույն գլուղումն եր ապրում, դարձյալ ուրիշի տան, սակայն գոմ չեր մաքրում և վոչ ել թառի վրա քնում: Նրա գործը բամբակի քաղհանն եր, բուրդ գզելը, թել մանելը: Յեվ այդ ամենը նա կատարում եր լուռ ու անտրտունջ, շատ անգամ մի փոր հացի համար, իրեն վերապահելով իրա-վունք աշխատանքի ժամանակ քթի տակ դնդնալու մի յերգ, չեթովպական չերկրից բերած յերգ:

Ավո բիձան վաղուց եր ցանկանում խանում Սաղալին: Թա-  
 ուի վրա պառկած ժամանակ, չերբ գոմի լուերը ծակոտում եին  
 մեջքը և թրքոտ ձեռքը քսում եր, քորում նույն չեռանդով, ինչ-  
 պես վոր քորում եր գոմեշի մեջքը, չերդիկից ներս ընկնող շողի  
 պես մի միտք փայլում եր նրա խաղաղ ուղեղում: Վատ չեր լինի,  
 չեթե խանում Սաղալը իր հետ լիներ: Յեվ բավական ժամանակ  
 անցավ, մինչև վոր սերը ափերից դուրս չեկավ և սիրո ալիքը  
 հասավ խանում Սաղալին:

Գարնան վերջն եր: Ավո բիձան գոմեշներն եր լողացնում,  
 իսկ խանում Սաղալը գետի մոտ, բամբակի արտն եր սեյրակա-  
 ցնում: Հավատում եք, չերկուսն ել կարմրեցին, չերբ Ավո բիձան  
 նախահարձակ չեղավ և իր ցանկութունը հայտնեց թառի վրա  
 միասին ապրելու: Խանում Սաղալը կարմրեց, կոնակը դարձրեց  
 նրան, բիրը խրեց հողի մեջ և հալվեց, ամոթից, սիրո յերջան-  
 կութունից հալվեց, ջրի մեջ ընկած շաքարի նման:

Յեվ չերբ ոգոստոսին այդ ճանապարհով անցավ Անթանոս-  
 յանը և պատահամբ լսեց, թե ինչպես եր քթի տակ խանում Սա-  
 ղալը դնդնում չեթովպացոց աշխարհից մի չերգ, իսկույն կանգ  
 առավ, մի պահ մտածեց, մոտեցավ խանում Սաղալին:

Ինչ բարիքներ չխոստացավ... Տուն, տեղ, անկողին, կթան-  
 ու պղնձե ամաններ: Ավո բիձան այդ իրիկուն գոմեշներին քո-  
 բելիս զգաց, վոր իրոք, ինքն ել, խանում Սաղալն ել հազվա-  
 դյուտ մնացորդներ են հեռավոր մի աշխարհից: Յեկել ե հարուստ  
 հայրենակիցը, փնտուում ե նրանց: Չկա, աշխարհում ել չեթովպա-  
 ցի չկա: Իրենց ձեռքումն ե այդ կորած ցեղին հարություն տա-  
 լու միակ միջոցը: Նույն յերեկոյան խանում Սաղալն ու Ավո  
 բիձան իրենց համաձայնությունը տվին սեպտեմբեր 4-ին ամուս-  
 նանալու գաղթական տեր Հուսիկ քահանայի խաչով: Մանա-  
 վանդ, վոր Անթանոսյանը արձաթ դրեց Ավո բիձայի բռան մեջ:

Ահա այդ զույգն եր, վոր վաղ առավոտյան յեկել ու նստել եր  
 տափարակում, ամաչկոտ նայում եր, մերթ տեր Հուսիկին, մերթ  
 Անթանոսյանին: Ավո բիձան ուղեց աշխատել, բայց հախ ավե-  
 լորդ բահ չկար և ապա Անթանոսյանն արգիլեց.

-- Կգա, կնեղանա, կասի՝ ինչո՞ւ թողիր...

Յեվ Ավո բիձան փոշմանեց, վոր հենց առաջին որն իրեն  
 վայելուչ և ծանր չպահեց: Իսկ Սաղալ խանումը կամացուկ և

սիրով, պառաված աղջկա սիրով, վորի ամեն մի բջիջը հազար անգամ ե թրթռացել մայրությամբ և վորը վերջապես վոտքը դընոււմ ե չերազած դարպասի քարին, — նրան հանդիմանեց:

Քարակույտի գլխին կանգնած արձանը բահը բարձրացնելը բավական չհամարելով, բարձր բոռաց.

— Յեկան, չեկան...

Անթանոսյանը, վոր մինչ այդ տեր Հուսիկին պատմում եր, թե ինչպես Ալաշկերտի հովտում, մի գյուղում ինքը գտել ե չեկեղեցու ամբողջ սարք ու կարգը հորի մեջ թաղած, ինչպես ե հանել իրերը, — հանկարծ բանվորի կանչին ծլուկ չելավ ու կանչեց.

— Լարով, լարով...

Տեր Հուսիկն ել վեր կացավ, փեշերից փռչին թափ տվեց, գդակն ուղղեց:

Կառքերը մոտեցան: Առաջին իջնողը Հովնաթան Մարչն եր, վոր մոտ վազեց, տեսավ փորվածքը, սեղմեց Անթանոսյանի ձեռքը, կոացավ, տեր Հուսիկի աջը համբուրեց: Բարեկամական այդ քայլն Անթանոսյանի սրտից իսպառ չքացրեց տաղավարում լուսացրած գիշերը, չերբ Մարչը ծանր խոսքեր եր ասում...

— Ամեն ինչ պատրաստ կը տեսնեմ, պատվելի հյուրեր, — դարձավ Մարչը իր հետ չեկողներին:

— Ամենայն ինչ կատարյալ ե, — ասաց տեր Հուսիկը:

— Ահա մի գույգ տատրակ: — Անթանոսյանը ձեռքը մեկնեց Ավո բիձայի և Սազալ խանումի կողմը: Տատրակները վոտքի յեղան, խոնարհ գլուխ տվին: Ճիշտ ե, որիորդ Կատչան քրմժիծաղ տվավ, իսկ Գրիգոր Լեոնականն իսկույն նկատեց, վոր Ավո բիձան զինվորական ծառայության համար անպետք ե, սակայն Հովնաթան Մարչը անտես առնելով Կատչայի քմժիծաղը, մոտեցավ և սեղմեց չերկուսի ձեռքը:

Նախ քան հիմնադրման անցնելը Հովնաթան Մարչը մշուսների հետ հեռացավ տափարակը տեսնելու և հյուրերին ցույց տալու, թե վորտեղ պիտի լինի Նոր-Յեթովպիո գրոսավայրը, վոր կողմն են նայելու քաղաքի մայր դռները, բարձր աշտարակը, վորի գլխին ամեն գիշեր մեծ խարույկ պիտի վառվի:

Գրիգոր Լեոնականը շատ կարևոր նկատողություններ եր ասում քաղաքի պաշտպանության համար:

— Այս թմբերը չպիտի քանդել: Սրանք բնական մարտկոցներ են... Տների հարավ-արևմտյան պատերը մի քիչ ավելի հաստ պիտի անել, ամուր կրաշաղախից:

Բժիշկ Յերանոսը կլիման շատ առողջ գտավ:

— Վնչ թե քաղաք, այլ կուրորտ պիտի լինի Նոր-Յեթովպիան: Այս ողը, այս...

Բժիշկն ուզում էր ասել այս ջուրը, բայց շուրջը ցածաքտեսնելով, բառը թուքի հետ կուլ տվավ: Սակայն որիորդ կատյան հասկացավ և ջուր ուզեց.

— Յերանոս, ծարավ եմ...

Յեվ այդ այն ժամանակ, չերբ Մարչն ու Լեոնականը խոսում էին քաղաքի բնակիչներին հենց մանկութունից զենքի վարժեցնելու մասին, չերբ Մարչը, ողը գրկելով, ուզում էր ցույց տա, թե ապագա պարիսպներն ինչպես պիտի ողակեն Նոր-Յեթովպիան: Իսկ կատյան ծծկեր չերեխայի պես իր ասածն էր ուզում: Մարչը լսեց այդ:

— Դառնանք, կրավե, մանավանդ, վոր որիորդն ալ ջուր կուզե: Տարի մը հետո ձեր կեցած տեղը պիտի կարգադրեմ ջրի ծորակ կախել...

Դարձին Հովնաթան Մարչը բաժանվեց մյուսներից, մտեցավ ծանոթ քարին, շրջեց քարը և վերցրեց թղթի այն կտորը, վոր պահ էր տվել առաջին այցելության ժամանակ, չերբ վորպես նոր Պետրոս Մեծ մտքում դրեց տափարակի վրա կառուցելու սպիտակ շենքերով Նոր-Յեթովպիան:

Զարմանալի անակնկալ կամ ավելի ճիշտ հրաշք պատահեց, չերբ Հովնաթան Մարչը քլունգը վերցրեց մի քիչ փորելու քաղաքի հիմքը, վորից հետո մյուսները պիտի նույնը կատարեին և դարսած քարերի վրա արդեն պատրաստ կրաշաղախը լեցնեյին: Սպիտակ ձեռնոցները հագին, տոնական տարազով Մարչը, չերբ մի քանի անգամ քլունգով դարկեց և հող թափեց մաքուր սրբած կոշիկներին, քլունգը զնգաց, դիպավ մի կարծր բանի

Բանվորներից մեկը մտեցավ, քլունգն առավ: Յեվ ինչ... Հողի միջից դուրս հանեցին ժանգոտած, լայնբերան մի թուր, առանց պատյանի: Բոլորն ել միաբերան բացականչեցին, մեկը սի հ, մյուսը՝ վ ս հ, որիորդ կատյան՝ ս չ: Գրիգոր Լեոնականը թը-

ազ փոսի մեջ, մոտ վազեց և մի ըսպե զննելուց հետո, հայտարարեց.

— Հետևակ զինվորի թուր ե, չերևի տասերեքերորդ դարուց...

Բանվորներից նա, վոր հանել եր թուրը, իր կարծիքը հայտնեց այն մասին, թե յերևի չեղիդ շորանների փշացած թուրն ե, մոռացել են կամ դիտմամբ ծածկել են հողի տակ: Սակայն Լեոնականն այնպես նաչեց նրան, վոր մշակը բարվոք համարեց փորելը շարունակել:

Գտնված թուրը վերագարծին վոչ միայն նոր վեճի առարկա չեղավ Գետադարձի և Լեոնականի մեջ, վորից առաջինը պընդում եր, թե տասերեքերորդ դարում թրերը տափակ ծայրով եին,— այլ և ի մաստ տվավ, մի առանձին խորհրդավորութուն սեպտեմբեր 4-ի տոնին: Թե ի՞նչ չեղավ այդ թուրը, այնպես ել չիմացվեց, սակայն այդ որն ամենքն ել աշխատում եին գեթ մի պահ բռնել նրա կոթից: Իսկ ամենքից ավելի թուրը Մարչի ձեռքին եր, յերբ նա հիմնադրման ճառն եր ասում, Նոր-Յեթովպիո գովքը:

— Յեվ չերբ ծաղկի, աճի Նոր-Յեթովպիան, ապագա սերունդը ծաղկեփունջերով, դրոշներով, տավիղի ու ցնձղաչի նվագներով պիտի գա այս պատին ծունր դնելու և ըսելու, վոր այստեղ կանգնեցին մեր պապերը և հիմնեցին Նոր-Յեթովպիան...

Գրիգոր Լեոնականը խոսեց կարճ և ազդու.

— Նոր-Յեթովպիան այս թուրն ե: Թուրը գտնվեց գետնի տակ, ուր մնացել եր բազում դարեր: Ծնվում ե, վոտքի չե կանգնում, մի հին քաղաք: Կեցցե՛ Նոր-Յեթովպիան...

Գետադարձը փղձկաց: Միամիտ ծերունին ուզում եր այստեղ ել, չերբ արևը սառել եր դարմանքից և հանդիսատես եր, ուզում եր քաղվածքներ վերհիշել, ապացուցելու, վոր այս տափարակում չեղել ե այսինչ իշխանի հիմնած քաղաքը: Մի քանի բառ թոթովեց, փղձկաց:

Անթանոսյանը կրակոտ խոսեց: Նույնիսկ Ավո բիձան մի քանի քայլ արեց, մոտեցավ: Յեվ յերբ նա աչքն առանց հեռացնելու Անթանոսյանի բերանից, նաչում եր, ասես ուզում եր տեսնել, թե ի՞նչպես են բառերը թռնում նրա բերանից,— չերբ Ավո բիձան նայում եր այդպես, որիորդ կատչան նրա շորերից չեկող

կծծահոտից քիթը բռնեց, մի քիչ հեռացավ: Իսկ Անթանոսյանը խոսում էր, գլուխը վեր բռնած, շարքի մեջ կանգնած գինվորի պես, պատվի առնելու պատրաստ: Գիտե՞ր նա, վոր վերջին անգամն է ճառում, գիտե՞ր նա, վոր ել յերբեք արևն ակնապիշ չի լսելու նրա ճառը:

Ամենից սրտառուչը շնի թաղելն էր: Մարչը թղթի կտորը (այն, վոր հանեց քարի տակից) ձգեց շնի մեջ և շիշը վեր բարձրացնելով, վորպես սկիհ, մի քանի խոսք ևս ասաց և շիշը թաղեց հողում: Ի՞նչ էր գրած թղթի վրա: Յեվ վոչ վոք, վոչ վոք չիմացավ, իրեն՝ Հովնաթան Մարչից բացի: Մի մարդ է մեռնում, շատ մտերիմ մարդ, ուղում է խոսել, վերջին մտքերը հայտնել, լեզուն չի դառնում, մտքերը մնում են գանգի խոռոչում հավիտյան փակված: Այդպես ել չեղավ շնի մեջ պահած թուղթը:

Հիմնադրումը վերջացավ: Բանվորները նվեր ստացան մի քանի արծաթ: Նրանցից մեկը փորձեց ասելու (այդ նա յեր, վոր քարի գլխին արձան էր), վոր քիչ է վճարում, բայց Անթանոսյանը վրա պրծավ, մշակը լռեց:

Տեր Հուսիկը կատարեց չերկու տատրակի, զույգ չեթովպացիների, նոր Յեթովպիո անդրանիկ բնակիչների, խանում Խաղալի և Ավո բիձայի պսակի հանդեսը: Ինչպե՞ս էին կոացել, իսկ տեր Հուսիկը կարդում էր ավետարանը, նրանց գլուխներն իրար մոտեցնում, մերթ հեռացնում: Հալվում էր, շաքարի պես հալվում էր խանում Խաղալը, չերը ուսը դիպչում էր Ավո բիձայի ուսին:

Յեվ հենց պսակադրության ժամին, չերը նրանք գլուխները մոտեցրել էին իրար, յերը Ավո բիձան աշխատում էր շշարժվել, վոր շտեսնեն կաղ վոտքը, — հենց այդ ժամին Հովնաթան Մարչը մի բուռ արծաթ ու պղնձե դրամ թափեց նրանց գլխին: Իսկ Պետրոս Գետադարձը հուզմունքից բացազանչեց.

— Տեղ վոսկի տեղայր ի փեսայության Արտաշիսի,

— Տեղայր մարգարիտ ի հարսնության Սաթինկան...

Հովնաթան Մարչը աչքը չեր հեռացնում ամուսնացող զույգից: Նրանց մասին էր մտածում, թե՞ աչքի առաջ ուրիշ զույգ էր, մեկ, յերկու, տասը զույգ, վորոնք գալիս էին, խոնարհվում, ինչպես այս զույգը և ներս մտնում նոր-Յեթովպիո մայր դռներից: Ժպտաց, Հովնաթան Մարչը ժպտաց: Ահա մի զույգ էլ, վոսկեզանգուր խոպոպիկներով կինը և ինքը: Հետո ժպտան ան-

ցավ, խեղճացավ դեմքը: Ինչո՞ւ մի ուրիշը յեկավ, հրեց իրեն ու տեղը գրավեց:

Վերադարձին կառքերն ավելի դանդաղ եին գնում, վորովհետև բեռը ծանր էր: Ավելացել էին տեր Հուսիկն ու Անթանոսյանը:

Ամենից ուշ, հեռացան դեպի մոտակա գյուղը, դեպի գոմի թառը, յերկու չերջանիկ չեթովպացի՝ խանում Խաղալն ու Ալոբիձան...

Տարվա տասներկու ամիսը հաճախ հիշեցնում են ժամացույց, վորի սլաքն անընդհատ մի թվից մյուսն է անցնում, անվերջ պտույտ անում: Հունվար՝ մեկ, փետրվար՝ յերկու և դեկտեմբերին խփում է տասներկու չերորդ ժամը: Այդպես անցան ամիսներ և սլաքը յերբեք կանգ չառավ:

Ո՞ւր մնացին նրանք, ի՞նչ պատահեց պաշտոն աշն որից հետո, յերբ Հովնաթան Մարչը հիմք դրեց Նոր-Յեթովպիային ու հիմքը փորելիս դուրս յեկավ լայներախ թուրը: Ծանր, շատ ծանրը դեպքեր չեղան այն որից հետո և այնքան քիչ հիշողութուն մնաց, վերջն այնպես վողբերգական յեղավ:

Ընթերցող, հիշում չես այն կածանները, վորոնց հասան Մարչըն ու Անթանոսյանը չեղեզնուտն անցնելուց հետո: Բաժանվում էին իրարից կածանները, ամեն մեկը մի ուղղությամբ եր գնում, մեկն անհետ կորչում եր, հալվելով տափարակում, մյուսը՝ խառնըվում եր մի լայն ճանապարհի, յերրորդը՝ կախվում խորխորատի վրա:

Այդպես ել նրանց հետ պատահեց, յերանելի այն հոգիների հետ, վորոնք վոտքի եին ուղում կանգնեցնել մեռած մի քաղաք և քաղաքը լեցնել յեթովպական ու փղշտական ազնվարյուն ցեղով:

Դժվար է գրել վախճանի մասին: Տեղեկութունները կցկրտուր են, շատերը ստուգման կարոտ: Աշխարհի յերեսին չկան Նոր-Յեթովպիան: Այդ առասպել եր և այն ուղեղը, վորը հղացավ այդ ցնորքը, մնաց, վորպեսզի զգա վոչ միայն մեռած քաղաքի, այլ և... կորցրած սիրո, Նոր Յեթովպիո հիմնադրման պատճառով կորցրած սիրո կսկիծը:

Տեղեկութունները կցկտուր են: Ի՞նչ կարող յե ասել հյուրանոցի սպասավորը, թե ինչո՞ւ սեպտեմբեր ամսվա ընթացքում

շատ քիչ անգամ եր սենյակից դուրս գալիս Հովնաթան Մարչը, անվերջ հարցնում եր ինչ վոր նամակի մասին, վոր պիտի գար ու չեր գալիս: Յերբեմն չերևում եր Անթանոսյանը, նիհար, դեղնած չերեսով, մազերը՝ կեղտոտ, մազերը գլխին բիզ-բիզ, ստվերի նման եր անցնում պատի տակով, չերկուսով փակվում եին սենյակում և խոսում, անվերջ խոսում:

Մի որ ել Հովնաթան Մարչը հաշիվ ուղեց: Յերբ իրերը դարսել եին կառքի մեջ, Անթանոսյան Հմայակը տատանվեց մի պահ՝ նստի՞ թե՞ վոչ: Այդ որը զարմանալի ուրախ եր Հովնաթան Մարչը:

— Նոր տարուն հոս եմ: Հետս կը բերեմ ինժինեորներ, տեխնիքներ և բոլոր շինափայտը... Աղվոր քաղաք պիտի ըլլա Նոր-Յիթովպիան:

Սրտառուչ չեղավ հրաժեշտը: Նույնիսկ բժիշկ Յերանոսն արտասովեց, յերբ Հովնաթան Մարչը մեկնեց իր ձեռքը: Յեվ փոխանակ մեկնած ձեռքն ընդունելու, բժիշկ Յերանոսը շրթունքները մոտեցրեց, ու նրանք համբուրվեցին: Պետրոս Գետադարձը դռան մոտ կանգնած հեկեկում եր:

— Վերադարձիդ կապասենք:

— Անհոգ չեղեք: Յերեք ամսեն նորեն հոս եմ:

Գրիգոր Լեոնականն ամենայն սառնասրտությամբ վերջին բարեր տվավ և Հովնաթան Մարչից խնդրեց վերադարձին հետը բերելու Յեյսի ընտիր հեռադիտակ: Բացի այդ, Գրիգոր Լեոնականը նրան ծովափնյա մի քաղաքում ապրող իր ծանոթի հասցեն տվեց:

Իսկ Անթանոսյանը լուռ ու մունջ եր: Յեվ այն վայրկյանին, յերբ նա տատանվում եր նստի՞ կառքը, թե՞ վոչ, Մարչը նրան գրկեց: Յերկու անձնվեր բարեկամներ ջերմ, շատ ջերմ համբուրվեցին: Յեվ յերբ կառքը շարժվեց դեպի կայարան, բոլորն ել տեսան, թե ինչպես Անթանոսյանը կառքի հետևից վոտով գնաց: Նրանք նորից հանդիպեցին կայարանում, Մարչը տեսավ, թե ինչպես փոշի կուլ տալով կառքի հետևից վազում եր Անթանոսյանը, — ստույգ խոսք դժվար ե ասել:

Կարելի չեր և այստեղ վերջացնել պատմությունը, վերջին համբուրը համարելով նրանց գործի վախճանը, չեթե դեպքերն ուրիշ ընթացք չստանային:

Ամիսներ անցան: Զմեռն չեկավ, ձյուն բերեց, բուք ու

սառնամանիք, և վոչ մի լուր Հովնաթան Մարչից, վոչ մի նամակ: Հաջի Սարաբ գյուղից Անթանոսյանը չերբեմն քաղաք եր գալիս, փողոցում պատահում բժիշկ Յերանոսին կամ Գետադարձին և պատահելիս հարցնում, թե ի՞նչ գիտեն:

Մի որ ել բժիշկ Յերանոսը գայրացավ և ծանր, անպատվաբեր խոսք ասաց Անթանոսյանի յերեսին: Հմայակը նրան մոտեցել եր այն ժամանակ, յերբ բժիշկը մի կնոջ հետ անցնում եր փողոցով: Անթանոսյանը խելագարի տպավորություն եր թողել կնոջ վրա, կինը վախեցել, մի քիչ հետ եր քաշվել:

Գրիգոր Լեոնականից նա տեղեկացավ, վոր Մարչը Արխազիայում թե Աջարիայում գնել և գորգեր, բարձել նախ ու ճանապարհվել: Յեթե այս լուրն ստույգ համարենք (իսկ Լեոնականը կարգաց ծովափնյա քաղաքում ապրող իր հին ընկերոջ նամակն այդ մասին), — ուրեմն կարող ենք ասել, վոր Անթանոսյանի համար վախճանը վոչ թե վերջին համբույրն չեղավ, այլ գորգեր գնելու լուրը: Մնացածը Անթանոսյանը չերբեք չիմացավ:

Ի՞նչ եր այդ մնացածը: Մի լուր Փղշտական ծիծեռնակ թերթում և մի հայտարարություն, լուրը տպվելուց մի ամիս հետո, գետեղված Յեթովպական մամուլ թերթում:

Լուրը (Փղշտակ. ծիծեռնակ, № 113, 3-րդ չերես). —

— Դեկտեմբեր 8-ին Մարինե Քրաջյան և մեծահարգո Անդրեաս Բալիքյան ամուսնացյալք: Մեր խնդակցությունները հայրենակից զույգին:

Մարինե Քրաջյան, վոսկեզանգուր խոպոպիկներով կին, վորի նամակը հիշում եք: Մարինե Քրաջյան, վոր թե եր տալիս նրան և վորի մասին ամենից շատ մտածեց Հովնաթան Մարչը սեպտեմբեր 4-ին: Զույգեր, մեկ, յերկու, տասը յեթովպական տատրակներ:

Այժմ վարագույրը բաց և դեպքերը կարծեք շարակցում են իրար: Հասկանալի չե դառնում, թե ինչու այն յերեկոյան լալիս եր Հովնաթան Մարչը, չերբ սպասավորը, մաքուր սրբած կոշիկները ձեռքին, ներս մտավ և մտքում ասաց.

— Կնիկը մեռել է...

Իսկ մենք նրան տկարամիտ վո՞մն եինք համարում:

Բուենոս-Այրեսում կա մի ճաշարան, վորի ցուցանակի վրա խոշոր տառերով գրված է.

ԿՌՈՒՆԿ ՈՒՍՏԻ՞ ԿՈՒԳԱՍ...

Գուցե ուրիշ առավելություններ ունի այդ ճաշարանը, որինսակ՝ համեղ խորտիքներ, չեթովպական հարիշտա, խոհարարը հայրենիքեն կանչված է, կամ ժամադրավարըն է չեթովպացիներու և փղշտացիներու, ինչպես ասված է Յեթովպական մամուլ թերթում տպած հայտարարության մեջ, սակայն այդ ճաշարանի ամենից կարևորը և մեր պատմության հետ անմիջապես կապ ունեցողը այն բարեկամական հավաքույթներն են, վոր տեղի յեն ունենում ամեն կիրակի:

Հավաքվում են մի առանձին սենյակ, խմում են աբսենտ, չերգում են յերգեր ու կես գիշերին հյուրերից մեկը վեր է կենում, չերկյուղածությամբ մոտենում փոքրիկ պահարանին, հանում այնտեղից

— Արաքսի ջուրը և Նոր-Յեթովպիո հողը...

Հաստատապես պնդողներ կան, վոր այդ մեկը վոչ այլ վոք է, յեթե վոչ Հովնաթան Մարչը, նույն ինքը Նոր-Յեթովպիո հիմնադիրը: Աբսենտից թուլանում է միտքը, պղտորվում են աչքերը, հիշողությունը տարուբեր է լինում և վորպես կինոյի կտրրտված ժապավեն, դեպքերը հաջորդում են իրար, հաճախ անկապ ու անիմաստ: Թվում է թե փաշլում է հողը, լույս է յելնում և խոսում չեթովպական բարբառով: Մեքենան դառնում է, ժապավենը պտույտ է տալիս և հիշողության վրա, վորպես եկրանի քաթան, անցած տարիները նետում են ցաք ու ցրիվ նկարներ:

Ահա կածանը, վոր գնալով բարակեց, անհետացավ տափարակում:

Հյուրերը ցրվում են, մնում է Հովնաթան Մարչը, գլուխը մի կողմի վրա թեքած: Նայում է փողոցին, լուսավոր փողոցում վոչինչ չի տեսնում՝ վոչ տներ, վոչ լապտերներ, վոչ շքեղ ցուցափեղկեր: Դիմացի լապտերը խնդում է, լույս է ցոլում ցուցա-

նակի գրերի վրա և ցուցանակի գրերն աղմկահուլզ այդ քաղաքում ասես իրար հարցնում են.

— Կուռնկ, ուստի՞ կուգաս...

Ո՞ւր մնաց Նոր-Յեթովպիան, այն տափարակը, վոր ուշաթափ ընկած մարդու պես, ջրի կարիք ուներ՝ վոտքի կանգնելու: Ո՞ւր մնաց Անթանոսյան Հմայակը: Ընթերցող, չեթե առաջին հարցին հեշտ ե պատասխանել, յերկրորդ հարցի մասին մութ են, շատ մութ և իրար հակասող Հաջի Սարաբ գյուղի բնակիչների պատմածները և քաղաքային հիվանդանոցի հերթապահ քրոջ հիշողությունները:

Քրեյական հետախուզման բաժնի ներկայացուցիչն իզուր եր հարցաքննում Հաջի Սարաբ գյուղի բնակիչներին:

— Վարժապետին չորս որ եր չեինք տեսել...

— Հիվանդ եր, տնքում եր, իրան-իրան խոսում...

— Գնացի մտը, ասացի՞ զարիբ մարդ ե, ոգնական չունի: Հարցրի՞ վարժապետ, վորտեղդ ե ցավում. ձեռքը սրտին տարավ: Աչքերն ել մի տեսակ շողված եին, կասես՝ գժված լիներ: Բայց խոսելը լավ եր, հասկացնում եր:

— Իսկ վերարկուն ռվ ե պտել, — հարցրեց քննիչը, արձանագրելով բոլոր ցուցմունքները:

— Անտոնի տղան: Գոմեշներն ընկել եին շամբուտը, գընում ե հանի, տեսնում ե վարժապետի վերարկուն: Ամենքս ել իմացանք...

Յերկու ամիս գործը այդպես ել թերի մնաց: Անթանոսյանը չկար և վորովհետև վոչ վոք հարցմունք չեր անում, չեր հետաքրքրվում, հետախուզական բաժնումն ել թղթերը մնացին մի ամիս ընթացքի մեջ, հետո գործավարը կցեց զանազան գործին, շարտեց պահարանի մի անկյունը:

Քաղաքային հիվանդանոցի հերթապահ քույրն ել մինչև հիմա դժվար ե կարողանում վորոշել, թե ինչո՞ւ իր հիվանդը, այն հիվանդը, վոր յերկար ու բարակ վիզ ուներ և վորի մասին բժիշկը հայտնել եր, թե արևադարձային ջերմախտ ունի, — վեր եր կենում անկողնից, և յեթե դահլիճում քույրը չեր լինում, տաքությունից այրվող ճակատը հպում եր պատուհանի ապակուն և նայում հեռուն:

Ու քույրը միշտ զոռով եր նրան հետ բերում, պառկեցնում

անկողնում: Հիվանդը դառանցում էր, ինչ վոր մարդկանց էր կանչում:

Մի որ էլ, հերթը փոխվելուց հետո, նույն մահճակալի վրա հերթապահ քույրը ուրիշ հիվանդի տեսավ:

— Են մեռավ, — ասաց քույրը, քնատ աչքերը տրորելով, հանդերձը հանեց և բանալիները հանձնեց նոր հերթապահին:

Այսպես էլ մոռացվեց, չքացավ: Ու մի կաժան էլ հասավ, կախվեց խորխորատի վրա, վորպես անլուծելի հանելուկ:

Կա մի փոքրիկ սենյակ բժ Ֆ ա կ ի շենքում: Պատերի մոտ պահարաններ են, վորոնց դարակների վրա շարված են մեծ ու փոքր անոթներ, բոլորն էլ պինդ փակած: Անոթների մեջ գանազան մարդկանց, անտերունչ մեռած մարդկանց մարմնի մասերն են, սպիտակ հեղուկի մեջ: Ահա մի ուղեղ, ծալվեծալ ծալքերով: Նստել է անոթի հատակին տարիներ և դեռ շատ տարիներ էլ այդպես կմնա, վորովհետև անոթը ամուր է փակած: Ուղեղը մի բանով աչքի չէ ընկել, մի կարմիր բիծ կա, կամ ծալքերն են ծուռ:

Մոտենում են տղաներ և աղջիկներ, նստոտում են աթոռներին, դասախոսը պատմում է ուղեղի կազմության մասին, ցույց է տալիս, թե ինչո՞ւ այս ուռուցքը կա, ինչո՞ւ ծալքերը ծուռ են: Ունկնդիրները գրում են ու նայում անոթի հատակին ընկած ուղեղին: Վոչ վոք հարց չի տալիս, թե ո՞ւմ գանգի մեջ էր ուղեղը: Յեվ յեթե մեկն ու մեկը կարդում է անոթին փակցրած թուղթը, այդ էլ հենց այնպես, ի միջի այլոց...

Ընթերցող, կա այդպիսի մի պահարան, ուր անոթների մեջ սրտեր են, մարդկանց սրտեր, մեծ ու փոքր, կարմիր, ճարպոտ ու անճարպ: Յեվ այդ բազմաթիվ անոթների մեջ կա մեկը, վորի հատակին ընկած է մի սիրտ: Անոթին փակցրած է այսպիսի մի թուղթ.

ԱԶԳ.—ԱՆԹԱՆՈՍՅԱՆ  
ԱՆ.—ՀՄԱՅԱԿ  
Cor Cordis  
Causa. Vitium cordis  
ՔԱՂ. ՇԻՎԱՆԴԱՆՈՑ

Բժ Ֆ ա կ ի կատյան, ի հարկե, տեսավ այդ անոթը, աչքերը մի վայրկյան կկոցեց, միտքը լարեց.

— Անթանոսյան... Ծանոթ ազգանուն է...

Յեւ չյիշեց, կատյան ել մոռացավ նրան, վոր սեպտեմբեր 4-ին, չերկու քաչլի վրա կանգնած, յերանության չերջանիկ ժամեր եր ապրում:

Իսկ ուր է նոր-Յեթովպիան:

Չարմանալի դեպքեր կատարվեցին, չերբ տարին, վորպես ժամացույցի սլաք, չերկու շրջան արեց և նորից հասավ իննեքորդ ամսին:

Հիշում էք, մարդիկ կային տափարակում այն առավոտ, չերբ Հաջի Սարաբ գյուղից մեկը Անթանոսյանին ասաց, թե

— Վարժապետ, հողերդ...

Մինչև ժամանակը չերկու շրջան արեց, չեկան չափեցին և բարակ առուններով ջուրը հասավ տափարակին: Հետո հավաքվեցին մշեցիք, սուրմալվեցիք, կաղզվանցիք ու խնուսցիք, թափվեցին ամեն կողմից, հարյուրավոր ձեռքեր կոացան տափարակի վրա, քարերը ջուկեցին, փոքրիկ հողաշեն խրճիթներ շինեցին, խրճիթների մոտ՝ հավաքներ, այժ ու վոչխար բերեցին և խոպան դաշտի վրա, առվի չեզերքին տնկեցին ծառեր: Մըջուեններ եին, փորեցին, սարքեցին և գյուղը կոչվեց նորապատ:

№ 9-րդ հողամասի տերը շատ ուրախացավ, չերբ իր տան հիմքի մի մասը փորված տեսավ: Բայց վորովհետև հիմքը շատ եր չերկար, ավելի լավ համարեց փորվածքի մի մասը դարձնել պետքարան: Իջավ քարերը հանելու և քլունգի տակ Չարդվեց այն շիշը, վորի մեջ Հովնաթան Մարշը դրել եր իր սիրտը, գրել՝ սըրտի խոսքեր: Հողամասի տերը շի փշրանքների վրա ուշք ել չդարձրեց: Միևնույն է, նրանք պիտի մնային պետքարանում:

Ավո բիձա և Սազալ խանում. . նորապատի վաթսուն ծխից մեկը, ծուխ չերեք շնչից: Ավո բիձան իր այժերի առաջ խոտ եր լցնում և շոյում հորթուկի մեջքը, վոր պիտի մեծանար ու կով դառնար: Սազալ խանումի գրկին կարմրաթուշ մանուկն եր, ծխի չերրորդ շունչը: Մի կածան ել միացել եր լայն ճանապարհին:

Հիշում ես, Հովնաթան Մարշ... Չարմանում եիր և հարցընում, թե ինչպես է, վոր չորացած, տգեղ ու կեղտոտ մոր արգանդում սնունդ է առնում և ծնվում վոսկեզանգուր մի մանուկ...

— □ □ —





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220027060

A <sup>ii</sup>  
27060